

*Սոյն գիրքը կը հրատարակուի ազնիւ  
մեկենասութեամբ՝*

*Տիկին ՍԻՊԻԼ ԱՅՐԱՀԱՄԵԱՆԻ*

*«Օրհնաբանէ Տէրը, ով իմ անձս,  
Եւ մի՛ մոռնար անոր բոլոր բարիքները»:*

*(Սաղմոս 103.2)*



Արեւմտեան թեմի անդրանիկ Առաջնորդ  
Գարեգին Եպս. Խաչատուրեանի  
ժողովածուի հրատարակումը  
նուիրուած է  
Թեմի հիմնադրման 95-ամեակին

ԱՄՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ  
«ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐ – Ե

**ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ.  
ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ**



**Հ Ո Վ Ի Ի Ի  
Խ Օ Ս Թ Ե Ր**

Լոս Անջելոս – 2021

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՒՒՆ

|  |    |
|--|----|
| «Հաւատքը մեր կեանքի ուժն է. Յովնան Արք.<br>Տէրտէրեանի խօսքը      | 6  |
| ՄԵԾ ՊԱՀՔ   | 9  |
| Ա. Կիրակէ Բուն Բարեկենդանի. Մուտք Մեծի<br>պահոց                  | 10 |
| Բ. Կիրակէ Աղուիացից կամ Արտաքսման                                | 14 |
| Գ. Կիրակէ Քառասնորդաց. «Անառակը»                                 | 18 |
| Դ. Կիրակէ Քառասնորդաց. «Տնտեսը»՝ անհաւա-<br>տարիմն ու հաւատարիմը | 22 |
| Ե. Կիրակէ Քառասնորդաց. «Դատաւորը»                                | 27 |
| Չ. Կիրակէ Քառասնորդաց. «Գալստեան»                                | 32 |
| Է. Կիրակէ. «Ծաղկազարդ»   | 35 |
| Ը. Աւագ Հինգշաբթի. Վերջին Ընթրիք                                 | 40 |
| Թ. Աւագ Ուրբաթ. Չարչարանք եւ Խաչելութիւն                         | 45 |
| Ժ. Աւագ Շաբաթ. «Թաղում»  | 46 |
| ԺԱ. Չատիկ  | 48 |
| ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ  | 55 |
| Հայ տուն   | 57 |
| Հայ ծնոդք  | 60 |
| Հայ կիներ եւ մայրը   | 63 |
| Հայ ուսուցիչներ  | 78 |

|  |     |
|--|-----|
| Հայ ժողովուրդ                                | 80  |
| Հովիւներ                                     | 95  |
| ՀՈԳԵԻՈՐ ՇՈՂԱԿԱԹՈՒՄՆԵՐ                        | 103 |
| Քահանայութեան կարգը                          | 105 |
| Եկեղեցական պատուանշանները եւ անոնց<br>արժէքը | 115 |
| Պահք եւ աղօթք                                | 120 |
| Ներողամտութեան դասը                          | 136 |
| Հոգի եւ միտք                                 | 142 |
| Սէրը եւ խաչը                                 | 146 |
| Համառօտ կենսագրական                          | 152 |
| Ցանկ Գարեգին Եպս. երկերի                     | 154 |
| Ծանօթագրութիւններ                            | 157 |
| «Ոսկեղենիկ» մատենաշարով տպագրուած<br>գրքեր   | 158 |

**«ՀԱԽԱՏՔԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԻ ՈՒՓՆ Է»**  
**Գարեգին Տրապիգոնցի**

20-րդ դարու Հայց. Առաքելական եկեղեցւոյ լուսաշող դէմքերու շարքին է անկասկած հոգելոյս Գարեգին Արք. Խաչատուրեանը, որուն հոգեշունչ պատգամներուն մէջ է ամփոփուած Աստուածասիրութեան շունչն ու եկեղեցասիրութեան եւ առաքելականութեան զգացողութիւնը: Խորին ակնածանօք կը համարձակիմ սրտիս ծալքերուն մէջ տեղ գտած զգացումներս թուղթին յանձնելու, որպէս խոնարհումս մեծ հոգեւորականին հանդէպ:

Սոյն աշխատութիւնը իր գրչի արգասիքէն ծնունդ առած պատգամներու համեստ հաւաքածոյ մըն է, զորս պարտք համարեցինք հրապարակել Արեւմտեան թեմի 95-ամեակին առիթով: Գրքի առաջին հատուածին մէջ ներկայացուած են հոգիները շարժող Մեծ Պահքին նուիրուած քարոզները: Երկրորդ հատուածին մէջ ամփոփուած են իր անդրանիկ պատգամին ճառագայթումները՝ նուիրուած թեմը ներկայացնող միաւորներուն. հայ տուն, հայ ծնողք, հայ կիներ եւ մայրը, հայ ուսուցիչներ, հայ ժողովուրդ եւ հովիւները: Իսկ երրորդ հատուածի նիւթերը, «Հոգեւոր շողարձակումներ» վերնագրով, յստակօրէն կը բարձրաձայնեն իր հոգեմտաւոր կեանքին փիլիսոփայութիւնը. քահանայական կարգը, եկեղեցական պատուանշանները, Պահք եւ աղօթք, ներողամտութիւն, հոգի եւ միտք, սէրը եւ խաչը:

Ներածական այս խօսքի մէջ ընթերցողին կը ներկայացնենք միայն մի քանի քաղուածքներ՝ յուսալով, որ ընթերցողը անձնապէս պիտի ըմբոշխնէ մեծ հոգեւորականին ապրումները, որպէս հաւատամբը իր կեանքին:

Հոգելոյս Պատրիարքը, երբ կը խօսի Տնտեսի առակին մասին, ընդգծուած կը ներկայացնէ իր մեկնաբանութիւնը ծառայութեան մասին. «Ծառայել Աստուծոյ արդարութեամբ եւ արդարութեան համար, իմաստութեամբ եւ ուղղամտութեամբ, այս է անխախտ սկզբունքն այն տնտեսութեան՝ որ կը վերաբերի մեր անձնատր տան, մեր ֆիզիքական եւ հոգեկան շինուածքին»: Իսկ երբ իր խօսքը կ'ուղղէ ժողովուրդին, հետեւեալ խորհրդածութիւնը կը կատարէ. «Աստուծոյ նշմարիտ տունը այն բարոյական մթնոլորտն է՝ որ հոգին կը գտնէ իր ինքնութեան լման ճանաչումը, շնորհիւ նշմարտութեան այն լոյսին՝ որ Աւետարանէն կը ճառագայթէ, աւելի ճիշտ՝ որ Քրիստոսի երկրաւոր կամ մարդկային փորձառութիւններէն, ապրած կեանքէն կ'արտափայլի»:

Երբ կը խօսի բարիին եւ չարին մասին, ան կը գրէ հետեւեալը. «Պայքար մը կայ մեր մէջ, մեր իսկ ձեռքով ստեղծուած: Բարիին եւ Չարին գօտեմարտութիւնն է այդ: Բարիին համար ճակատագրուած, պարտինք սպառազինուիլ այն բոլոր ոյժերով՝ որոնք տրուած են մեզի Գերագոյն բարիէն»:

Խաչատուրեան Պատրիարքի ներկայ հաւաքածոյին մէջ տեղ գտած բոլոր պատգամները իրենց բովանդակութեամբ հիւթեղ են: Երբ ան կը խօսի աղօթքի մասին,

կը ներկայացնէ հետեւեալ հաստատումը. «Աղօթքը: Ի՞նչպէս ըմբռնած ենք զայն: Մտէ՛ք եկեղեցիներէն ներս, բայց մանաւանդ մտէ՛ք ձեր անձնական «տանար»ներէն ներս: Դիտեցէ՛ք, Աւետարանի լոյսով, ինչ որ կ'անցնի ու կը դառնայ հոն: Ուշադրութեամբ անդրադարձէ՛ք, թէ ի՞նչ կ'աղօթէ՛ք, ի՞նչպէս կ'աղօթէ՛ք եւ ի՞նչու կ'աղօթէ՛ք, ե՛րբ եւ ո՞րու համար կ'աղօթէ՛ք: Կը լսէ՞ ձեզի Այն՝ որուն կ'աղօթէ՛ք»:

*Սոյն ներածական խօսքը կ'աւարտենք կեանքին նուիրուած իր սահմանումովը. «Կեանքին նպատակը կեանքն է: Իրատում ունի իմաստունը երբ կ'ըսէ.- «Աստուած ստեղծեց մարդը անմահութեան համար»: Եւ անմահութիւն կը նշանակէ կեանքը կեանքին համար»:*

*«Ոսկեղենիկ» մատենաշարի Ե. գրքոյկով ջերմ փափագն ունեցանք պանծացնել յիշատակը՝ հոգիով հզօր Պատրիարքին: Հայ եկեղեցւոյ պատմութեան երկնակամարին վրայ որոշապէս գրուած է բարի անունը Խաչատուրեան Պատրիարքին՝ մեզի ծանօթ Գարեգին Տրապիզոնցի անունով:*

*Սիրելի՛ ընթերցող, կը կամենա՞ս պայծառակերպել հոգիդ ու միտքդ աստուածային լոյսով: Ուրեմն կարգա՛ կենսատու խօսքերը Գարեգին Խաչատուրեանին:*

**Յովնան Արք. Տէրտէրեան**

**24 Նոյեմբերի, 2021**





ሆ ፔ ፊ

ባ ህ ረ ቀ

## Ա. Կիրակէ Բուն Բարեկենդանի. Մուտք Մեծի Պահոց

Մուտք ուրախութեամբ եւ ցնծութեամբ: Պահք արթնութեամբ եւ զգուշութեամբ:

Վերյիշունը կամ վերակոչունը անցեալին. պիտի ըսէինք այսօր՝ ոգեկոչունը: Ո՛վ չ'ունենար զայն: Տխուր կամ զուարթ՝ ան կը լեցնէ սիրտը դառնութեամբ կամ քաղցրութեամբ: Երբեմն ալ երկուքով միանգամայն: Ինչ որ հեռացած է մեզմէ անդարձօրէն՝ ունի այս զարմանալի դառնանուշութիւնը: Հոգին, անբացատրելի եւ բացատրելի նոյն ատեն, կեանքի հաստատիպ իրականութիւններուն մէջէն, կ'ըղծայ այդ բաժակին՝ խառն լեղիով ու մեղրով:

Կայ «Կորուսեալ դրախտը», կայ եւ «Խոստացեալ դրախտը», որ *կը հետապնդուի*: Կորսուած իրականութիւնը Աստուածաշունչին, արուեստին վրձինովը գեղերփնուած ու նկարուած եւ քերթողին գրիչովը երկնուած ու բանահիւսուած: Վերջինը Տեսիլն է «կոյր» աչքին՝ լոյսովը վառ երեւակայութեան: Դրախտը աստուածատունկ եւ դրախտը մարդակերտ: Երեւակայութիւնը՝ որ *կ'արարչագործէ* երեւակայութիւնը, այսինքն՝ «ներքին աչքը»՝ որ Գիրքէն կ'առնէ իր ներշնչունը, ինչպէս Գիրքը՝ Աստուծմէ: Մեծ եւ անտեսանելի Իրականութենէն:

Կայ *հաւատքը ստեղծագործութեան*: Կայ եւ *տարակոյսը գիտութեան*: Պիտի կրնա՛յ, այս վերջինը, իր թարթափումներու ճրագով, բանալ բարդ բարդ ծալքերը այդ հրաշակերտութեան խորհուրդին, հասնելու համար հեռահայեաց եւ անհորիզոն Հաւատքին: Գուցէ այո, գուցէ ոչ: Վերջինը աւելի հաւանական: Թէեւ գիտենք, սաղմոսերգուին հետ, թէ «*Օր աւուր քիւէ զքան եւ գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն*»: Գիտէ նաեւ մեր Հաւատքը, թէ «*Երկինք պատմեն զփառս Աստուծոյ*»:

Թեւաթափ չըլլար երբեք Հաւատքը, հոգիին հետ կապուած՝ զայն ներշնչող Աստուծոյ տեսութեամբ, խորութեան մէջ սիրտին: Չի կասեցներ Գիտութիւնն ալ թեւաբախումը միտքին, գտնելու համար աւելին լոյսին՝ նիւթի դժուարալոյծ թնճուկին մէջէն, յայտնաբերումովը անոր անսպառ ներգործոյթներուն, - *Էնէրժի*: Թեւ ունին, արդարեւ, երկուքն ալ, Հաւատքն ու Գիտութիւնը, աստուածային՝ անշուշտ: Ունին մէկն ու միւրը, *աստուածածանօթութիւն*. առաջինին լուսարձակը աւելի հեռահաս քան վերջինինը: Վասնզի մինչ հաւատքը *կը տեսնէ* անտեսանելին *ներհայեցութեամբ*, Գիտութիւնը կը շօշափէ փորձարկութեամբ եւ *կը փնտռէ* անտեսանելին տեսանելիին մէջէն:

*Հոգի* եւ *Նիւթ*: մահէն զատ ո՛վ կարող է բաժնել զանոնք իրարմէ: Եւ մենք կը փարիսք *անեղծ հոգիին*, Հաւատքին թեւապարփակումով, քակտելի տաղաւարին մէջէն: Կը հաւատանք անոր անմահութեան: Յարակարծիք մը չէ ան մեր հաւատքին գիտութեան հա-

մար: Զի Հաւատքը անհաշտ է *ռչինչին* հետ. ոչ այն «ՈՉԻՆՉ»ին, սակայն, որմէ ՄԵԾ ԻՆՉԸ, ՄԵԾ ԵԶԲԸ – ՏԻԵԶԵԲԸ – կամ ԱՆԵԶԲԸ լոյսի եւ կեանքի կոչուեցաւ Մեծ ճարտարապետի ամենաստեղծ շունչի զօրութեամբ:

Կորսուած թէ երագուած՝ դրախտն ունի աստուածատեսութիւն: Ասկէ բխած լոյսի ճառագայթը *կը տպաւորուի* դրախտի ընտանիքին մէջ: Եւ *ճաշակումը* կայ հոն «աղինական պտուղ»ին, եւ *մերկութիւնը* ծածկող *պճնագարդումը* «առաջին պատմունճան»ին: Շնորհալիի շողակաթ շունչով շարահիւսուած շարականին մէջէն:

Այսպէս պիտի սկսին քառասուն օրերը *մոխրոց* եւ *Մեծ-Պահոց*: Կեանքին քաղցրութիւնն ու դառնութիւնը: Կը համտեսենք զանոնք այս դրախտ-աշխարհին մէջ՝ պարբերաբար դժոխքի վերածուած, քան բոլոր կենդանիները «*իմաստուն*» Օձին թելադրութիւններով: Կը բերեն երկուքն ալ, դառնութիւնն ու ուրախութիւնը, *կենդանութիւն*: Կայ եւ *Բարին* անոնց մէջ: Ահա թէ ինչունախերզանքը՝ ուրախ եւ ցնծալից՝ Մեծ-Պահոց սեմին վրայ,- ԲԱՐԵԿԵՆ-ԴԱՆԸ: Ուրախութիւնը պիտի շէնցնէ ու զուարթացնէ սիրտերը՝ ճոխ սեղաններու շուրջ, ինչ փոյթ թէ սուգի վարագոյրը, մերթ խորհրդաւոր պատկերներովը Դատաստանին, դրախտին ւ դժոխքին, կշիռն ի ձեռին հրեշտակներուն եւ եռաժանին ասիին մէջ դեւերուն,- կանխած է ծածկել սուրբ Սեղանը Զոհին: Կը խօսի հաւատքը, շարականի լեզուով, թէ

պիտի վերագտնուի կորսուածը, պիտի վերադառնայ դրախտը, ոչ միայն *Յայտնութեամբն Աստուծոյ*, այլ նաեւ *Յարութեամբը «Մարմնացեալ Բանին»*, «Նոր Ադամին»: Յարուցեալ Փեսային, որ պիտի մտնէ «*ատագաստը*» տեսլային, փրկուածներն ալ իր հետ: *Մեռնիլ մեղքին համար Անմահին մահով*, որպէսզի Արդարին յարութիւնը տայ մեզի ալ հնարաւորութիւն՝ կենդանանալու «*արդարութեամբ*»:

Այս է բերկրալից ՊԱՇԸ քրիստոնէական հաւատքին: Պահը, ոչ կեղծաւորաբար տխրադէմ, այլ «*ըստ Աստուծոյ տրտմութեամբ*», ոչ թէ երեւալու համար մարդոց «*իբրեւ պահեցող*», այլ *օծուած գլուխով եւ լուացուած երեսներով ծածկատես Հօր համար միայն ի ծածուկ*: Մարգարեական շունչ մը, դարեր առաջ, նկարագրեց *ճշմարիտ Պահքը*, զոր Փրկիչը նուիրագործեց, ոչ միայն իր քառասնօրեայ ծոմապահութեամբ, այլ նաեւ ու մանաւանդ իր ներքին թէ արտաքին կենցաղով եւ իր տիեզերալոյս Աւետարանով:

Բայց այս *Պահքը* վերակոչումն է ամէն բանէ առաջ փրկարար մահուան, *յառնելու* – դուրս ելլելու համար «*մեղքի թոշակն*» եղող մահուան գերեզմանական գերութենէն, յաղթական Փրկիչով ձերբազատուած՝ մահուան պարտութեամբ: Այս է խորհուրդը ՓՐԿՈՒԹԵԱՆ, որուն պէտք է մօտենալ ու տիրանալ, ոչ թէ բարձրայօժ ու բազկատարած փարիսեցիին ինքնագովութեամբ, այլ գելահակ եւ քաւութիւն հայցող կրծակոծումովը խոնարի մաքսաւորին:

## Բ. Կիրակէ Աղուհացից կամ Արտաքսման

ԱՂ եւ ՀԱՅ,- համն ու սնունդը, անապականութիւնն ու պահպանութիւնը կեանքին: Ունէր զանոնք «կորուսեալ դրախտը»: Ունեցած է զանոնք եւ ունի միշտ մեր դրախտաշխարհը, մեղքին համար կորսուած եւ արդարութեամբ վերագտնուած՝ մահուամբ մահը կոխողին ձեռքով:

*Պահել* պետք է զանոնք՝ բոցեղէն սուրովը հաւատքին: Մեղանչումը եթէ կը խարբալէ զմեզ, կայ զոջումը՝ որ կը վերականգնէ ու կը վերակենդանացնէ: Արտօնուած չենք ուտելու ինչ որ զուրկ է համէ ու սնունդէ, ինչ որ կը պարարէ մարմինը առաւելագանցութեամբ եւ կը պարպէ հոգին անհրաժեշտին զանցառութեամբ մինչեւ յատակը, ինչ որ հրապուրիչ է արտաքնապէս տեսքով հաճելի եւ ճաշակով ախորժելի, ինչ որ ծառն է գիտութեան՝ բարիին ու չարին, բայց որ մոլորեցուցիչ է եւ մահացուցիչ, որ չ'առաջնորդէր աստուածածանօթութեան, այլ մեր մերկութիւնը կը պարզէ մեզի:

Կան պատուերը, կանոնը, հրամանը՝ տիեզերական Օրէնքի մը մէջ խտացած: Ներդաշնակութիւնը, հաւասարակշռութիւնը, փոխյարաբերութիւնն ու փոխազդեցութիւնը, անդրադարձումն ու իր անխուսափելի հետեւանքները: Օրէնքը՝ կ'ըսեմ՝ աստուածադիր, որով բնութիւնը կը կառավարուի անշեղ: Բնութենէն դուրս չէ մարդը. բայց կարող է անձնիշխանութիւնն ունի հնազանդելու անոր կամ ոչ, ապրելու կեանք մը բնականոն

կամ անբնականոն: Կայ բնութեան ազդարար ձայնը՝ մնալու կանոնին մէջ. կայ եւ հակամիտութիւնը ազատ կամքին՝ հեռանալու անկէ, ըմբոստանալու, սանձարձակուելու: Ազատ կամքը՝ *ընտրելու*,- ամենէն աստուածային առանձնաշնորհն է մարդուն: Ընտրել լաւը կամ յոռին, մէկն այս երկու հակադրութիւններէն. այն՝ զոր օրէնքը կ'արտօնէ եւ այն՝ զոր կ'արգիլէ: Կեանքը՝ մէկ պարագային եւ մահը՝ միւս: Ազատ կամքն է, որ պիտի կարենայ ընտրել կեանքը՝ օրէնքով կոչուած անմահութեան, եւ ոչ թէ մահը՝ զոր չէ ստեղծած Աստուած, տիեզերական ԿԵԱՆՔԸ: Կամքով է Աստուած՝ ազատ ամէն տկարութենէ եւ անով է Ինք Չօրութիւնը յաւիտենական: Անով է ստեղծագործ:

Նոյն ազատ կամքով է, որ աստուածաստեղծ մարդը պիտի ձգտի եւ տիրանայ այդ զօրութեան, որով եւ անմահութեան: Խոստովանուած է, թէ «տկար է մարմինը». կայ սակայն «հոգւոյ յօժարութիւնը», որ կը զօրացնէ մարմինը՝ տոկալու փշէ պսակին, ձաղկանքներուն, ծաղրանքներուն, եւ խաչին: Կը խմէ դառնութեան բաժակը ցմրոր՝ անվրդով եւ անգանգատ, առանց լեղի խօսք մը հանելու իր օրինաշարժ շրթներէն: Չունի՞նք վկայութիւնը խաչին:

Պահպանութիւնը Օրէնքին՝ ի գին ամէն զոհողութեան, կամաւոր եւ գիտակցական հնազանդութիւնը անոր պատուիրանին կամ հրամանին, պահպանումն անձին, ընդդէմ մեղքի ու մահուան փորձութիւններուն՝ բարոյական անընկճելի արիութեամբ, պահել անեղծ՝

ներդաշնակութիւնը, ներքին եւ արտաքին մարդուն փոխյարաբերութեան, պահել անխաթար՝ դրախտաստեղծ մարդը,- այս է կոչումն այն էակին՝ որ կը կրէ պատկերը զինք Ստեղծողին եւ որ կ'երագէ վերադարձը կորսուած դրախտին:

Կորսնցուցա՛ծ է, ստուգիւ, մարդը՝ անմեղ վիճակը կեանքին, դրախտով խորհրդաւորուած: *Արտաքրսուսա՛ծ* է այն «փափկութեան դրախտ»էն, անոր գեղատեսիլ եւ համեղաճաշակ պտուղներէն, անոր *աղ ու հաց*էն: Անհամացա՛ծ է իր կեանքը, իր հացը շաղուրա՛ծ է գէշ ալիւրով կամ որոմով:

Եւ ահա Եկեղեցիին ձայնը, շարականին մէջէն, որ կը հրաւիրէ զմեզ հրաժարելու անլի աղէն եւ կորստական հացէն եւ մօտենալ իսկական աղին եւ երկնէջ «կենդանի հաց»ին: Մօտենալ Աստուծոյ Խօսքին, որ ճշմարտութիւնն է եւ որ գերծ կը պահէ զմեզ մեղքէ եւ մահէ, եւ կուտայ մեզի իրական ազատութիւնը՝ որ կ'առաջնորդէ մեզի կեանքին՝ եւ ժամանակաւոր, եւ յաւիտենական:

Ունինք, բոլորս ալ կորսուած դրախտ մը: Ապացո՛յց.- յետադարձը մեր յիշողութեան, դէպ ի անցեալ մը՝ որ անձանօթ է գիտութեան եւ պատմութեան, ճանչցուած որպէս «անյիշատակ ժամանակ»: Վասնզի գիտութիւնն ու պատմութիւնը ունին հեռահասութիւնը միայն մինչեւ մթամած սահմաններն այդ անցեալին: Ափնիներ եւ բրածոներ չեն տար մեզի լման բովանդակութիւնը այդ անցեալին: Որքան թաքուն իրակա-



նութիւններ կան, առասպել կամ նախապաշարում կարծուած, որոնք երեւան եկած են մասամբ, կուգան եւ պիտի գան տակաւին: Ստեղծագործ երեւակայութիւնը, որ լոյս կուտայ գիտութեան,- դեռ շատ ու շատ հրաշալիքներ վերապահած է մարդկութեան: Բայց պիտի սպառի՞ն անոնք...:

Վրիպանք, սխալ, յանցանք ու մեղք,- ո՞վ ազատ մնացած է ասոնցմէ: Ո՞վ կարողացած է անկաշկանդ պահել իր կամքը՝ չտկարանալու համար ասոնց փորձութեան առջեւ: Բայց լսեցէք լուսաբանութիւնը շարականին, այնքան լաւատես.

Որ գդառնութիւն պտղոյն ճաշակն,  
Որով մեռաք արդարութեան,  
Պահելով քո քառասնօրեայ  
Փոխեցեր ի քաղցրութիւն  
Օրինաց քոց ճաշակումն,  
Աղաչեմք, արբո մեզ, Տէր,  
Ուրախութեան սիրոյ քո զբաժակ:

*Սիրոյ քաղցր բաժակը*,- այո, կայ այն, ամենուս համար, որ ճաշակած ենք դառն պտուղը, ՄԵՂՔԸ, եւ մեռած՝ արդարութեան վերաբերմամբ: Եւ ահա Այն որ, քառասնօրեայ ծոմապահութեամբ՝ մեր փոխարէն, դառնաբեր ու մահառիթ պտուղը փոխարկած է Աստուծոյ Օրէնքին քաղցրագոյն ճաշակին եւ անմահարար հացին: Ունինք նաեւ անոր զուարթարար գինին: Ուրեմն, ինչո՞ւ չաղաչենք Տիրոջ՝ խմցնել մեզի այդ բաժակէն:

Պահենք, պահենք մեր անձերը մեղքի եւ մահուան դռնն բաժակեն: Գիտնանք վայելել քաղցրութիւնը աղին ու հացին:

#### **Գ. Կիրակէ Քառասնորդաց. «Անառակը»**

«Անառակը», - «Թագն ու պսակ» առակը Աւետարանչին խաղաղութեան, բարութեան ու փրկութեան:

Երեք պատկերներ իրական կեանքէ,- *Անշունչ մետաղը, անբան կենդանին եւ բանական Էակը:*

Որքան տրտում ենք, երբ կը կորսնցնենք մէկն այս երեքէն: Որքան անհամբեր ու փութկոտ ենք՝ գտնելու առաջին երկուքը: Անոնց կորուստը կը մտահոգէ զմեզ՝ մեր մարմինին, մեր ֆիզիկական գոյութեան համար: Նիւթին պաշտամունքն ունինք: *Ոսկի-հորթին*, որուն շուրջ պարել գիտենք, երազելով սոխն ու սխտորը Եզրիպտոսին: Ինչ փոյթ մեզի *պատգամները*, որոտումներու եւ փայլատակումներու մէջէն՝ Սինայի անմառչելի բարձունքէն փրցուած ապառաժեայ տախտակներու վրայ խորհրդաւոր մատով մը դրոշմուած: Եւ ահա պատիժ-փորձութիւնը անապատի քառասնամեայ թափառումներուն:

*Անշունչ մետաղին*, դրամին համար այս առակին մէջ դեր ունի անշունչ միջոց մը,- ԱԻԵԼԸ: Կը ձեռնէ զայն մտահոգ տան-տիկինը, տենդոտ խուզարկութեամբ մը գտնելու համար կորսուածը: Առաստաղէն կախ է

տուած ուրիշ անշունչ, այլ պլպլացող դերակատար մը,-  
ՃՐԱԳԸ, որ կ'օգնէ ժիր աւելին: Եւ կը գտնէ՛: Իր անչափ  
ուրախութեան մասնակից կ'ընէ դուռ-դրացի:

Ահա *անբանն* ալ: Եւ շուարած հովիւը՝ ցուպը ձեռ-  
քին եւ սրինգը շրթներուն: Ելեր է ի խոյզ իր մոլորած  
ոչխարին, մէկը միայն հարիւրէն: Եւ կը գտնէ՛ զայն:  
Ուսամբարձ եւ ցնծուն կը վերադարձնէ զայն փարախ:  
Ինճոյք է իր տան մէջ: Հոն փութացեր են բարեկամներ՝  
խնդակցելու համար հովիւին: Ո՛վ պիտի չուրախանար  
գիւտովը կորսուածին: Այստեղ ալ, սակայն, պաշտա-  
մունքը «մամոնայ»ին, որ կը թելադրէ փնտռուողը  
կորսուածին եւ ցնծութիւնը գտնուածին:

Բայց սրտայոյզ եւ հոգեխռով է երրորդը,- *Բանաւոր  
Էակը*: ԱՆԱՌԱՎ ՈՐԴԻՆ: Կորուստ մը անփոխարինելի:  
Չաւա՛կ մ'է կորսուածը, աղիքները գալարուող հօր մը,  
թէեւ *անատակ*: Հեռացած հայրենի տունէն ու մայրենի  
ծոցէն: Ազատութեան սիրահար: Ալ ոչ մէկ նուիրական  
կապ: Իրաւունքին տիրացած եւ պարտականութեան  
երես դարձուցած: Կորսնցուցած համը տան եւ դաշտի  
վայելքին: Հեռո՛ւն, հեռո՛ւն, աչքէ եւ ականջէ հեռո՛ւ:  
Հանդուրժելի չէ իրեն հսկող նայուածքն ու գուրգու-  
րալից բազուկը զինք ծնողին եւ սնուցանողին: Հեռուն  
կայ շուայտանքը՝ զգայարաններ փայփայող եւ կեանքը  
հիւծող: Չի նախատեսեր չքաւորութիւնը հոն դարանա-  
կալ, երբ լիառատ է մօտը՝ շտեմարանն իր հօր:

Կը միայ սիրտը որդեկորոյս հօր, նախազգայով  
տուայտանքը կորսուածին: Եւ մեռածին: Ըստ երեւ-

ոյթին անտարբեր է: Չ'ելլեր ի խոյզ եւ ի գիւտ: Սակայն կորսւածը ոչ անշունչ մետաղ է, ոչ ալ անքան կենդանի: Կորուստն անոնց՝ պիտի չխշխշացներ իր սիրտը: Իր միսէն՝ միս եւ արիւնէն՝ արիւն էր այս կորսուածը: Կը խօսին ասոնք ե՛լ հօր, ե՛լ զակիին մէջ: Բայց անատակը, որ ապերախտութեամբ լքեր է տունը, ականջ չունի լսելու: Սերը անսանձ կիրք մ'է դարձեր իր մէջ, հրահրուած ու բորբոքած՝ աղիճներու ցոփ հրապոյրէն: Ի՞նչ հոգ նոյնիսկ վաղուան հոգը:

Շուտով կը հասնի այդ վաղը, սո՛վը՝ ամենակույ յղիանքէ մը յետոյ: Իոզարած մըն է ալ, անոնց «եղջիւր»ներէն իսկ զրկուած: Ապառաժ քարի մը վրայ նստած, ցնցոտիներով, գլուխը փերտուն մէջ, կը սուգուի իր հոգիին խորը՝ դատարկ, սնանկացած: Յանկարծ սարսուռ մը եւ ցնցում մը: Ահա պատկերն իր ծերունի հօր՝ բաժանման արցունքն աչքերուն: Կը փլչի ապաշափ աւազանն ալ իր մէջ: Եթէ բախտը իր դէմ եղաւ անգութ – օ՛հ, ինքն իրեն դէմ,- ահա գորովալի գութը, որ կը դողդղայ աղի կաթիլներուն մէջ հօր արցունքին: Տեսաւ զայդ, այնքան կենդանի, որքան տեսած չէր երբէք, երբ կը վայելէր չբաժնուած ժառանգութիւնն իր հօր: Հոս որդին սովամահ, հոն վարձկաններ հացալից: Ըլլալ մէկն ասոնցմէ,- եղաւ իր վճռական որոշումը: Չէ՛ որ մեղանչած է ինք երկինքի դէմ եւ հօր առջեւ: Ալ արժանի չէր կոչուելու որդի: Եւ բռնեց ուղիղ ճամբան դէպ ի տունը հօրենական: Մօտեցած է սրտադուլ: Կը նշմարէ հայրը հեռուէն: Եւ ահա նա սրտաթունդ վար

իջած, ընդառաջացած հեւ ի հեւ դէպ ի վերադարձողը, փարած անոր պարանոցին գուարճախառն հեծկլտանքով: Եւ որդին, զղջումի լուացումով մաքրագործուած, փարած ծնրադիր հօրը ոտքերուն: Անառակը զգաստացած:

Ձայն ցնծութեան եւ ուրախութեան յարկին մէջ որդեսեր եւ արդար հօր: «Պարարակ եզն իսկ մորթուած: Ցնցոտիներէն մերկացած, ինչպէս հոգին իր մեղքերէն, եւ հագուած ամբողջ շքեղութեամբը նախկին-պատմունճան, մատանի, կօշիկ,- որդին իր կատարեալ վայելքին մէջ: Ոչ թէ «վարձկան», այլ «որդի», որ կորսուած էր ու գտնուեցաւ, մեռած էր ու կենդանացաւ:

Բայց ահա միւս վերադարձողը դաշտի սովորական աշխատանքէն եւ դատանքէն: Կը լսէ ձայնը երգերու եւ պարերու: Իր եղբայրն է եկեր ողջ-առողջ: Այն՝ որ հեռացեր էր տունէն, արհամարհելով ամէն սրբութիւն: Այն՝ որ իր ժառանգութիւնն էր վատներ շուայտ ու վատշուէր կեանք մը վարելով օտարութեան մէջ: Իսկ ինք միշտ հլու-հնազանդ հօր պատուէրներուն, օրն ի բուն նուիրուած իր ծանր գործին եւ զրկուած ամէն հաճոյքէ: Մտնել հիմակ այս տունէն ներս, երբ հոն է անառակը:

Նախա՛նճ՝ այդքան կոյր: Մի՛թէ ինք միշտ իր հօրը հետ չէր, մի՛թէ «ամէն ինչ» իրը չէր: Իսկ կորսուածին գիւտը եւ մեռածին կենդանացումը, մի՛թէ պիտի չհրճուեցնէր սիրտը մեծ եղբօր: Ատելութի՛ւն, եւ այն՝ եղբայրատեցութիւն, իժը՝ ծուարած հաւատարմութեամբ պարծենցող երեց որդւոյն մէջ:

Այսպես է նա, «երկնաւոր Հայրը», նաեւ բոլոր անառակ որդիներուն՝ որոնք ինքնայօժար եւ զոջումով կը վերադառնան իրենց Հօրենական Տունը: Տունը մաքուր ու տիպար կենցաղի: Տունը հաւատաւոր աղօթքի եւ գործի: Տունը հոգեւոր ցնծութեան եւ ուրախութեան: Տունը վայելքի, զենումովը «պարարակ Եզ»ին, իր Միածին Որդւոյն: Տունը յաւիտենական օրհնութեան, կանգնած հիմին վրայ այս Երկրին:

Ա՛հ, Ի՛նքն է այն, Առակախօսը Անառակին, քաւչարար Չոհր յաւիտենական: Այսպես կը գտնուի կորուսեալը եւ կը վերակենդանանայ մեռեալը:

### **Դ. Կիրակէ քառասնորդաց. «Տնտեսը»՝ անհաւատարիմն ու հաւատարիմը**

ՏՈՒՆԸ,- *իրաւն ու մեծը*: Չէ՞ք տեսներ հսկայ եւ հոյակապ այդ Տունը,- ԽՈՇՈՐԱՇԻԱՐՀԸ, զոր մենք սահմանափակեր, փոքրկացուցեր ենք եւ կը կոչենք զայն *Տիեզերք-Մեծ եզերք*, պարուրուած ու կամարակապուած՝ Երկինքով:

Բիր-բիր օթեւաններ, բոյլ-բոյլ լուսաւորներ, խառն՝ պարերոյը իրենց ճրագին կարօտ մոլորակներուն, եւ ասոնցմէ ոմանք իրենց արբանեակներով եւ մանեակներով, նազանի գիսաւորներ եւ խուսափուկ ասուպներ, խումբ-խումբ կենդանակերպ համաստեղծութիւններ,- ահա ամբողջ կառուցուածքն ու սար-

ուածքը այդ տիտան Տան: Եւ ա՛յսչափ միայն,- այսչափ մեր հասողութեան ծիրին մէջ: Այսչափ՝ թիւերը մեր կարճ հաշիւին: Այսչափ պատմութիւնը մեր աստուածավառ եւ աստուածափառ Երկինքին՝ մեր երկիրն ալ կամարակապող: Եւ ճարտարապե՛տն այս բոլորին,- կը պատասխանէ ձեզի Հաւատքը՝ պատկառոտ եւ պատկառելի: «Արծաթագործ ճարտարապետն» է այն մեր Նարեկացիին, որ գիտցեր եւ կարողացեր է խօսիլ անոր հետ՝ սրտի լուսասփիւռ խորքերէն, զի հոն է գտեր զԱյն եւ տեսեր երես առ երես, ինչպէս երբեմն Մովսէս Սինայի շանթարձակ բարձունքէն:

Ճարտարապետ եւ Տնտես է Նա, զի *նախախնամող* է իր զօրութիւնն ստեղծագործ: Չափն ու կշիռն եւ անսխալ հաշիւն իր իմաստութեան՝ *կը պահէ* իր այս Տունը, եւ կը կանոնաւորէ ու կը կառավարէ զայն իր բոլոր օթեւաններով: Եւ մերն ալ, այս Երկիր-դրախտը՝ մեզի անձանօթ բովանդակ մեծ ու փոքր դրախտներուն հետ: Ստուգիւ, մե՛նք միայն մենաշնորհեալն ու երջանիկը,- չենք գիտեր: Խոստովանիլ ու չպարծենալ, ջլաւակնիլ: Այո, գերագոյն Տնտեսն է Նա նաեւ մեր օթեւանին, մեր աշխարհին, Ամենալի «Հինաւորցն» անհնանալի, որ կը վերանորոգէ անդադար ամէն բան իր յաւիտենական կենդանի շունչով: Չունեցա՛նք «նոր Երկինք եւ նոր Երկիր»: Չունեցա՛նք «նոր Մարդը» հինին տեղ:

Կայ, սակայն, ուրիշ տուն մըն ալ, ոչ նուազ զարմանալի, եւ նոյն Ձեռքով ու Շունչով ճարտարապետուած: Այդ՝ մեր ԱՆՁՆ Է: ՄԱՐԴԷ: *Փոքրաշխարհը:*

Գիտութիւնը պարզած է, չափով մը, անոր կառոյցքն ու կազմածը: Լոյսի բերած է *մաս մը* անոր խորհուրդի մութ ծալքերէն: Տարրալուծած է զայն, ունկիի մը տարողութեամբ, բարդ մեքենականութիւնը այդ հողակերտ զանգուածին: Տարբադադրած է զայն՝ անոր բնութեան բազմազան երեւոյթներու քննութեամբ: Ծանօթ ենք, որոշ բաւականութեամբ, մեր յօրինուածքին ու խառնուածքին: Հոգեբանական վերլուծումներն ալ այս նիւթական նուաճումներուն վրայ բան մը, կարելոր բան մ'են աւելցուցած: Երեւան եկած է, որ ճարտարապետը մեր *անձնատր տան* մէջ եւս *տնտես* մըն է դրած: Բայց նախ՝ «ադինական դրախտ»ին, «զգալի աշխարհ»ին մէջ, «տիրապէս ստեղծուած Մեծատունէն»: Կորսուած դրախտին՝ գոր կը ջանանք վերագտնել, իմաստուն տնտեսութեամբ:

Եւ տնտես ենք կարգուած մեր իսկ «տիրական բնութեան»: Մեր սեփական տունը՝ վերածուած «տաճար Աստուծոյ կենդանւոյ»: Տաճարը-տունը, եւ մենք անոր տնտեսը: Ունի՞նք այս իմաստէն թելադրուած *տնտեսագիտութիւն*: Ի՞նչպէս կը մատակարարենք ու կը կառավարենք այս մանրանկարը Մեծ-Տան: Աւելի դժուար եւ պատասխանատու քան տնտեսութիւնը նիւթական տան: Տրուած են մեզի օրէնքն ու կանոններ եւ զանոնք կիրարկող ընդունակութիւնն ու պայման-



ները: Այս վերջինները քննարկող ու ճշտող գիտութիւնն ու գիտակցութիւնը:

Այս անձ-տունն ունի իր մարմինն ու հոգին, երկուքն ալ իրենց առանձնայատուկ արժէքներով: Մարմինն իր բնագոյներով ու կիրքերով, հոգին իր զգացումներով ու խորհուրդներով, իր խղճմտանքով եւ դատողական լոյսի հակակշիռով: Իր իմաստութեամբ, ոչ այն իմաստութեամբ՝ զոր մարդկային հնարիմացութիւնն է ճարտարած եւ զոր «անհրաւութեան տնտես» մը կը կիրարկէ անձնական օգուտ մը ապահովելու համար. այլ այն իմաստութեամբ՝ զոր «ամենուն ճարտարապետը» կուսուցանէ եւ որ «ճանանչն է Աստուծոյ զօրութեան», «նշոյլը մշտնջենական լոյսին», «անբիժ հայելին Աստուծոյ ազդեցութեան եւ պատկերն Անոր բարութեան»: Իր նկարագիրն ըլլալով «նուրբ, սուրբ, դիւրաշարժ, բազմաբաշխ եւ յստակ»՝ ան կը թափանցէ ու կը ներգործէ ամէն բանի մէջ: Այն իմաստութիւնը, որ «անհրաւ մամոնա»էն իսկ բարեկամներ կը շահի զոհաբերութեան ոգիէն թելադրուած բարեգործութիւններով: Խօսուն վկայութիւնն ասոնց: Կը շահի տիրաբար եւ ոչ ծառայաբար, փրկչաւանդ ծառայութիւնը վերապահելով կեանքի Տիրոջ՝ արդար Աստուծոյ միայն:

Ծառայել Աստուծոյ՝ արդարութեամբ եւ արդարութեան համար, իմաստութեամբ եւ ուղղամտութեամբ, այս է անխախտ սկզբունքն այն տնտեսութեան՝ որ կը

վերաբերի մեր անձնատր տան, մեր ֆիզիկական եւ հոգեկան շինուածքին:

Այս իմաստութեամբ պարտինք տնտեսել մեր այն թանկագին ժառանգութիւնները, «գանձերը», հոգեկան, իմացական, ֆիզիկական եւ նիւթական ոյժերն ու ներգործոյթները, գորս Արարիչն է շտեմարանած մեր մէջ կամ մենք ենք ձեռք բերած Իրմէ օրհնուած մեր աշխատանքներով: Չզեղծանել բնաւ անոնց գործածութեան մէջ, չկրելու համար ատոր անխուսափելի վատ հետեւանքները,- քայքայումն ու մահը: Բարոյական սնանկութիւնը: Մեղքին աւերները ժառանգական երկար գիծով: «Բորբոքեալ հուրը», այստեղ եւ այնտեղ, ներքին դժոխքի մը հնոցին մէջ: Պահել այդ բոլոր ոյժերուն ներքին ներդաշնակութիւնը՝ երաշխաւորելու համար կեանքին բնականոն աճումն ու զարգացումը, ընդլայնումն ու բարձրացումը: Պահել նոյնպէս անոնց արտաքին ներդաշնակութիւնը ընկերային յարաբերութեանց մէջ, որպէսզի հնարաւոր ըլլայ հաստատել բարոյական միութիւնը, գոյակցութիւնն ու համակեցութիւնը բոլոր տարրերուն, ընտանիքներուն, ցեղերուն եւ ազգերուն միջեւ, մարդոց եղբայրութիւնը Աստուծոյ հայրութեամբ: Այս կերպ իմաստութիւն մը կարող է զերծ պահել մարդկութիւնը իրերաջինջ հակամարտութիւններէ եւ վերջ տալ միանգամ ընդմիշտ պատերազմներու արհաւիրքներուն եւ աւերներուն:

Այո, չենք կրնար ծառայել երկու տէրերու,- Աստուծոյ եւ Մամոնային նոյն ատեն: Այս պարագային, անխու-

սափելի է ատելութիւնը մեկին կամ միւսին դէմ: Եւ ատել՝ յաւիտենականը, թէ՛ ժամանակաւորը: Գին տալ առաջինի՞ն, թէ՛ վերջինին: Ծառայել Աստուծոյ՝ կը նշանակէ ծառայել հասարակաց բարութեան անշահախնդրօրէն: Այս է յաւիտենականը: Ծառայել մամոնային՝ ծառայել է հանրային չարութեան: Եւ այս է ժամանակաւորը՝ գերեզմանին անդենական ասիակոտորիկ խորհուրդին մէջ լուծուած:

Աւետարանական տնտեսութիւնը՝ տնտեսութիւնն է բարութեան, յաւիտենական արժէքներուն: Ընտրութիւնը թողուած է ազատ կամքին: Միայն կենդանի Հաւատքը կարող է լուսաւորել եւ զօրացնել այդ կամքը՝ ընտրելու *Տնտեսութիւնը Բարութեան*:

## **Ե. Կիրակէ Քառասնորդաց. «Դատաւորը»**

Մեկնաբանական չէ այս մեր գրութիւնը, այլ խորհրդածական՝ շարականի լոյսին տակ:

Դատաստան եւ դատաւոր: Դիրի՞ն քան է դատ տեսնել: Ի՞նչ է կշիռը դատաւորին,- Օրէ՞նքը, թէ՛ խիղճը. մարդկայի՞նը, թէ՛ աստուածայինը, ծո՞ւորը, թէ՛ շիտակը. երկո՞ւ, թէ՛ մէկ չափովը: Եւ ո՞վ է դատաւորը,- կաշառակո՞ւրծը, թէ՛ անաչառատեսը: Չենք խօսիր արուեստով կամ պաշտօնով դատաւորի մասին:

Կայ «*արդարութեան դատաւոր*» մը, հաստատուած մեր մէջ: Այդ՝ մեր «ՄԻՏՔՆ» է, մեր ԽԵԼՔԸ, որով կը

դատենք մեր «*հոգին եւ մարմինը*»: Ինչ որ ունինք իբրեւ բխում մեր ամբողջական խառնուածքին ու կազմութեան, մեր ներքին ապրումներուն ու արտաքին կենցաղակերպին: Կը դատենք «*արդարապէս դատումով, Քրիստոսի օրէնքին համաձայն*»: Այդ օրէնքը ՍԷՐՆ Է, լրումն իսկ բոլոր օրէնքներուն: Անոր լոյսովն է, որ արդարութիւնը կուգայ երեւան: Հաւասարակշռութիւն եւ ներդաշնակութիւն, ուղղութիւն, անկեղծութիւն եւ ճշմարտութիւն՝ անով միայն կ'առնեն իմաստ եւ արժէք:

Բայց կայ նաեւ «*անիրաւ դատաւորը մեր բնութեան քաղաքին մէջ*», որ ոչ «*սուրբ երկիւղն*» ունի Աստուծմէ եւ ոչ «*պատկառանքը*» մարդոցմէ: Կտրուած է իր կապը Աստուծմէ եւ ընկերէն: Ցամքած է իր մէջ աղբիւրը զգացումի եւ գութի: Անոստ սալ մը կայ իր մէջ մուրճի հարուածներուն տակ: Այլամերժօրէն ինքնակեղորոն է, ինքնաբաւ եւ եսապաշտ: Անտարբեր է եւ արհամարհոտ ամեն բանի հանդէպ՝ որ իրմէ դուրս է, իրը չէ: Թշուառութեան եւ դժբախտութեան վրայ կը նայի զգուանքով, անփոյթ՝ որ ինքն ալ կը դառնայ ամենուն կողմէ նշաւակ պժգանքի:

Նոյն այն միտքն է այդ, անոր ածխացած կամ մեռած խիղճը: Բծաւոր ու նեխած խղճմտանքը: Ականջ չի տար պաղատական ձայնին «*այրի հոգի*»ին: Չի ճանչնար անոր իրաւունքը եւ կ'անտեսէ արդարութեան պարտքը: Չունի արժանապատութեան զգացում, ոչ ալ պատասխանատութեան գիտակցութիւն ուրիշներու եւ իր անձին հանդէպ: Մոլորեալ մըն է նաեւ այս:

Մոլորեալ մը անուղղայ: Միտքի մոլորանքը՝ այնքան ահաւոր: Իսլամի մէջ խարխափում, որ կ'առաջնորդէ ամէն տեսակ զեղծումներու եւ անկումներու, վասնզի կը պակսի հաւատքը, լծակը՝ իր լծակից սիրոյն հետ՝ կանգնումի եւ բարձրացումի, յաղթահարիչն է ամէն փորձութեան, ուղեցոյցը փորձառութեան:

Տկարութիւն մը բոյն է դրած մարդկային բնութեան մէջ: Կայ ներքին պայքար մը մարմինին եւ հոգիին միջեւ: Միտքը լքած է հոգին՝ որ մնացած է անզօր: *Այրի* մըն է ան անպաշտպան: Անպաշտպան իր «*սոսիս*»ին դէմ՝ որ մարմինն է, նիւթը: Նիւթը՝ ազատ ամէն հակակշիռէ, սանձարձակ իր բոլոր բերումներուն մէջ:

Բայց այս «*այրի հոգին*» ունի իր «*անմահ սուրբ Փեսան*», - Քրիստոսը: Ունի նաեւ *միջոցը*՝ դիմելու Անոր եւ պաղատելու, որ իր դատաւոր-միտքին սորվեցնէ *Իր իրաւունքը*, արդար դատ տեսնելու իր հակառակորդին, իր մոլորամետ կիրքերու առաջնորդին դէմ:

Այդ միջոցը՝ ԱՂՕԹՔՆ է, հաւատքի լեզուն՝ պարզ ու պերճ միանգամայն: Աղօթել անդադար եւ անձանձրոյթ: Ոչ թէ շարժելու համար գուրձն Անոր՝ որ ՍԷՐ է համակ եւ անպակաս. այլ զօրացնելու, արիացնելու հոգին՝ ապաւինելու արդարութեան եւ իրաւունքին, ինքնին իսկ ամոքելով, զինաթափելով իր դատաւորը՝ ունկընդդէմ իր բողոքին:

Բայց այս հաւատքը, ...-ո՛վ պիտի գտնէր զայն այսօր, երբ «*Անմահ Փեսան*» անգամ, «Մարդու Որդին»

կասկածեցաւ, թէ պիտի կրնա՛ր գտնել զայն երկրի վրայ՝ իր դարձին. (Մրկ. ԺԸ, 8):

Անիրաւ դատաւորներ ենք մենք յաճախ մեր անձին դէմ, զի տկար է մեր հաւատքը – եթէ ունինք զայն – եւ չենք զօրացներ զայն աղօթքով: Օ, այս աղօթքը, այնքան գէշ ըմբռնուած զօրութիւնը մեր հոգիին: Կը շփոթենք զայն հաստատիպ թութակաբանութեանց հետ, որոնց մէջ դրուած երբեմնի տաք շունչն ու վարակիչ ոգին սպառած են հիմակ թերահաւատութեամբ, սին յոյսերու խաբկանքներով, ակընկալութեանց չափի զանցումներով ու վրիպումներով, «աշխարհը լրիւ շահելու» ցանկութեամբ՝ «անձը տուժել»ու գինով:

Ճշմարիտ աղօթքը՝ կուռ ու բովանդակալից՝ այն է, որ ոչ թէ կ'արտասանուի շրթներով հողմադացքի մը շրջադարձութեան նման, այլ որպէս ինքնաբոլիս աղբերացում հանդարտ ու առատ ներքին կենդանի ջուրերու, ոչ թէ «*ի ցոյցս մարդկան*», մակերեւութային ծփանք ու փոթորկում, այլ «*ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ*»:

Չունի՞նք խորհրդաւոր «*սենեակք*» մեր ներսը: Աղօթատեղին անձեռակերտ: Ունկնդրութեան առանձնաբանն Աստուծոյ: «*Մուտ ի սենեակ քո*», կը հրամայէ մեղմիկ ձայնը Գեթսեմանիի Աղօթողին: Ինքնամփոփուէ, փակելով բոլոր դռները փորձութեան եւ սայթաքումի. «*Փակեա գրդունս քո*»: Աղօթէ «*ի ծածուկ*», դէմ յանդիման «*ծածկատես*» Հօր հետ, մտերմիկ խօսակցութեան մը ջերմութեամբ, սրտբացութեամբ եւ

ազդուութեամբ: Աղօթէ, ոչ կրաւորական կեցուածքով ու մտացիր, այլ ինքնակեդրոնացումով, ինքնանդրադարձումով եւ ինքնաթելադրութեամբ՝ տեսնելու քու մէջդ լուսեղէն ներկայութիւնը Գերագոյն Չօրութեան: Եւ գօտեպնդուելու պարտութեան մատնելու համար «*դատաւորն անհրաւ*»: Արթնցնելու խիղճը միտքի թմբիբէն եւ վերցնելու սեւ քողը այրիութեան՝ հոգիին: Ձերբազատուելու գերութենէն եւ տիրանալու փրկութեան: Այո, Աստուած, որուն հետ պիտի խօսակցիս քու «*սենեակ*»իդ մէջ, պիտի տայ քեզի այս ազատութիւնը եւ այս փրկութիւնը:

Չունի՞նք, գոնէ մանանեխի չափով, հոգին «*Նարեկայ մեծափառ եւ քարձրապատիւ Ուխտի չնաշխարհիկ Վարդապետին*»: Նաեւ հոգին այս չակերտաւոր խօսքը իր աշակերտներուն ընծայաբերողին՝ մեր նոր Շնորհալոյն, այժմ մտած իր յաւիտենական հանգիստին մէջ: Առաջինին «*Ողբերգութիւնը*» իր աննման Աղօթամատեանին մէջ, եւ երկրորդին կրօնաշունչ քերթողութիւնը իր «*Հովուական Սրինգ*»ին եւ «*Սրբազան Քնար*»ին մէջ: Եւ սրբակրօն կենցաղն ասոնց, նման ու աննման իրարու, լուսակամարով մը ձգուած տասներորդ դարէն մինչեւ քսաներորդը, առաջին Շնորհալիէն ալ շող մը խառնած մէկին աստուածազդեցիկ շունչին եւ միւսին այլապէս խորհրդազգած ոգիին հետ:

## Չ. Կիրակէ քառասնորդաց. «Գալստեան»

Ունէր, ըսինք, մեր աշխարհը դրախտ մը կորսուած: Դարեր շղթայաշար, երկունքներով լի, ան կրեց շարունակ տուայտանքն այդ կորուստին: Անէծք մ'էր խրած մարդկութեան կողին: Կեանք մը կողկողագին, ճակատագիրն էր եղած անոր: Ինքն իսկ էր պատասխանատուն: Անկում մը բարձունքէն: Անդունդն էր խոր: Կանգնումը դժուար: Փորձեր անպակաս եւ ոչ շատ յաջող: Յաղթութիւններ պանծացուած, բայց վաղանցիկ:

Թղթատեցէք պատմութիւնը էջ առ էջ: Կրօն, մշակոյթ, քաղաքակրթութիւն,- կան ասոնք միշտ՝ անգիր, գրաւոր: Աստուած եւ աստուածներ՝ անտեսանելի եւ տեսանելի, լուսեղէն եւ կռածոյ. ոգիներ՝ բարի եւ չար, հրանիւթ եւ խաւարակույ: Արուեստներ, իմաստասիրութիւններ, գիտութիւններ: Ընկերային փոփոխական բարքեր ու դրութիւններ,- կան ասոնք միշտ՝ անգիր, գրաւոր: Վկաներ,- աղիւսներ, ժայռեր, պապիրոսներ, մագաղաթներ, թուղթեր, բեւեռներով, մեհենագրերով, նշանագրերով եւ տառերով խօսուն: Գիւտեր եւ ստեղծագործութիւններ՝ օր աւուր աւելի նոր եւ աւելի բարձր: Արշաւանքներ եւ աշխարհակալութիւններ, պատերազմներ եւ նուաճումներ, կործանումներ, ակերածում եւ քնաջնջում: Խաղաղութիւններ՝ վերականգնումներ եւ շինութիւններ: Յոռի-շրջաններ՝ այս բոլորով: Եւ այսպէս՝ դարեր ու դարեր շարունակ: Յառաջադիմու-



թիւններ եւ յետադիմութիւններ: Մոայլ ժամանակներ եւ լուսաւոր ժամանակներ: Բացիսփիկ ճառագայթումներ: Կեանքեր եւ մահեր: Քրքրեցէք խաւարը մեր երկրագունդին: Սոսկում եւ հիացում:

Շունչ մը, սակայն, խորհրդաւոր՝ ծածկուած կայ այս բոլորին մէջ: Շունչ մը ազդու եւ ներգործող անոնց մէջ՝ որ տեսանողներ են կամ տեսլապաշտներ: Ունին յետադարձ ակնարկը դէպ ի անցեալը եւ յառաջահայեացքը՝ դէպ ի ապագան: Միշտ հեռաւորը՝ որ կը մօտենայ, ետեւէն եւ առջեւէն: Կը տեսնէ եղածը եւ կը նախատեսէ ըլլալիքը: Չկա՛յ տրամաբանական անխզելի կապ մը երկունքին միջեւ: Միթէ յաւիտենութիւնը չէ՞ անընդհատ շարունակութիւնը ժամանակին կամ ժամանակներուն: Գիտենք Տէրը յաւիտենութեան, որուն կը նայի ծառան ժամանակներու մէջէն: Ներշնչողը եւ ներշնչեալը: Բայց ո՛վ պիտի յաւակնի քակել կծիկը բարդ ու թնճկոտ այս բոլորի խորհուրդին:

Եւ ահա կը մօտենային *«վերջին տարիները»*, Ներշնչողին կողմէ նախասահմանուած եւ Ներշնչեալներուն կողմէ *«ծանուցուած»*: Պիտի հասներ փրկիչը *«առ ի վախճան ժամանակին»*: Ոչ ասորեստանեան արքայի մը, ոչ եգիպտական փարաւոնի մը եւ ոչ հռոմեական կեսարի մը նման: Ոչ մեծ զօրութեամբ եւ ոչ բիրտ ոյժի սպառազինութեամբ: Այլ պիտի երեւնար *«հոգւով» «ի մէջ մարդկան, զգեցեալ զկերպ ծառայական»*: Չէ՞նքն այս Փրկչին, - *«տկարութիւնը»*, որուն մէջ ճշմարտուած պիտի ըլլար *«զօրութիւնը»*, ըստ փորձա-

նութեան «ընտրութեան անօթ»ին՝ Պօղոսին: Տկարութիւնը, որով եւ զօրութիւնը նուիրումին, զոհաբերումին, ԻԱԶԻՆ: Դժուա՞ր է ըմբռնել իմաստն այս հակադրութեան:

ԻԱԶԸ.- Բացարձակ գիտութիւնն ու գիտակցութիւնն է Նա՛ որ բարձած է զայն: Երէկը, այսօրը եւ յաւիտեանը իր իսկ մէջ են: Վեր է Նա ժամանակէն եւ միջոցէն: Ինքն իսկ է ժամանակն անսահման, անսկիզբ եւ անվախճան: «*Ամենայն յամենայնի*» է Նա: Եւ *կը գործէ անդուլ անդադար*: Մշտաշարժ է, ինչպէս իր իմաստութիւնը: «*Հանգիստը*», մեր իմացումով, ժխտումը պիտի ըլլար իր գոյութեան: Եւ *ոչինչը՝* անիմաստ, ահաւոր:

Այսպէս, մարգարէներն Իսրայէլի – գուցէ աւելի աղօտ գուշակներն այլ ազգերու – կանխատեսեր էին «*Խոր-հուրդն Անոր գալստեան*»: Եւ որովհետեւ առաջին Ադամը, ստեղծուած «*ի տիպ տիրական*», չէր պահած «*պատուիրանը*» եւ մերկացած էր «*պատումուճանը*», - *պիտի գար «Նոր Ադամը այցելելու կորուսածին*»: Եւ մարգարէներն Իսրայէլի աւետեր էին, թէ Այն որ պիտի գար՝ Գառն էր: Եւ անոր արիւնով պիտի կատարուէր խորհուրդը փրկութեան: Ու «*ծառերն անտառի*», այդ արիւնով ոռոգուած ու աճած, պիտի ցնծային անոր «*կրկնակի գալուստով*», առաջինին «*յուսով զւարճանար*»ով եւ «*երկրորդին*» իրմով «*ցնծալով*»:

«*Խոնարհ եւ հեզ արքան*» է Նա՛ որ կուգայ եւ պիտի գայ: Յետոյ պիտի տեսնենք զինքը «*նստեալ յէջ եւ*

*յաւանակ»: Խորհրդապատկե՛ր «կրկին ազանց»,- այսպէս կ'երգէ գէթ մեր շարականը: Իսկ երկրորդի՛ն,- «ա-հեղ փառաց երեւումն» Անոր: Եւ իր առջեւէն «բորբոքեալ հո՛ւրը...»: Օ՛հ, մենք զայն պիտի ուզենք տեսնել այն «հուր»ին մէջ՝ զոր մեր փրկիչը բորբոքած տեսնել ցանկաց երկրի վրայ եւ զոր Շնորհալին կ'երգէ իբրեւ «սիրոյ հուր», հոգւոյն աղտը այրող, միտքին խիղճը սրբող, մարմնին մեղքը մաքրող, եւ «կենդանի Հուր» Քրիստոսի գիտութեան յոյսը վառող սրտին մէջ:*

Այսպէս կ'ըմբռնէ Շնորհալին այս «Հուրը», տարբեր *յառաջատես Դաւթի «հուր»*էն: Եւ Սիրոյ այս Հուրը *խնայող է, գթած եւ ողորմած:* Ինչո՞ւ սարսափի հոգին, երբ այդ կրակով է ապրած այս դրախտ-աշխարհին մէջ:

## **Է. Կիրակէ. «Ծաղկազարդ»**

Տեսան «սքանչելիքը» Դազարի յարութեան՝ Յիսուսի սիրոյ արցունքին մէջէն: Նախերգանքն էր այն Մեծ Յարութեան:

Հաւատք է ներշնչեր շատերուն, խոնարհներուն վրդովում եւ զշարում՝ ոմանց, հպարտներուն – քահանայապետներուն եւ փարիսեցիներուն: «Հռովմայեցիները պիտի գան եւ պիտի կործանեն մեր ազգն ու երկիրը» - հաւար էին տուեր անոնք հաւաքոյթի մը մէջ: «Դուք ոչինչ գիտեք, եւ ոչ իսկ խորհիլ, թէ լաւ է որ մարդ

մը մեռնի ժողովուրդին համար եւ ոչ թէ ամբողջ ազգ մը կորսուի», - ազդարարեր էր օրուան քահանայապետը՝ Կայիափայ, մարգարեական ներշնչումով մը: Վասնզի ստուգիւ պիտի մեռներ այդ «Մարդը», ոչ միայն ազգին համար, այլ որպէսզի «Աստուծոյ ցրուած որդիները հաւաքէ մէկտեղ: Միութիւնը համամարդկային: Մոռցուած էր յարացոյցը նոր կրօնին, - «ՄԻ ՀՕՏ ԵՒ ՄԻ ՀՈՎԻԻ»:

Եւ յղացուեցաւ մեծագոյն ոճիրը, - *Սպաննել զայն...:*

Ա. «Ովսաննա...»:

«Օրհնութիւն որդոյ Դավթի,

Օրհնեալ որ գայ յանուն Տեառն...

Խաղաղութիւն յերկինս եւ փառք ի բարձունս...»:

Բ. «Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն,

Օրհնեալ որ գալոց ես...»:

Զայնն է Աւետարանին՝ առաջինը, արձագանգն է Շարականին՝ երկրորդը:

Ահա կուգայ «*փառաց Թագաւորը*», նստուկ «*աւանակ - քերովբէի*» վրայ: Այն՝ որ երկնքին կը բազմէր «*ի կառս քերովբեականս*»: Հեզ եւ խոնարհ: Պատկերը Աւետարանինն է, նմանութիւնը Շարականին: Երկուքն ալ արարածներ նոյն Արարչին, - *քերովբէ* եւ *աւանակ*: Ինչո՞ւ արհամարհանքն ու գայթակղութիւնը նախապաշարումին:

Բայց սա անուանակոչո՞ւմը, - «*Որդի Դավթի...*»:

Զէ՛ որ տէրն է Նա անոր, այդ թագաւորակիր քնար-երգողին, մարգարեական շունչով ալ օժտուած Նա, այդ

որդին կուգայ երկինքի խաղաղութեամբ եւ բարձունքի փառքով: Կ'իջնէր վերէն, ելլելու համար վարէն յաղթական: Պիտի հասկնար զայս աշխարհ: Ժամանակը պիտի ճանչցնէր անոր: Դեռ պիտի ըլլային, սակայն, յուսախաբութիւններ, վարանումներ, կասկածներ: Ցնծալից ովսաննաները՝ ձիթենիի ոստերով եւ արմաւենիի ճիւղերով ընդառաջող ծերերուն եւ մանուկներուն՝ պիտի փոխուէին խաժամուժ ամբոխին «ի իսպհան» պոռչտութեան: Երկուքն ալ նախատեսութիւն փրկչական: Անտառներու ծաղկազարդուած ծառերու ծափերը՝ պիտի ճայթէին սպառնալից բարձրացած բռունցքներուն մէջ խուժանային դառնապտուղ ծառերուն: Ճշմարտութիւնը հեզնող հոովմայեցի դատաւորը պիտի պարտուէր այդ բռունցքներէն եւ աղմուկներէն:

Բայց դեռ կը թնդան, իւելայեղօրէն ցնծալից ովսաննաները մանուկներուն, այնքան սիրելի՝ Եկողին, դրդելով քաղաքն ամբողջ: Կը լսուին շուարած հարցումներ շրթներէ շրթունք,- *«Ո՛վ է աս»*: *«Նազովրեցին...»*,- կը փափսան ուրիշներ կամ կը քրթմնջեն: *«Չե՛ս լսեր»*, կը մոլտան կատղածներ, ականջն ի վար Անոր. *«չե՛ս լսեր ինչ կ'ըսեն ատոնք: Մաստէ որ լռեն»*: Գիրքը լզողներ, չեն գիտեր, թէ *«մանուկներուն և ծծկերներուն բերնով պիտի կատարուէր օրհնութիւնը»*: Եւ յետոյ, կայ նաեւ *քարերու լեզուն*, եթէ լռեն մարդոց շրթները:

Եւ կը ցնծան ծափերով *«ծառերն անտառին»*, ոստերը ձիթենիներուն եւ ճիւղերն արմաւենիներուն՝

երկինքէն իջած խաղաղութեամբ եւ բարձրէն ծագած փառքով: Կը ցնծան այս ծառերն ալ ծաղկազարդ՝ մանուկներուն օրինաբան: Կ'անցնի, այս բոլորին մէջէն, Շունչը կենդանաբաշխ, դեպ ի գագաթը մահուան, դեպ ի այն «*փայտը*»՝ որ արիւնով պիտի ռոռգուի, ծաղկազարդուի եւ պտղաբերուի փրկութեամբ: ԾԱՂԿԱ-ՉԱՐԴՆ Է այն մեր Եկեղեցիին, *Ծաղիկներո՛ւ Կիւրակէ՛*: Լայ եկեղեցիներու համար:

Ինչո՞ւ տեսնել հեթանոսօրէն բուրում մը այս ծաղկազարդումին մէջ: Չգմայլեցա՛ւ ինք՝ Յաղթականը, դաշտի շուշանին վրայ, զգեստաւորուած աւելի փառաւոր քան Սողոմոն իր բովանդակ պերճանքին մէջ: Գիտէ Շարականը, հայ հոգիէն ներշնչուած, տալ այդ գալուստին եւ մուտքին՝ ամենէն գեղեցիկ նկարագրականը՝ Աւետարանէն քաղուած:

Ընտելեցէք, սակայն, թափօրին Բեթանիայէն մինչեւ Երուսաղէմի ճամբու երկայնքին: Ահա Նա, յարուցանողը չորեքօրեայ մեռեալին: Վկայ է ամբոխը, որ անգիտակցաբար կ'առաջնորդէ զինք Գողգոթայի փառքին: Երկրորդ անգամ մըն ալ պիտի տանի զինք հոն տարբեր աղաղակներով: Ամբոխի հոգեբանութիւն: Կը ճանչնայ Նա զայն, Նա՛ այժմ փառաւորուողը: Երուսաղէմ կը հովանաւորէ ու կը գրգռէ այս ամբոխը, քահանայապետներ, դպիրներ ու փարիսեցիներ: Կը նայի այդ քաղաքին՝ Ձիթենեաց լեռնէն: Կը պարզուի աչքին առջեւ իր լման ողբերգութեամբ՝ որ կը պատրաստուի: Ինչպէս գուրգուրացեր էր անոր վրայ, ինչպէս

հան իր թեւերով՝ ձագուկներուն վրայ: Եւ երկրորդ անգամ աղիքները կը գալարուին եւ գուլթը կ'արտասուէ,- «*Երուսաղէմ, Երուսաղէմ...»*»:

Ան չճանչցաւ իր «*այցելութեան ժամանակը*»: Ծածկունեցաւ իր աչքերէն *խաղաղութիւնը*: Պիտի գան թշնամիները, պատնէշ պիտի քաշեն իր շուրջը, պիտի պաշարեն զինք: Պիտի նեղուի ամեն կողմէ: Պիտի յատակեն զինք իր որդիներով եւ պիտի չթողուն հոն քար քարի վրայ:

Երեսուն եօթը տարիներ յետոյ պիտի կատարուէր այս մարգարէութիւնը:

Եւ ահա այս ամբոխին մէջ օտարականներ եւս: «*Հէթանոսներ*», որ եկեր են հեռաւոր երկիրէ՝ ի տես Յիսուսին: Հայե՛ր ասոնք՝ այնքան լուսասէր,- այսպէս կ'ենթադրէ աւանդութիւն մը: Տեսա՛ն,- չենք գիտեր: Բայց գոհ է Յիսուս: Վասնզի կը նկատէր, որ «*հասած էր ժամը, որ փառաւորուի Մարդու Որդին*»: Ինչպէս կարող էին չփառաւորել «*ԼՈՅՍԸ*»՝ որ եկեր էր աշխարհ: Իրենք ալ պիտի չունենայի՛ն, Էջքովն այդ *Միածին Որդին*, իրենց «*ԼՈՒՍԱԽՈՐԱՆԸ*»: Գուցէ առաջին լուսաբերները, այս անձանօթ ուխտաւորները, առաջնորդուած Լոյրսի համբաւէն: Չէ՞ որ եկեր էին *Յիսուսը տեսնելու*: Եւ հաւատացեր էին անոր: Եւ տարեր էին իրենց հետ «*ցորենահատը*» *Լոյսին*՝ նետելու համար զայն նաեւ հայ հողին վրայ: Պիտի ծլէր, աճէր եւ հասկ կազմէր ակաղձուն:

Ալ ցրուած էր ամբոխը: Կար ուրիշ ամբոխ մը տա-  
ճարին մէջ: Աղօթքի Տունը, որ դարձեր էր *«աւա-  
զակներու այր»*: Այս Տունը կը կարօտէր *խարազանի* մը,  
փոխանակ *աւելի*: Եւ խարազանը կատարեց մաքրա-  
գործումը: *«Ի՞նչ իշխանութեամբ»*. դէմ ելան կարծեցեալ  
իշխանաւորները: Ոչ իսկ պատասխանի արժանի: Այն  
որ կանգնած է հոն տիրաբար, մեծ է քան մեծագօր  
Սողոմոնը՝ որ այդ տաճարն է կերտեր:

Եւ *«ո՛րպիսի քարեր, ո՛րպիսի շինուածք»*, այդ շքեղ  
տաճարը.....: Չըսա՛ւ, սակայն, թէ քար քարի վրայ պիտի  
չմնայ անկէ: Բայց պիտի շինուի նոր տաճար մը, երեք  
օրէն, հինին փլատակներուն վրայ: Նոր տաճար մը  
անձեռագործ.....:

## Ը. Աւագ Հինգշաբթի. Վերջին Ընթրիք

Ցանկանալով ցանկացեր էր ուտելու վերջին գա-  
տիկը իրեններուն հետ: Գիտեր, թէ հասեր է ժամը փո-  
խադրուելու այս աշխարհէն դէպ ի Հայր: *«Սիրեաց  
գիրտն՝ որ յաշխարհի աստ են, ի սպառ սիրեաց գնո-  
սա»*: Սրտի ճմլո՛ւմ մը՝ զոր կ'զգար մարդն իր մէջ, թէ՛  
բերկրալից յուզում մը՝ զոր կ'ունենար Աստուածն իր  
մէջ: Երկուքը միանգամայն անշուշտ:

Չարդարուած մեծ վերնատուն մը, սեղան մը գատ-  
կական գառով, բաղարջ հացով եւ անապակ գինիով:



Մագնիսուած էր մթնոլորտը ուրախութեամբ եւ տրտմութեամբ: Նախագգացում մը լոյսով եւ ստուերով: Այլակերպութիւն մը այս անգամ անոր բոլոր արտայայտութիւններուն մէջ: Աչքէն մինչեւ շարժումները: Լուրջ ու խոհուն՝ գուարթախառն: Խօսակցութիւններ երկչոտ՝ աշակերտներուն միջեւ, վիճաբանութեան շեշտն առած, շրթներէ շրթունք եւ ականջներէ ականջ: Մերթ մեղմ եւ մերթ գրեթէ լսելի: Նա գիտէր, թէ ինչ կը կրէ մարդն իր մէջ: Պիտի տայ իր վերջին դասը: Նաեւ իր կտակը:

Եւ ահա յանկարծ կոնքին առջեւ ինք՝ սփածանելին մէջքին: Չէ՛ որ առած էր «կերպարանքը ծառայի»: ՄԵԾԸ, պզտիկցած մեծութեան ցանկացող փոքրերուն դիմաց: Մաքուր Գլուխը, որ կը լուայ աղտոտ ոտքեր՝ մաքրելու համար նաեւ զանոնք: Հպարտութիւնը մեծութեան՝ իջեցնելու փոքրկութեան խոնարհութեան: Միայն երկուքը տասներկուքէն՝ չըմբռնեցին խորհուրդն այս արարողութեան, - մէկը՝ արկղակալը, մոայլադէմ եւ միւսը՝ տարեցը զարհուրած ու շուարուն, այս դասը պարզ ու վսեմ: Տէրն ու վարդապետը ծունկի եկած ծառաներու եւ աշակերտներու առջե՛ւ...:

Սպասաւո՞ր...,- յաւիտեան պիտի չլուսա իմ ոտքերս», - եղաւ կտրուկ մերժումը երեցին:

Եթէ չլուամ, դու մաս չունիս ինձի հետ:

Տէր, ոչ միայն ոտքերս, այլ նաեւ ձեռքերս ու գլուխս:

Լուացուածը պետք չունի լուացումի. ոտքի լուացումն է կարեւորը: Դուք ալ մաքուր էք, բայց ոչ բոլորդ...:

Ոչինչ հասկցան աշակերտները: Միայն կնճիռ մը վողթիողթեցաւ ճակտին վրայ արկղակալին: Բայց ճնշուած ու ճմլուած էին նաեւ սիրտերը միւսներուն:

«Սպասաւորը», մաքրագործ այս լւացումէն յետոյ, դէնջակը հանելով՝ հագաւ իր զգեստը եւ դարձեալ բազմեցաւ, շրջապատուած տասներկուքով: Դէմքերը դարձեալ զուարթացան Չատիկի յուշերով: Մէկը միայն կար մոռայլ ու կախ-դէմք: Վառուած էին մոմերը, տասնեւմէկը մեղրէ, միւսը... կուպրէ՛: Ո՛ր աչքը պիտի կրնար գատորոշել պլպլանքին մէջէն լեզուացած ու թրթռուն լոյսին: Իսկ վարդապետի՞ն դէմքը, ի՛ր լոյսը, - երկնային, անշուշտ, խառն երկրայինով: Տրտմանո՛յ՛ իր նայուածքը խորաթափանց եւ առինքնող: Պիտի ունենար զայն՝ գիշերը, Գեթսեմանիի պարտեզին մէջ, լուսնէն մաղուած շողերու սարսուտին մէջ:

Կը բացատրուի խորհուրդը լուացումի,- խոնարհութիւն եւ ծառայութիւն, պայման բարձրացումի եւ մեծութեան: Տէրը՝ ծառայ, ուսուցիչը՝ ուսանող: Մաքրել աղտը հպարտութեան եւ յաւակնութեան, որպէսզի ոտքերը կարենան քալել ճշմարտութեան եւ կեանքի ճամբէն անսայթաք:

Եւ ահա պահը այլապէս խորհրդաւոր:

Կ'ուտեն գառը զատկական՝ թաթղելով հացը սկաւառակին մէջ եւ կը խմեն գինին բաժակին: Բայց ի՞նչ հաց, ի՞նչ գինի: Օրէնքին ստուերը վերածուած է Շնորհաց լոյսին: Հին Ուխտը՝ *Նոր Ուխտի*: Անխմոր հացը «մարմին» եղած, անապակ գինին՝ «արիւն», շատերու

*համար քաշխուած ու թափուած:* Ով որ ուտէ այդ մարմինը եւ խմէ այդ արիւնը՝ պիտի ունենայ կեանքը յաւիտենական, միացած ըլլալով Յիսուսի մարդկային եւ աստուածային անձին: Անապատի «*մանանա*»-էն աւելի, «*կենդանի հացն*» է այն երկնէջ:

«Մատիք առ Տէր եւ առէք զոյս պլուրիա.

ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է Տէր. ա լելուիա»:

Հրաւեր-երգն է այս Հայ Եկեղեցիին՝ իր պատարագի աւարտումին: Ճաշակել քաղցրութիւնը Տիրոջ՝ Անոր լոյսի մէջէն:

Հեթանոսական մարդակերութիւն, թե՛ քրիստոնէական աստուածակերութիւն:

«*Խիստ է այդ խօսքը, ո՛վ կարող է լսել ատոր*», - արտայայտուեր էին օր մը գայթակղելով՝ միամիտներ կամ թերահաւատներ, երբ Նա կեանքի պայման էր դրեր ճաշակումն իր մարմինին եւ արբումն իր արիւնին: Բայց իր խօսքը «*հոգի*» էր եւ «*կեանք*»: Իր հոգին, իր կեանքը: ՍԷՐԸ ԾԱՅՐԱԳՈՅՆ ԵՒ ՉՈՀԱԲԵՐՈՒՈՂ: Ուրեմն՝ *աստուածակերութիւն*, իսկապէս. տուէք բառին իր խորունկ իմաստը,- *Ապրիլ ու գործել որպէս աստուածներ*, համաձայն հարազատ պատկերին՝ որ դրոշմուած է մեր մէջ Աստուծոյ շունչով: *Իւրացնել, իւրաշրջել մեր մէջ յայտնուած Աստուածը, աստուածայինը: Հազնիլ Քրիստոսը, տպաւորել Անոր նկարագիրը մեր էութեան մէջ:* Այսպէս պիտի ընէր օր մը՝ առաքեալներու թիւին վրայ աւելցած երեքտասան-երորդը՝ Պօղոս: Եւ այդպէս պիտի քարոզէր:

Քայց ահա սարսուռ մը յանկարծ պիտի պատե  
բոլոր սեղանակիցները, բաց ի մէկէն թերեւս:

*«Ասկից վերջ, ալ պիտի չխմեմ որթի բերքէն, մինչեւ  
այն օրը՝ երբ պիտի խմեմ զայն ձեզի հետ Հօրս թա-  
գաւորութեան մէջ...»: Ըսեմ, սակայն, ձեզի... ձենէ մէկը  
պիտի մատնէ զիս...»:* Քարացում, զարհուրանք, շուա-  
րում դէմքէ դէմք, եւ հարցական նշաններ աչքէ աչք:  
Կար միայն մէկը ակնկոր: Անհանգիստ ակնարկ մը  
Պետրոսէն Յովհաննէսին՝ որ մօտն էր նստած Յի-  
սուսին: Հակած տրտմօրէն լանջքին վրայ զինք սիրող  
վարդապետին՝ կը շնչէ աղերսագին անոր ականջն ի  
վար. *«Տէր, ո՛վ է»:* - *«Այն է, կը պատասխանէ անայլայլ,  
որուն կուտամ թաթաղուն պատառը զատկական»:* Եւ  
պատառը կուտայ արկղակալին, ըսելով. *«Ըրէ այժմ ինչ  
որ պիտի ընես»:* *«Մերկացած էր աստուածային Ս.  
Հոգին եւ զգեցած աստանան»:*, որ խարքալած էր զայն:  
Դուրս նետուեցաւ վերնատունէն: Իսկարիովտացի Յու-  
դան էր, *«կորստեան որդին»:*

Ապա իր ԿՏԱԿԸ, ամփոփուած նախադասութեան  
մը մէջ,- *«ՍԻՐԵՑԷՔ ԶԻՐԱՐ»*, եւ խտացած մէկ բառի  
մէջ,- *«ՍԷՐ»:*

Ա՛րդեօք *«արծաթսիրութեան մոլուցքն»* էր, որ մղեց  
Յուդան երեսուն արծաթով եւ կեղծ համբոյրով մը  
մատնելու իր վարդապետը...: Այդպէս մեկնեցին իր  
ընկերները: Այդպէս աւանդեցին դարերը: Իսկ  
կատարուած անձնասպանութի՛նը յուսահատու-  
թեամբ կամ յուսախաբութեամբ: Իսկ խիղճը, որ

արթնցաւ իր մէջ եւ ըսել տուաւ իրեն. «Մեղայ, զի մատնեցի զարիւն արդար»: Եւ արծաթը՝ նետուած տաճարին մէջ՝ քահանայապետներու երեսին: Մեղքը եւ խեղդը: Խաչին դասը...: Յետոյ, Բաժակը, զոր տուած էր իրեն իր Հայրը, պիտի չխմէ՞ր զայն: Լաւ է, սակայն, որ վճիռը թողունք Խաչեցեալին: ՍԷՐ-ԽԱՉԵՑԵԱԼԻՆ:

### **Թ. Աւագ Ուրբաթ. Չարչարանք եւ Խաչելութիւն**

Ունինք քառեակ պատմութիւնը աստուածային ողբերգութեան: Տանք նկարագրութիւնը այն անզուգական ողբերգակին՝ որ, տասը դարեր առաջ եւ ողբերգութենէն տասը դար յետոյ, օր մը իր աչքերովն իսկ տեսեր էր արեւազալի շողերուն մէջէն, աստուածային Մանուկը, գիրկին մէջ իր Մօրկան՝ *ծովին մէջ ծաւալող ծիծաղախիտ ծով աչքերով*: Ապա, «*օրինարանեալ օր*» մ'ալ, Աւագ Ուրբաթի գիշերը, «*բարեպատեհ ժամն*» էր հասեր՝ գրելու, «*զուարճախառն երկիւղի*» իր «*նուագ ձայնի հեծութեան*»ը: Այո, աստուածախօս Նարեկացին միայն պիտի կրնար գտնել, իւրայատուկ ներշնչումով ու զեղումով, իմաստն այդ «*մեծ Պասեթի Ուրբաթ*»ին, - *Չուարճախառն երկիւղի*»: Համեմատեցէք մեր «խաւարման Գիշերը» տրտմախառն՝ այս լուսագուարթ յղացումին հետ:

«Ի խորոց սրտի՝ խօսք ընդ Աստուծոյ»:

## Ժ. Աւագ Շաբաթ. «Թաղում»

Ջնջուած է անէծքն առաջին,- «*Հող էիր եւ հողին դառնաս*»: Ինչո՞ւ չէ յիշած Գիրքը, ի՞նչ պիտի ըլլար այն «*շունչը*»՝ զոր Կերտողը փչած էր հողակերտ մարմնին մէջ եւ որ եղած էր անոր «*կենդանի հոգին*»: Ջնջելի՞ էր՝ ինչ որ բխած էր իրմէ,- *յաւիտենականը*:

Թող թաղուի հողեղէնին մէջ տաղաւարուած ԲԱՆՆ ալ, «*Լոյսը՝ Լոյսէն, Աստուածը՝ Աստուծմէն եւ ճշմարիտ Աստուածը՝ ճշմարիտ Աստուծմէն*»: «*Հաւատամքը*» մեր, հաւատամքն ընդհանրական: ԼՈՅՍ եւ ԱՍՏՈՒԿԾ՝, մնացածը հասկանալի եւ համբուրելի է: Նետուած է հողին՝ «*ցորենահատը*» *Լոյսին*: Ունի մեր հոգին հաւատաւոր սպասումը վերագարթնումի յոյսին:

Լսեցէք, սակայն, հիմակ, աղու ձայնը՝ դարերէն արձագանգած՝ «մահկանացու ծնած եւ անմահ յիշատակ թողուցած»՝ Սահակ Պարթեւ հայրապետին՝ շարականին մէջէն.

«Պարգեւատուն ամենեցուն՝ այսօր պարգ եւ կը խնդրուի Պիղատոսէն,

Եւ լոյսն իր վրայ իբրեւ օթոց առնողը՝ կը հաւանի որ Յովսէփ զինք պատանէ:

Կենդանատուն ամենեցուն՝ այսօր կ'դրուի նոր գերեզմանի մեջ,

Եւ անմահութեան գանձը կը կնքուի մատանիովը քահանաներուն:

Քրիստոս՝ փրկութիւնն արարածներուն՝ դրուեցաւ վեմին մեջ դեռ նոր փորուած,

Այն՝ զոր երկինքի զօրքերը բոլոր կ'օրհնեն երգածայն՝ կը պահպանուի զինուորներէն:

Քրիստոս՝ կենդանին յաւիտենական՝ այս օր իբր մեռեալ կը խնդրուի Պիղատոսնէ,

Եւ Ադամի մերկութեան ծածկոյթն՝ պատանուիլ յանձրն կ'առնէ Յովսէփէն:

Քրիստոս՝ պըտուղն անմահութեան՝ այսօր ահա խոնարհեցաւ հողի մահուան,

Եւ անմատչելի լոյսին մեջ բնակողն՝ երկրի սիրտին մեջ թաղուեցաւ մարմնով:

Քրիստոս՝ արեգակը արդարութեան՝ կը դրուի այսօր գուբին մեջ ստուերոտ,

Այն որ ճառագայթն էր Հօրը փառքին՝ կը ծածկըլի հողին մեջ վեմով:

Քրիստոս՝ կուսածին մարմինով այսօր կոյս գերեզմանի մեջ գետեղուեցաւ,

Այն որ լուծիչն էր դժոխքի երկունքին՝ կը կնքըւի մատանիովը քահանաներուն:

Արթուն բնութեամբ արարիչը ամենուն՝ այսօր կը ննջէ գերեզմանին մէջ,

Այն որ Իսրայելն անքուն կը պահէ՝ զինուորներէն ինք կը պահպանուի:

Քրիստոս՝ ցնծութիւնն արարածներուն՝ այսօր իբր մեռեալ կ'արտասուի տրտնազգեացներէն,

Եւ այն որ բուրումն է անմահութեան՝ կը խնդրըկ զգաստ իւղաբերներէն:

Եւ երկու օր եւս .....

## ԺԱ. Չ Ա Տ Ի Կ

Երրորդ օրը: Արեւազալն է Միաշաբաթին: Գերեզման են փութացեր խումբ մը բարեպաշտ կիներ կսկիծն ու սուգը կուրծքերուն, մութ ու լոյս երազներու թելերով: Բերեր են իւղն ու խունկը իրենց վիրաւոր սիրոյն, օծումով անուշահոտելու Անոր մարմինն անապական: Մօտեցեր են վեմին՝ տրոփումներովն իրենց սրտին: Ծանր է քարը կափարիչ, որ, ով զարմանք, զլորած է: Պահնորդ զինուորներ փախուստ են տուեր սարսափահար: Գերեզմանն է թափուր: Տեսիլներ



«փայլակնաձեւ» հրեշտակներու: Աւետաւոր ձայներ  
յարութեան: Հիացում եւ երկիւղ: Ո՞ր է. գողցուա՞ծ է...:

Եւ ահա յարուցեալն իր «փառաւորեալ» մարմնով:  
«Ինչո՞ւ կուլաս, ո՞վ կը փնտրես...»: Պահապա՛նն է ...:  
Շուարումը թափառայած երեւակայութեան: «Տէր,  
դո՞ւն վերցուցիր, ո՞ւր դրիր, ըսէ ինձի, որ առնեմ  
զայն...»: «Մարիամ...»: Ա ... Ան է ... ձայնն է Անոր...  
«Տաքբունի... Բայց պիտի չկրնայ մօտենալ Անոր: Պիտի  
ելլէ հոն՝ ուսկից իջած էր. իր եւ անոնց Հօր մօտ, իր եւ  
անոնց Աստուծոյ մօտ...: Եւ ահա կ'անգայտանայ ա-  
րեւածագի լոյսին մէջ ու կ'անյայտնայ: ԻԵ՛լայեղ՝ գե-  
րեզմանէն դուրս, մօտն անոնց՝ որոնք դէռ դառն տպա-  
ւորութեան տակ են առջի օրուան ողբերգութեան: Եր-  
կուքը վազն ի վազ դէպ ի գերեզման: Ի զուր փնտռտուք  
մեռելներուն մէջ: «Հոս չէ, յարեալ...» Չէ՛ք տեսներ պա-  
րապութիւնը: Լոյս գերեզմանը, որ կեանքն է պտղա-  
բերած լոյս-ցորենահատէն:

Լեցուցէք ձեր սրտերը հաւատքով:

Վերելք մ'է միշտ մարդկային կեանքը՝ օրօրոցէն  
մինչեւ գերեզման: Վայրէջքը մարմնին՝ սրտին մէջ երկ-  
րին: Վերելքը հոգւոյն՝ դէպ ի կայանքն երկնքին: Դէպ ի  
հոն՝ ուր կոչուած է ծնունդէն սկսած: Կ'անգիտանանք  
մահը՝ որ յաղթահարուած է կեանքով: Այս անգամ ոչ թէ  
Ժամանակաւոր, այլ յաւիտենական: Անիմաստ է Ժամա-  
նակը: Ան ոչ լուսինով կը չափուի, ոչ արեւով, եւ ոչ ալ  
աստղերու բոյլքերով: Նեղ չէ անոր հորիզոնը: Ան չէ  
գծուած սահմանով: Ժամանակը կը կլլէ իր զաւակները:

Այդ է երեւոյթը: Այսպէս կը խօսին շիրիմները տրտմա-  
զգեաց: Հակառակ, սակայն, խաչերուն՝ յոյսի, յոյսի  
թելերով տարածուած անոնց վրայ: Իսկ խունկը, իւղն  
ու աղօ՞թքը- ոգեկոչումը հոգիներու հանգիստին: Կը  
խայտա՞ն ոսկրոտիները թեթել թէ ծանր հողին տակ:  
Ա՛հ, անդին պարապ գերեզմանը կայ Լոյսին: Տեսա՛՞ծ էք  
լուսահանները, վառ մոմախուրճերու բոցերով ոգեւոր-  
ուած ու զուարթացած: «*Լո՛յս գուարթ...»*»:

Եւ չէ՞ք տեսած կամ լսած էջքը լուսագունդերու  
հողակոյտերու վրայ կամ ելքն անոնց ասոնցմէ վեր: Մի  
հաւատաք նախապաշարումին կամ բներեւոյթին, մի  
երես դարձնէք գիտութեան ալ յոյսին, բայց հաւատա-  
ցէք նոյնինքն հաւատքին՝ որ կը տեսնէ էջքն ու ելքը  
անվախճան կեանքին: Գիտէ, թէ չի մնար յոյսը գերեզ-  
մանին մէջ, ոչ ալ ցորենահատը թաղուած հողին տակ:  
Կեանքը միշտ վերելք, անդադար աւելի վեր, դէպ ի  
աղբիւրը անսպառ Լոյսին:

Լսեցիք յանդիմանական հարցումը «*լուսապայծառ  
հրեշտակ*»ին,- «*Չի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս...  
Չէ աստ, այլ յարեա՛լ...»*»:

Եւ աւետաւոր այս ձայնը չի՞ հնչեր քաղցր մեր  
ականջին, ամէն անգամ որ գլխահակ եւ ինքնամփոփ,  
աղօթքի մրմունջը մեր սրտին մէջ, կը կանգնինք  
հողակոյտի մը կամ շիրիմի մը առջեւ: Ո՞ր է, սակայն,  
խորհրդաւորութիւնը լոյսեան, արշալոյսով կամ վեր-  
ջալոյսով ըզգածուած, հրաժարած հոգիին հետ յոյսով  
թելախառնուած: Ո՞ր է խոկը «*սրտի լոյսեան*» արա-

րողական արտաքին շքեղանքին մեջ, ուր հոգին կը դատարկուի: Սրտի զուարթ լոյսը, փունջ մը ծաղիկներու եւ պտղուց մը խունկերու բուրումներով եւ աղօթքի մը շշուկով լեզու առած,- կա՛յ ասկէ աւելի սրտառուչ արարողութիւն՝ խորո՛ւնկ հաւատքէն թելադրուած:

Յուսահատ արցո՛ւնքը մահուան աւարին վրայ,- լսեցէք ձայնն զգաստացուցիչ, զարթուցիչ եւ զուարթացուցիչ. «*Չի՞ լաս, զո՞ խնդրես*»: «*Պահապանը*» չէ այն, ոչ ալ մահկանացու մը, այլ նոյն ինքն Յարուցեալն ու Յարուցիչը: Կայ խաչերուն ալ անբարբառ լեզուն՝ աւետաւոր, սրտապնդիչ, խորհրդագգած,- *Այն որ իջաւ՝ պիտի ելլէ*: Եւ ո՛վ կ'ուրանայ իր աստուածային ծագումը: Թող պատմեն ձեզի արեւագալի կիները՝ խնկազգեստ, իւղաբեր: Թող պատմէ այն՝ որ վերադարձեր է ցնծութեամբ, առաջին անգամ տեսած ըլլալով զինք: «*Տեսիլ*», այո, կեանքէն լուսարձակուած, այնքան իրական, այնքան ճշմարիտ:

Իսկ ՉԱՏԻ՛ԿԸ,- մեր «հեշտ բարբառ»էն ընտրուած, մերը եղած: Չի՞ տար ան մեզի գերութեան մը գաղափարը: Գերութեան՝ ոչ մարմինի, այլ հոգիի: Քիչ մը բոլորս շղթայուած այն բռնաւոր ոյժէն՝ որ կը կոչուի ՄԵՂԶ: Եւ ասոր պտուղը՝ ՄԱՀ: Այն, որ իջաւ վերէն՝ իջաւ այս մեղքին համար եւ այս մահուան համար: Ազատարարը՝ ճշմարտութեամբ: «*Մեր Չատիկը*», - որ «*զենուեցաւ*» *ազատելու* համար զմեզ մեղքէն ու մահէն, *զատելու* համար զմեզ մեղապարտ եւ մահացուցիչ բերումներէ եւ կիրքերէ: Անցունելու համար զմեզ հուրէն

ու ջուրեն եւ հանելու վայրն հանգիստի: Չէ՞ որ փոթորկալից է մեր ծովը՝ մեղքի հովերեն խոռվուած եւ ալէկոծուած: Չեմ ըսեր աշխարհ-ծովը, այլ մարդ-ծովը: Պատերազմները, եղբայրասպան կոհիւները, կործանումները,- ասոնք բոլորը ծնունդ կ'առնեն մարդէն, անհատէն եւ կ'ընդհանրանան դառնալով ընտանեկան, ընկերային, ցեղային, ազգային եւ միջազգային, համաշխարհային:

Ո՞վ պիտի *ազատ*է զմեզ այս բոլորէն, ո՞վ պիտի տայ մեզի «*մեր Չատիկը*», - Հողին Անոր՝ որ սրտապնդած է զմեզ՝ ըսելով. «*Քաջալերուեցէք, զի ես յաղթեցի աշխարհի*»: Այո, ունինք մենք յաղթութեան զէնքը,- ԽԱԶԸ: Չոհարանը արիւնով եւ անարիւն: Ճշմարտութեան եւ արդարութեան համար մահացածները՝ որ կը կենդանանան, յարութիւն կ'առնեն անմահութեամբ:

Այս յաղթութեան, ազատագրութեան տօնն է ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿԸ, ոչ հեթանոսական *Կրակ-Արեւին*, այլ քրիստոնէական *ՀՈՒՐ-ԱՐԵԳԱԿին*, *ԼՈՅՍ-ՍԷՐին*, որով կեանքը՝ մերկանալով խաւարէն՝ կը յայտնուի յաւիտենական ճշմարտութեան պայծառութեամբ: Անմահութիւնը առասպել մը չէ, ոչ ալ առեղծուած մը անլուծելի, վասնզի ինք Աստուած ոչ առասպել է եւ ոչ առեղծուած՝ ըստ մեր կենդանի հաւատքին. նոյնն է եւ մարդը՝ Անոր պատկերն ու նմանութիւնը»: Յաւիտենական է Արարիչ-Աստուած, յաւիտենական է արարած-մարդը:

Գիտութի՛ւնը,- բա՛ն մը կը կորսնցնէ անոր լոյսը այս ճշմարտութենէն՝ որ հաւատքէն կ'առնէ իր լոյսը: Գի-

տութիւնը կը յաւակնի՝ լուծել ամբողջապէս, սպառիչ կերպով բազմաբովանդակ Խորհուրդը տիեզերական: Սպառել ամէն ինչ՝ զոր ան կը ծածկէ իր մէջ իբրեւ անտեսանելի *հրողութիւններ*: Իսկ հաւատքն ալ ունի իր լոյսը, անկախ գիտութեան լոյսէն՝ զոր չ'արհամարհեր: Հաւատք եւ գիտութիւն, ձեռն ի ձեռն, կուտան մեզի ճՇՄԱՐԻՏ ՉԱՏԻԿԸ:

Եւ ահա քերթողաշունչ քնարը մեր Մովսէսին, մէկը հատիկներէն մեր շարականի թանկագին մարգարիտներէն.-

«Այսօր յարեաւ մեռելներէն ՓԵՍԱՆ անմահ եւ երկնաւոր,

Քեզ աւետիս խնդութեան, ով ՀԱՐՄՆ երկրէ՝  
Եկեղեցի:

Այսօր անճառ Լոյսը Լոյսէն լուսաւորեց քու  
մանուկներդ,

Լուսաւորուէ, Երուսաղէմ, քանզի յարեաւ լոյսը՝  
Քրիստոս:

Այսօր խաւարն անգիտութեան հալածուեցաւ  
երբեակ Լոյսով,

Քեզ ծագեցաւ լոյս գիտութեան, որ է Քրիստոս,  
յարուցեալը մեռելներէն:

Այսօր մեր Չատիկն Է՝ զենումով Քրիստոսի,

Տօն կատարենք ցնծութեամբ՝ նորոգուած ներլս  
մեղքերու հնութենէն:

Այսօր մենք ալ զուարճացած՝ պայծառանանք այս  
տօնով,

Հաշտութեան հետ Աստուած՝ մենք ալ սիրով  
գիրկընդխառնուինք,  
Եւ գոչենք միաբերան,-

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱ՛Ւ Ի ՄԵՌԵԼՈՑ.

ԼՈ՛ՅՍ ԾԱԳԵՑԱԻ ԱՐԱՐԱԾՈՑ...:



**ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ**

**ԽՕՍՔԵՐ**

Ամենայնստ

Մ. Մ. Կոպիտի Ա. Ազիզյան Գրասեն

Պատկերակ Ազգայն Ա. Կոմունիստ

Կոմունիստ

Ամենայնստ Արեւելի Ազգայն

Ձեր Ամենայնստ Արեւելի Ազգայն Գրասեն 25 թ. և 9083-11

Այս պարբերականում ձեր հոդվածը մեզ շատ անհաշիվ մեծ հետաքրքրություն է առաջացրել։ Արեւելի Ազգայն Գրասեն արժ. Մ. Անանյանի «Կոմունիստ» ամսականում կարող եմ ասել, որ «տեղի տալով համարժեցիկ դրամային ինքնակազմակերպությանը, փակված է զարգացման ճանճը»: Դրանով ինքնակազմակերպությունը պարզապես ոչ պարզապես:

Գրանցվածությունը չունի ձեր Ազգայնի Կոմունիստ ամսականի այս ժամանակ համար, ինչպես որ Արեւելի Ազգայնի ամսականի պետի պետությանը ինքնակազմակերպությանը անհամարժեցիկ զարգացմանը և ինքնակազմակերպությանը անհամարժեցիկ զարգացմանը: Դրանով ինքնակազմակերպությունը անհամարժեցիկ զարգացմանը և ինքնակազմակերպությանը անհամարժեցիկ զարգացմանը:

Կհ Կոմունիստ թե ձեր հոդվածում ինքնակազմակերպությանը անհամարժեցիկ զարգացմանը և ինքնակազմակերպությանը անհամարժեցիկ զարգացմանը:

Արժ. Մ. Անանյան անհամարժեցիկ զարգացմանը և ինքնակազմակերպությանը անհամարժեցիկ զարգացմանը:

1929, Ապրիլ

Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գարեգին Եպս.-ի ձեռագիր նամակը Ս. Երուսաղեմի Պատրիարք Եղիշէ Արք. Դուրեանին, 1929 թ.: Առաջնորդարանի արխիւ, թղթածրար 1928-1933:



## Հ Ա Յ Տ ՈՒ Ն

Սրտի խորերեն խօսք մըն է այն, ուղղուած քեզի ո՛վ Հայ Տուն, որ հայրենի երկրի յոյզերն ու յուզումները, յուշերն ու ներշնչումները, դարերու անջնջելի դրոշմը կրող հայեցի կենցաղին շունչն ու շնորհն ունի իրեն իբրեւ հիմնաստին: *Նահապետական կեանքը*, զոր քու նախնիքդ դարբնեցին քու սեղանիդ վրայ ու սեղանիդ շուրջ վսեմօրէն պարզ ու ջերմիկ սիրոյ մը կրակով – քու օճախներովդ ու թոնիրներովդ նուիրագործուած, դուն զայն փոխադրեցիր, ցաւագին օրերու բերումով, հին աշխարհէն այս նոր աշխարհին մէջ: Ի՞նչ բան կրցար գանձել ու պահել անկից՝ զոր պարտաւոր էիր պահել գուրգուրանքով իբր ազնուագոյն ու առողջ *բունը* անոր, եւ ի՞նչ բան գիտցար քանցել – կտրել ու նետել անկից՝ իբր յոռեգոյն ու փտած *ճիւղերն* անոր:

Գիտես ու կը գնահատես արժէքը այն *ընտանեկան պատիւին* որ քուկդ է եղած, եւ որ գեղուղեշ ձիթենիի մը նման բողբոջեր ու պտղաբերեր է քու մթնոլորտիդ մէջ՝ Աստուծոյ օրհնութեամբը սրբագործուած:

Ամերիկեան HOME-էն առաջ, որուն շփոթ պատկերը կը մթագնէ հիմակ յաճախ քու նայուածքդ, կար ու կայ քու ԵՐԴ-դ, հայրենի եւ մայրենի երդդ ու երդիքդ: Քու լեզուդ հոն հրաշակերտեց իր աղօթքն ու երգը, իր հոգեկան ու մշակութային բոլոր արժէքները, ծնունդ տալով տաղանդներու եւ հանճարներու՝ որոնք պիտականուն քաղաքակրթութիւնները նսեմացնող փայլով

մը քու անունդ հռչակեցին եւ կտակեցին ազգերու յարգանքին: Լոյսը չեղա՞ւ ջահն ու վառարանը քու սրբազան երդիդ, լոյսը Լուսաւորչին ու Սահակ-Մեսրոպներուն, Վարդան-Ղեւոնդներուն եւ Գրիգոր-Ներսէսներուն, որոնք իրենց վերկենցադումներն ունեցան դարերու ընթացքին անընդհատ, եւ ունին այսօր ալ նորածին հայրենիքէն ներս ու դուրս: Այդ Հայրենիքդ իսկ քու աւանդդ չէ՞ր, մերթ անշքացած ու դիմափոխուած եւ այժմ իր աճիւններէն փիւնիկացած, հարազատ պատկերովը իր անփոփոխ Էութեան: Եթէ աճիւններն իսկ Հայրենիքին, ոճիրի շունչովը միշտ միացած բայց ոչ ցնդած ու անէացած, կրցան պահել ու վերակենդանացնել, շունչովը քու ստեղծագործ Ոգիիդ, ինչ որ թանկարժէք մասնիկներն էին քու ժառանգութիւններուդ, ամօթալի բան չէ՞ որ հիմակ, այս օտար այլ հիւրընկալ, քաղաքակիրթ այլ ձեւափոխիչ մթնոլորտին տակ թաղեն հետախաղաղ քու բոլոր այդ սեփականութիւններդ:

Դուն չճանչցար *սպահարզանը* (divorce), որ այստեղ *հոռ*երու սերը կը ծաղրէ եւ դատարաններու սեղաններու առջեւ զայն կը վաճառէ՝ խղճին սաստն իսկ արհամարհելով: Դուն չլսեցիր հոն *օլտ-մէն*-ի երգիծանքը զաւակներու շրթներուն վրայ եւ անոր զկծանքը հայրերու սրտին մէջ, զի պաշտամունքը կար հոն որդիական անխարդախ սիրոյ հանդէպ ծնողաց եւ ծնողներու ծնողաց: Օլտ-մէնը քու *նահապետդ* էր եւ օլտ-ումընը նահապետուիին, որոնք քու բնակիչներդ

*կառավարեցին*: Իմաստութիւնն ու պարկեշտութիւնը եղան հիմերը քու շէնքիդ եւ սկիզբը՝ այդ կառավարութեան:

Դուն չտեսար ձանձրոյթն ու զգուանքը քու անդամներուդ, որ ուզէին ընտանեկան քաղցրութիւնը փոխանակել քու սեմերէդ դուրս կաքաւող, քու սրբութիւններդ արատաւորող եւ ֆիզիկական ու բարոյական կերտուածքներդ քայքայող հաճոյքներու հետ:

Հայ Տուն, անաղարտ պահէ *ինքնութիւնդ*, հայրենի ու մայրենի երդիդ նկարագիրը: Մօտեցիր նաեւ ամերիկեան *հոմ*-ին սրտագին դրացնութեան մը լրջութեամբ: Այդ հոմն ալ իր հին բարի օրերուն ունէր իր բարի աւանդութիւնները, իր օճախը՝ ուր վառ կը պահուէր տաքցնող կրակին հետ մաքուր կենցաղի մը հուրքը, եւ որ հիմակ կիսովի լքուած՝ տուններու զարդն է մնացեր լոկ, կամ յուշարարը մոռցուած օրերու: Հին հոմն ու հին օճախը, - ասոնց մօտեցիր դուն քու երգովդ քու օճախովդ: Իմ խօսքս չէ հին նախապաշարումներուն համար, որոնք զքեզ չար ու բարի ոգիներու սարսափին մէջ կը պահէին, որոնք գուրգուրոտ թելարկութեամբ մը նուիրական քու տանիքիդ տակ պարողներու հոգիները – ԸՆՏԱՆԻՔԸ – բարին ու չարը ծանօթացնող ծառէն սպառնագին կ'զգուշացնէին: Իունկին ու աղօթքին հետ անհաշտ չեն երգն ու պարը, եթէ ողջախոհութիւնն է երկունքին ալ առաջնորդող լոյսը: Զգաստութիւնը ոչ թէ ժխտումը՝ այլ ներդաշնոյթն է մարմինի եւ հոգիի հաճոյքներուն: Քու երդդ, ամերիկ-

եան հոմին հետ, թող մարգարանն ըլլայ այդ ներդաշնոյթին: Ա՛ռ այդ հոմէն ինչ որ կրնաս տալ անոր քեզմէ: Վտարե քեզմէ ինչ որ չես կրնար առնել անկէ: Աւելցուր ինչ որ կը պակսի քեզի, պակսեցուր ինչ որ աւելորդ է քեզի: Բարձրացի՛ր քու սեփական արժանիքներովդ, առանց արհամարհելու ուրիշներունը: Մշակէ՛ զանոնք քու սեփական ջանքերովդ, օգտուելով այն պատեհութիւններէն՝ զորս կուտայ քեզի այս երկիրը: Մի՛ թոյլ տար որ եղծուի դիմագիծդ, այլ փոյթ ըրէ՛ գեղեցկացնել զայն այն բոլոր շնորհներովն ու վայելչութիւններովը՝ որոնք կը բերեն բիւրեղացումն ու ազնուացումը քու հոգիիդ, կամ կը յղկեն ազնուական դրոշմը քու հարազատ նկարագրիդ:

### Հ Ա Յ Ծ Ն Ո Ղ Ք

Հայ Մայր եւ Հայ Հայր, Հայ Տան ճարտարապետներն ու աւանդապահները, տէր ու հաւատարիմ եղէ՛ք ձեր կոչումին: Շատ են ու նուիրուած ձեր պարտականութիւնները, մեծ է եւ լուրջ ձեր պատասխանատուութիւնը՝ իբրեւ ծնող-դաստիարակներ, իբրեւ տածող – մանկավարժներ: *Ծնանիլը* ֆիզիկական սովորական արարք մը չէ լոկ, ամուսնական անկշիռ լծակցութեամբ մը կատարուած: *Ծնանիլը* Տալ մըն է: Տալ լաւագոյնն ու ընտրելագոյնը, զոր հայրն ու մայրը կրցեր են մթերել իրենց մէջ, օրօրանէն մինչեւ հարսանեկան առագաս-

տը, իբր ֆիզիկական, հոգեկան եւ իմացական շնորհներ ու յատկութիւններ: Ծնանիլ՝ կը նշանակէ *կեանքի կոչել* կամ *վերածել* այդ համբարուած ու թաքուն ձիրքերը կամ ոյժերը, նոր *անհատ-մարդ մը կերտել եւ ընկեր-մարդ մը կազմել*, զուգակցութեամբն այն ներգործոյթներուն (energy)՝ որոնք աղբիւրներն ու յայտարարներն են ծնող մօր եւ հօր անհատական եւ ընկերային նկարագրին:

Հայ Հայր եւ Հայ Մայր, լաւ սերտեցէ՛ք ՕՐՕՐՈՑԻ ԽՈՐՀՈՒԲԴԷ: Արթուն եղէ՛ք եւ իմաստուն՝ տեսնելու հոն պատկերը աստուածային ստեղծագործութեան: Ո՛չ անմիտ են, ո՛չ ծիծաղելի մօր երգերուն հետ դաշնաւորուած այն ճօճումները՝ որոնք ապագայի երագներով կը սնուցանեն հրեշտակային նիւրիսն ու քունը նորածին մարդուն: Մանուկին բիբերէն ներս թող թափանցեն ձեր աչքերը՝ ձեր սրտին բովանդակ գեղումներովը, ձեր մտքին բոլոր լոյսերովը: Ձեր կամքին ստեղծագործ ներգօրութեամբը կարողացէք ըսելու դուք ալ - «ԹՈՂ ԼՈՅՍ ԸԼԼԱՅ»: Լոյսը այն մէկին համար՝ որ հրաշալի տիեզերքի մը մանրանկարը պիտի ըլլայ ձեզի եւ ընկերութեան համար: Ներշնչեցէ՛ք անոր կեանքի բոլոր գեղեցկութիւնները՝ որոնցմէ ծնունդ կ'առնէ ԲԱՐԻՆ: Եւ Բարին միակ ճշմարտութիւնն է՝ որուն պետք է արեգդիմէ լոյս-աշխարհ եկող հոգին: Պիտի տաք անոր – այդ հոգիին – ձեր նմանութիւնը: Չգոյշ եղէք անաղարտ պահելու աստուածային այն նմանութիւնը՝ որուն համաձայն ստեղծուած է մարդը մասնաւոր-

րապէս: Այդ մարդը ապրեցուցէ՛ք ու մշակեցէ՛ք միշտ ձեր մէջը, որպէ՛սզի գաւակը՝ որ պիտի ծնիք եւ որ պիտի կրէ ձեր նմանութիւնը, ըլլայ իսկապէս աստուածային մանուկ մը: Հսկեցէք անոր շնչառեւտրութեան իւրաքանչիւր հեւքին, ելեւէջքին վրայ, եւ մի թոյլ տաք որ անոր թոքերէն ներս մտնէ թոյնը բոլոր արտաքին աղտեղութեանց գոլորշիացումներուն, ձեւ ըլլան անոնք թէ շարժում, խօսք թէ գործ: Վասնզի ոչ միայն ան ծնած է ձեր պատկերին ու նմանութեան համաձայն, այլ նաեւ պիտի սնանի ու մեծնայ ձե՛զ նմանելու գրեթէ-անդիմադրելի բնագոյով ու հակամիտութեամբ: Եւ ասոր համար դուք պիտի չկրնաք մեղադրել ձեր ծնունդները, ո՛չ ալ պիտի կրնաք չքմեղացնել զձեզ ծնողներդ, այն անախորժ դիմագծութեան համար՝ որ անո՛նցը պիտի ըլլայ: Մեղաւոր պատկեր մը՝ որուն համար անոնք եւ դուք պիտի տառապիք հաւասարապէս:

Ըսի քիչ վերը թէ ծնող դաստիարակներ եւ տածող-մանկավարժներ էք դուք: Աշխարհ փոքր ուշադրութիւն կ'ընէ այս մեծ իրողութեան: Այն միջավայրը, ուր դուք կ'ապրիք, կը ցաւիմ ազդարարելու թէ մտահոգիչ մէկ խոշոր մասը կը կազմէ դեռ այդ աշխարհին: Այրը երբ հայր կ'ըլլայ եւ կինը՝ մայր, պիտի լաւ գիտնան անգիր տասնաբանեան՝ զոր Արարիչը – իր հայրական եւ մայրական սիրոյ տիեզերական շունչովը – կը դրոշմէ իւրաքանչիւր ծնողի Էութեան խորը: *Ինչ որ կուտաք ծնունդով՝ պիտի մշակէք սնունդով:* Եւ այդ սնունդը կ'ենթադրէ, ֆիզիկական տածումին հետ, նաեւ ու մանա-

լանդ հոգեկան հրահանգումները: Դուք *պիտի դաստիարակեք* հոգին ձեր սրտահատորին, սիրտը ձեր հոգեհատորին, այն աւանդական առաքինութիւններով՝ որոնք կը բնորոշեն մարդկայնական պրիսմակէն անցած հայեցի նկարագիրը: Դուք *պիտի վարժեցնէք* զայն այն բոլոր կերպերուն՝ որոնք ժառանգուած կենցաղի մը հիմնական այլ ազնուական կողմերը կը յայտաբերեն: *Պիտի ընտելացնէք* զայն, ձեր իսկ ձեռքով, այն ամէն եղանակներուն՝ որոնք ձեր ու իրենց անմիջական շրջապատէն, միջավայրէն նոր վարքութարքի մը շինարար ազդեցութիւններն ու ներշնչումները կը բերեն:

Ողբալի պիտի ըլլայ ձեր կացութիւնը, եթէ անկարող ըլլաք պահելու հաւասարակշռութիւնը ձեր եւ ձեր զաւակներու միջեւ:

Շատ են լսուեր գանգատներ՝ ուղղուած նոր սերունդի հասցէին: Ո՞վ ծնաւ, սակայն, զանոնք, ո՞վ տուաւ անոնց իր պատկերն ու նմանութիւնը, ո՞վ տածեց զանոնք ու վարժեցուց: Ամէնէն առաջ դո՛ւք, հայր ու մայր:

## ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՄԱՅՐԸ

Ինչպէս բազմաթիւ ազգերու, նոյնպէս Հայոց մէջ շատ հին է պաշտամունքը կնոջ՝ իբրեւ մօր: Մենք կը գտնենք զայն իր նուիրական պատուանդանին վրայ՝

սկսած անյիշատակ ժամանակներէ: Պատմութիւնը չի տար մեզի փաստեր աւելի լոյսով: Բայց աւանդաբար մեզի հասած դիւցազներգական կամ դիցերգական վիպասանութեանց և բանահիւսութեանց պատառիկներ կամ դիւցազներու և աստուածներու ընծայուած վերադիրներու և ստորոգելիներու մնացորդներ, իրենց թափանցիկ լուսաստուերին մէջէն կը հայթայթեն մեզի այդ փաստերէն որոշ չափով եւ արժէքով:

Ամէն ցեղ, ինչպէս ամէն անհատ, ունի իր սեփական հաւաքական նկարագիրը կամ նկարագրի իւրայատուկ գիծերը: Ժառանգական օրէնքը, գիտական լոյսով, կը բացատրէ ու կը հաստատէ զայդ: Արտաքին ազդեցութիւններ չեն կրնար հիմնական ու յանկարծական փոփոխութիւն մը յառաջ բերել ցեղային նկարագրին մէջ: Զի նկարագիրը, այդպէս ձեւ առած ու ցեղայնացած, դարաւոր փորձառութիւններու և ունակութիւններու կուտակում մըն է, որ շուտով ու դիւրաւ չի տարրալուծուիր և անյայտանար: Այդ տարրերն ըլլան առաքինութիւններ թէ մոլութիւններ, դրական թէ բացասական գիծեր, կը պահեն իրենց հիմնական տիպը գրեթէ անեղծ: Կարենալ ստանալու համար նոր բովանդակութիւն ու տարագ, անոնք կը կարօտին շատ երկար ժամանակի, բազմաթիւ իրերայաջորդ սերունդներու շղթայաւորումի, արտաքին և ներքին հզօր ազդեցութեանց ներգործութեան:

Այս տեսութենէն առաջնորդուած, մենք պիտի փնտռենք *Հայ Կնոջ եւ Մօր* նկարագրի պատկերը



հեթանոսական շրջանին մեջ, գտնելու համար ժառանգական տրամաբանական աղերս մը ասոր և քրիստոնէական շրջանի տուեալներու միջեւ, և յանգելու որքան հնարաւոր է որոշ եզրակացութեան մը՝ որ համապատասխան ըլլայ ճշմարտութեան:

Կեանքն ինքնին անընդհատ չարայարութիւն մըն է ֆիզիկական և հոգեկան երեւոյթներու և իրողութիւններու: Ոչինչ կայ նոր՝ ըստ Էութեան: Կան միայն նախատրամադրութիւններ, «ծլական» կարելիութիւններ, որոնք, շնորհիւ նպաստաւոր պայմաններու, կը վերածուին հետզհետէ կեանքի: Ոչինչէ՛ ոչինչ կը գոյանայ: Ներկայի մարդը՝ իր բոլոր առաւելութիւններովն ու թերութիւններովը՝ թաղուած էր անցեալի մարդուն մէջ: Վայրենիէն մինչեւ քաղաքակրթուածը՝ սկզբնական բովանդակալից կորիզի մը աստիճանական փթթումն ու զարգացումը կայ. անդադրում, թէեւ դանդաղ, արարչագործութիւն մը այն խորհրդաւոր *ուժական զօրութեան*՝ որուն մէջ խտացած են բնախօսական, կենսաբանական և հոգեխօսական անկոահեղի հնարաւորութիւններ: Եղանակաւորումները, որոնց կ'ըլլանք ականատես, նորութիւններ կամ նորաստեղծութիւններ չեն երբեք: Եւ, անշուշտ, կեանքն հիմնուած է եղանակաւորումի այս տիեզերական սկզբունքին վրայ: Քաղաքակրթութիւնն ինքնին ոչ այլ ինչ է, եթէ ոչ համադրութիւնն այս եղանակաւորումներուն կամ յեղաշրջութեանց:

Դառնանք մեր նիւթին:

Եթե կան անյիշատակ կամ անգիր ժամանակներ, ուր ցեղն ունեցած է իր գոյութեան զանազան փուլերը և կազմած իր նկարագիրը,- կայ նաեւ պատմական և գրաւոր շրջանը, որ ժառանգած է նախորդէն ինչ որ ցեղն ունեցած է իբրեւ արտայայտութիւններ իր կեանքին և իբրեւ նկարագիր: Եւ այս *ծանօթ տուեալը* մեզի կ'առաջնորդէ *անծանօթ ենթադրեալին*, որ տրամաբանական յետադարձ դատողութեան լոյսով՝ կը քօղազերծէ իր պատկերը, այնքան իրական՝ որքան ծանօթինը:

Այսպէս, պատմական հայ մայրը, իր բազմակողմանի յատկանիշներով, կը դառնայ տիպարը անյիշատակ ժամանակի մօր, պարզելով մեր առջեւ անոր դիմագիծը, անոր նկարագիրը՝ խորքով նման իրենինին: Հոգեբանական մանրադիտակ մը պիտի կրնայ թափանցել այդ խորքին, տեսնելու համար անծանօթ աշխարհը իր հրաշալի մանրամասնութեանց, իր ամենաբարդ յօրինուածութեան մէջ: Եւ արդիւնքը պիտի ըլլար այնքան ապահով և իրականութեան հետ հաշտ, որքան համեմատութիւնը կատարուէր երկու իրերամերձ եզրերու միջեւ, այսինքն, անյիշատակ ժամանակի և պատմական շրջանի անմիջական փոխանցման կետին վրայ, ուր առաջինը կը վերջանայ և երկրորդը կ'սկսի:

Մտքի զարգացման յառաջընթացի առաջին հանգրուանը կամ հանգոյցը հարկ է որոնել այն արտայայտութեանց մէջ՝ որոնք զգայութիւններ են, ուրիշ

խօսքով, ներքին եսին և արտաքին եսին, կամ փոքրաշխարհին և խոշորաշխարհին փոխարարբերությանց տպաւորութիւններն ունին իբրեւ աղբիւր: Սկզբնական այդ զգայնութիւնները կամ տպաւորութիւնները կը համադրուին ԿԲՕՆ անունին տակ: ԿԻԲՔ են անոնք, արդարեւ, *կրել* մը հիմնական, որ իր աստիճանական ընդլայնումն ու բարձրացումը, խորացումն ու զօրացումը կ'ունենայ *քնազդէն* մինչեւ *գիտակցութիւն* խորհրդաւոր ճամբով մը՝ որ կը կոչուի *ժառանգութիւն*: Այս կրօնը, թարգման խորագոյն ապրումներու, կը թելադրէ իր *հաւատալիքները* բովանդակութեամբ զուգահեռ իր գիտակցական զարգացման աստիճանին:

Այսպէս, Հայ Կնոջ և Մօր պաշտամունքը երեւան կուգայ ամեն բանէ առաջ կրօնական հաւատալիքներու մէջ: Այդ հաւատալիքները, զգացում թէ մտածում, բանալիներ են հեթանոսական շրջանի թաքուն խորհուրդներուն:

Հայ համադիցը – *պանթեոնը* – իր մէջ կը համրէ աստուածներու մօտ նաեւ աստուածուհիներ: Անգիր ու անյիշատակ ժամանակին պատկանող այդ դիքերու և դիցուհիներու նկարագիրները կը մատնեն կնիքը զանոնք երեւակայող ու պաշտող ցեղին կամ անհատներուն հաւաքական նկարագրին: Թէ իսկ փոխառութիւններ եղած ըլլան անոնք տարբեր ցեղերէ, տարբեր աշխարհներէ, բայց նոյն անուններով, անոնք միշտ պիտի ցոլացնեն բարոյքն ու իսացումներն այն

ցեղին՝ որ փոխ կ'առնէ զանոնք. փոխ կ'առնէ, սակայն *իւրացումով, իւրաշրջումով*, որով և փոխ կուտայ անոնց իր իսկ նկարագրի գիծերը: Օտար է աստուածը կամ աստուածուհին, բայց ի՛րն է կրօնական զգացումը, ի՛րն է անոնց ընծայուած կրօնական պաշտամունքը:

Եթէ, ուրեմն, չունինք պատմական տուեալներ հեթանոսական կնոջ նկարագրի մասին – ունինք, սակայն, դիցուհիներու հետ կապ ունեցող վերադիրներ կամ տիտղոսներ՝ որոնցմով ցեղն ուզած է ճանչնալ զանոնք ու պաշտել, և որոնք հայ կնոջ և մօր բնատուր օժիտներն են եղած հարկաւ:

Այսպիսի դիցուհիներէն պիտի յիշենք միայն երկուքը,- ԱՆԱՀԻՏ և ԱՍՏՂԻԿ:

Նախ, վերապահութեամբ պարտինք մօտենալ այն պատկերներուն՝ զորս կուտան մեզի օտար գրիչներ, մասնաւորապէս Հայոց ամենէն սիրելի և ազգային դարձած դիցուհիին՝ Անահիտի վերաբերմամբ:

Մեր քրիստոնէայ հնագոյն պատմիչներէն Ագաթանգեղոս, առանց անդրադառնալու թերեւս, կը ներկայացնէ մեզի անոր պատկերը նկարագրի այնպիսի գիծերով զորս դժուար չէ ի յառաջագունէ իսկ հաշտ և համապատասխան գտնել իրականութեան: Անիկա հերքումն է միւս պատկերին՝ որ կուզայ մեզի յոյն աշխարհագիր Ամասիացի Ստրաբոնի գրիչով: Բարոյքի այն սել բիծերը, որոնցմով նա կ'արատաւորէ Հայոց մայր դիցուհիի նկարագիրը, անհարազատ են անկասկած, դիտուած հաւանաբար այլ դիցուհիի մը վրայ՝ որ

տարբեր ժողովուրդներու մօտ դարձած է առարկայ պաշտամունքի՝ սրբապիղծ արարողութիւններով:

Ինչպէս վերեւ ակնարկեցինք, թէ իսկ փոխառութիւն մ'եղած ըլլար Հայոց Անահիտը՝ պատուաւոր տեղ գրաւելով հայ համադիցին մէջ,- անկարելի էր որ նախ անցած ըլլար հայ կնոջ կամ հայ ցեղի հոգւոյն պրիսմակէն և իւրացուցած անոր նկարագրի գիծերը՝ աւելի խոր կամ բարձր քանդակումով, անոր ապրումներու արտայայտութիւնը՝ աւելի աստուածայնացած դրոշմներով, կարենալ դառնալու համար առարկայ այնքան բուռն սիրոյ և ոգեւորեալ պաշտամունքի:

Մենք չենք կրնար ըլլալ համաձայն Հ. Վ. Հացունիի, որ ուրիշներու կարգին ինքն ալ կ'ուզէ կշիռ տալ Ստրաբոնի վկայութեան, որով Հայոց «Ոսկիամայր» դիցուհին կը ներկայանայ «լեպեշտի», անառակ կնոջ մը դիմագիծով ու նկարագրով:

«Չենք գիտեր՝ թէ – կը գրէ հմուտ Մխիթարեանը իր «Հայուհին պատմութեան մէջ» արժեքաւոր ուսումնասիրութեան մէջ – Անահիտ ե՞րբ «մայր ամենայն զգաստութեանց դարձաւ մեր մէջ»: Եւ պահ մը պատմաբանի լրջութենէն երգիծանքի զուարճանքին անցնելով՝ կը պատասխանէ.- «Անշուշտ երբ պառուեցաւ»: Եւ իր այս գիւտը կը փորձէ հիմնաւորել դիցուհիին «մայր» կոչումին վրայ: Ու վերջապէս, վտարելով Հայոց մեծ Տիկինը մեր աշխարհէն՝ Գրիգորի խաչով եւ Տրդատի սուրով՝ կ'ուղարկէ զայն «*ապաշխարելու հին մեղքերը*»:

Մենք պիտի յանդգնինք այդպիսի բազմադարեան ապաշխարանքէ մը ազատել Հայոց երբեմնի պաշտելի և պաշտուած Մայրը՝ արդարութիւն ընելու համար հեթանոս հայ կնոջ և հայ մօր:

Ծանօթ ըլլալով մեզի հայ կնոջ բարքը քրիստոնէութեան արշալոյսին իսկ, իր նկարագրի մայրական յատկանիշը՝ զոր Աւետարանի կրօնը ոչ թէ ստեղծեց, այլ նոր օծութեամբ մը նուիրագործեց՝ անոր ընդաբոյս շնորհներու խորացումով, դժուար է մեզ ենթադրել, թող թէ ընդունիլ, թէ ան – հայ կինը – պիտի թոյլատրեր որ ստրաբոնեան Անահիտի մը «անպարկեշտ պաշտամունքը» իր բազինը, սեղանը, ունենար հայ մեհեաններէն ներս: Չենք խորհիր, թէ պատուավաճառ կուսութեան մը կամ մայրութեան մը գաղափարը երբեք իր խորհրդանշանն ունեցած ըլլայ որ և է ձեւի պաշտամունքի մէջ Հայոց մօտ: Հայ Անահիտը իր ասենապատուաւոր տեղն ունեցած է հայ համադիցին և հայ սիրտին մէջ, ոչ թէ իբրեւ՝ մայր *ցոփութեանց*, այլ, այո՛, որպէս «մայր ամենայն զգաստութեանց», և ոչ իբրեւ «պառուացած» տարիքի զգաստութիւն, այլ իբրեւ ամէն տարիքի մէջ ի յայտ եկող ու հայ ցեղը սնուցանող *մայրական առաքինութիւն*: Մակդիր մը ոչ պատահական, այս «զգաստութիւնը», որ, երբ մէկ կողմէ կը բնորոշէ դիցուհիին – հետեւաբար նաեւ հայ կնոջ իմացական յատկութիւնը, *իմաստութիւնը*: Միւս կողմէ իր մէջ կը մարմնացնէ մաքուր բարոյքի մը *բոլոր* գիծերը՝ իրենց ֆիզիկական եւ հոգեկան յատկանիշներով:

Անուշադիր պետք չէ թողուլ նաեւ սա ոչ անկարելոր պարագան: Եթէ հայ իրականութեան աւելի մօտէն տեղեակ Ագաթանգեղոս ականատես կամ ականջալուր եղած ըլլար Ամասիացի աշխարհագրին կողմէ Անահիտի վերագրուած բարոյական այդ անկարգութեանց,- ոչ մէկ կասկած թէ պիտի չմոռնար Ս. Գրիգորի բերանը դնել աւելի ծանր մեղադրանքներ, իբրեւ հերքում-պատասխան Տրդատի՝ դիցուհիիս վերաբերմամբ արտասանած ներբողեաններուն: Յարգելի վարդապետը թոյլ պիտի տա՞ր, որ հեթանոսութեան ռիսերիմ թշնամի և Դ. Դարու մէջ ապրող Ագաթանգեղոս աւելի ներողամիտ գտնուէր զգաստութեան Մօր հանդէպ՝ քան ինքը:

Եթէ պարկեշտ է հայ կնոջ բարոյական նկարագիրը քրիստոնէական առաջին դարէն իսկ, ինչպէս կ'ընդունի Մխիթարեան Հայրն ալ, ինչո՞ւ կասկածիլ թէ նոյնն եղած ըլլայ նաեւ հեթանոսական շրջանին: Եւ եթէ իրաւացի է մեր այս հարցումը, այն ատեն Անահիտի *զգաստութիւնը*՝ իր *ամենայն* ճառագայթումներով, կը դադրի ըլլալէ առասպել մը, իր հին մեղքերուն մէջ զառամած մօր մը ուշացած առաքինութիւնը, թերեւս քրիստոնէայ վրձինով մը գեղերփնուած, ինչպէս անհիմնօրէն կը կարծեն ոմանք:

Ո՛չ այդպէս: Անահիտ, ստուգիւ, «ՈՍԿԻԱՄԱՅՐՆ» էր Հայոց: «Ոսկեծին» էր նա և «ոսկեհատ», ոչ միայն անոր համար որ իր արձանն էր ոսկեքանդակ՝ լոկ իր զիստի գինով Հուկուլլոսեան բանակ մը յագեցնող, այլ նաեւ

անոր համար, որ իր կնոջական և մայրական նկարագիրն էր եղած ոսկիի նման *ջինջ ու զուտ*: Ան Հայ Կինն ու Հայ Մայրն է, իսկապես, անյիշատակ ժամանակներուն, իր զուսպ ու զգօն զգացումներով, իր անբիծ պարկեշտութեամբ և անաղարտ համեստութեամբ, և վերջապես իր *ամենայն զգաստութեամբք* համբաւուած ու ճանչցուած:

Առանց այս «*զգաստութեանց*», որ բարձրաստիճան բիւրեղացումն է հոգիին, ի՞նչպէս այս «*Մեծ Տիկինը*» պիտի կրնար նկատուիլ «*Ազգին փառքն ու կեցուցիչը*», և աւելի ընդարձակ յատկանիշով մը՝ «*բարերար ամենայն մարդկան բնութեան*»: Եւ քրիստոնէայ գրիչ մը չէր որ պիտի տար այսպիսի դիրք ու դեր անգոյ և ոսկիով շաքարուած Էակի մը, այն ալ այնքան «լպիրշ» նկարագրով ճանչցուած օտարներէ, ընդհակառակը, ան պիտի ուզէր անշուշտ այդպիսի պատկեր մը իսպառ ջնջել քրիստոնէացած ժողովուրդի մը յիշողութենէն:

Ոչ նուազ ուշագրաւ է նոյնպէս, որ հայ պատմիչին կողմէ Լուսաւորչի բերանը դրուած խօսքերուն մէջ անգամ դիցուիին ստորնացնող բարոյական խոցելի կողմեր մատնանշող բառեր կամ որակումներ կը պակսին բացարձակապէս: Աւելին. թելադրական բան մը կայ պատմիչին հետեւեալ քիչ մը շփոթ տողերուն մէջ. - «*Այլ զոր դուղ կոչէս մեծ Անահիտ տիկին, լեալ իցեն արդեօք մարդիկ ոք յայնժամ երբեմն ժամանակի, քանզի դիցապաշտ կախարդութեամբ զմարդիկն՝ որ յայնժամ էին՝ ցնորիւք կերպս ի կերպս լինելով դիւացն,*



*հաւանեցուցին մեհեանս շինել, եւ պատկերս կանգնել, եւ պագաներ»*: Վ. Լանգլուա, Ֆրանսագի արեւելագետը, ուղիղ հասկացողութեամբ մը, այսպէս թարգմանած է այս խօսքերը.- «*Գալով Անահիտ ազնուական տիկնոջ, գոր դու կ'անուանես Մեծ – Աստուածուհի, թերեւս ժամանակին գոյութիւն ունեցած է այդ անունով կին մը՝ սրուն մարդիկ, կոսպաշտիկ կախարդանքներով եւ դէւերու զանազան դէմքեր ներկայացնող ուրուականներով երեւակայեցին կանգնել մեհեաններ եւ արձաններ՝ պաշտելու համար զանոնք»* (1): Ինչ որ կը հերքէ Գրիգոր, այդ արձաններուն վերագրուած ոգեկան ընդունակութիւններն են, այսինքն *շունչ եւ հոգի՝* որոնցմէ գուրկ են անոնք:

Պատմիչին, կամ անոր կողմէ Լուսաւորչին վերագրուած ենթադրութիւնը, թէ *գուցէ ժամանակին սպառած կին մ'եղած ըլլայ*,- ինքնին կարելի է նկատել փաստ պատմական այլ ճշմարտութեան մը՝ նախապատմական շրջանին կիրարկելի, այն թէ, այդ՝ *պատկերն է Հայ Կնոջ նկարագրին՝ նախ քան քրիստոնէութիւն*: Եւ այդ պատկերը ոչ թէ եղծուած կամ ջնջուած է քրիստոնէական շունչով, ինչպէս ըսինք վերեւ, այլ

---

(1) Երկրորդ նախադասութիւնը թերեւս ասելի շիտակ ըլլայ թարգմանել. «*Վասնզի դէւերը զանազան ցնորական կերպարանքներով եւ դիցապաշտիկ կախարդանքով համոզեցին այն ստենի մարդիկ մեհեաններ շինել արձաններ կանգնել եւ երկրպագել անոնց*»: Ագաթ. էջ 50:

ընդհակառակը աւելի լոյսի բերուած, կարկառուն դարձած, այլեւ խորաքանդակուած ու հիմնաւորուած է:

Հայոց «Մեծ Տիկիւնը» նկարագրի ուրիշ ցցուն գիծ մըն ալ կը ցուցաբերէ՝ հայ կնոջ յատուկ: Անահիտ «ԻՆԱՄԱԿԱԼ» է միանգամայն: Ժողովրդական երկու սիրուն բառեր պիտի տային մեզի անոր նշանակութիւնն ու արժէքը.- «Տանտիկին» և «տնաշէն»: Այսինքն՝ *Տան Հոգին*: Արեւելքը չէ՞ գիտցած, թէ *իմաստութիւնն է շինարար ոգին, թէ՛ իմաստուն կիներն են որ կը շինեն տունէր*: Եւ հայ «Տանտիկինը» ունի այդ իմաստութիւնը, այդ շինարար ոգին, ուստի և եղած է «ՏՆԱՇԷՆ»: Եւ տնաշէն է, ոչ միայն իր սեղմ այլ նաեւ ընդարձակ առումներով: Հոգին է Հայ ընտանիքին, Հոգին է Հայ Աշխարհին: Չենք գիտեր թէ աւելի իմաստալից եւ կնոջ համար աւելի պատուաբեր տիտղոս մը կարելի էր գտնել.- Հայ Տան եւ Հայ Աշխարհին *իմամածութեան* պատասխանատուութիւնը աստուածացած Մօր մը յանձնուած: Անառակ կին մը զուրկ պիտի ըլլար այդպիսի պատասխանատուութեան մը գիտակցութենէն և ընդունակութենէն: Իսկ *երբեմն ապրող հայ կինը*, որ խորհուրդի մը ներշնչող աղուորութեամբ կը մարմնանայ *Ոսկիամօր* մը արձանին մէջ,- ամենէն աւելի փարումով մը նուիրուած է այդ չքնաղ կոչումին, վեստեան կոյսի մը արթնութեամբ, հոգողութեամբ և նախանձախնդրութեամբ: Նա է որ մշտարժարձ պահած է ու կը պահէ սիրոյ կրակը ընտանեկան վառարանին

մեջ՝ որ նոյն ատեն ջերմոցն է ընկերային կեանքին: Ոչ թէ անառակութեամբ, այլ *ամենայն զգաստութեանց* կրակն է այն:

*Նախախնամական չէ՛, իսկապէս այն սերը՝ որով կը բնորոշուի կնոջ և մօր դերը ընտանեկան յարկին տակ և ընկերային շրջանակին մէջ: Անոր մաքուր շունչով «կ'ապրի եւ կենդանութիւն կը կրէ» ոչ միայն Տունն ընտանիքին, այլ նաեւ Տունը բովանդակ Ազգին: Եւ Անահիտ եղած է ոսկեղենիկ խորհրդապատկերը Մօր մը՝ «որով ապրած եւ կենդանութիւն կրած է երկիրս Հայոց»:*

Քրիստոնեայ Հայ Կինը իր հեթանոս նախամայրերէն ժառանգեց առաքինական այն բոլոր առանձնատկութիւնները՝ որոնք կը խտանան իր հանրածանօթ *պարկեշտութեան – ամենայն զգաստութեան –* մէջ, հիմն ընտանեկան անկոխելի և անձեռնմխելի սրբութեան, որուն՝ կեանքի գինով իսկ՝ նախանձախնդիր է եղած և է Հայ Կինը: Տեղը չէ անդրադառնալ վերջամուտ եւ ասաղելի աններդաշնակութեանց վրայ:

Այս է պատճառը, անտարակոյս, որ Քրիստոնէութիւնը, իր աստուածայնացուցած Կինով, Աստուածածինով, այնքան շուտ գրաւեց սիրտը Հայ Կնոջ եւս, տալով անոր այլապէս վսեմ տիպար մը մայրութեան՝ որուն յարգական ամենախոր պաշտամունքն ունեցան բոլոր կանանցածինները: Հայոց «ՈՍԿԵՄԱՅՐ»ը փոխանակուեցաւ աշխարհի «ԼՈՒՍԱՄԱՅՐ»ով: Մարիամի Հայը տեսաւ ու պաշտեց իր Անահիտը, մեկին *սրբու-*

*թիւնը* և միւսին *զգաստութիւնը*, առաջինին *բարեխօսութիւնը* և երկրորդին *խնամակալութիւնը*: Եւ երկու պատկերները՝ ոսկեղէն ու լուսեղէն՝ միաձուլուեցան աստուածային ճառագայթներուն մէջ *Աստուածածին Մօր*:

Վասն զի, եթէ «ԼՈՒՄԱԾԻՆ» Մօր հետ զուգորդուած է լուսեղէն դէմքը «*Արդարութեան Արեգակին*», - «ՈՍԿԵԾԻՆ» Մօր հետ ալ կցորդուած էր շողաւոր դիմագիծը *արեգակնային «Վիշապաքաղ»*ին: Երկու պատկերներն ալ անբաժան *յոյսի գաղափարէն* որ սկիզբն է ֆիզիկական և հոգեկան բոլոր առաքինութեանց:

Չենք բան ստեղծեր, եթէ սակայն ամէն գեղեցիկ ներշնչումի մէջ ինքնին բանաստեղծական ինչ մը չի կայ, եթէ այդպիսի ներշնչումի մը վճիտ լուսադիւրը չէ՝ Հայ Կնոջ և Մօր առաքինական յատկանիշերով բնորոշուած ու բովանդակալից դարձած պաշտամունքը հեթանոսական «ՈՍԿԵՀԱՏ» ԱՆԱՀԻՏԻ մը և քրիստոնէական «ԳԵՐԱՐՓԻ» ՄԱՐԻԱՄԻ մը մէջ, մէկը երբեմն «*փառք ազգիս մերոյ կեցուցիչ*» (Ագաթանգեղոս), միւսը յաւետ «*պարծանք եւ յոյս ազգի մարդկան*» (Շարական Աստուածածնի):

Տարբեր չէ մեր տեսութիւնը նաեւ ԱՍՏԴԻԿԻ մասին: *Գեղեցկութեան* դիցուհին է այն՝ «*վարդամատն*» և «*վարդավատ*»: Այս ստորոգելիները, կամ *վարդի* նշանակները, կը խորհինք թէ աւելի դիցուհիիս վերագրելի են, քան Անահիտի: Աստղիկի գեղեցկութիւնն ալ, սակայն, զուգորդուած է բարոյական յատկանշի մը հետ:

Այդ՝ իր *ամօթխածութիւնը* կամ *պարկեշտութիւնն* է, գոր հայ երեւակայութիւնը խորհրդանշած է դիցաբանական «*Մշուշ*»ով: Աստղիկի լոգարանն է *Արածան/հն*, Մշոյ դաշտին լոյծ ողնայարը: Անոր բիւրեղեայ ջուրերուն մէջ, ուր՝ արշալոյսի առաջին շողերուն՝ կը մխրճուի – կամ *կը մկրտուի* – անոր շուշանատիպ մարմինը, ան կը գտնէ իր ֆիզիկական մաքրութիւնը, և նոյն ատեն կը պահպանէ իր ոգեկան անբծութիւնը՝ *Մշուշ* ունենալով իբրեւ ծածկոյթ իր մերկութեան, որպէս զի Քարքէի բարձունքէն դիտող երիտասարդ աչքերու մէջ իր գեղեցկութիւնը չարթնցնէ խտիղը մեղապարտ ցանկութեան:

Ասկից աւելի լոյս չեն տար մեզի պատմութիւնն ու աւանդութիւնը այս դիցուհիի նկարագրի մասին. ան կոչուած է «*սենեակ Վահագնի*», որ է՝ Վահագնի *հարս*, և, այսպէս, իր պարկեշտասուն գեղեցկութեան հետ կը միախառնուին Վահագնի արեւափառ *արութիւնն* ու *բարութիւնը*:

Աստղիկ, Անահիտ և Վահագնի հետ, կը կազմէր Հայոց հեթանոսական *երեքութիւնը*, ունենալով իր սեփական բազինը Յաշտիշատի նշանաւոր մեհեանիւն մէջ՝ *Վահեվահեան* անունով ծանօթ: Իր սերտ կապակցութիւնը այդ երկու աստուածութիւններուն հետ, ինքնին երաշխիք մ'է անոր բարոյական անարատութեան՝ որ յատկանիշն է Հայ Յեղին, մասնաւորապէս իգական սեռին: *Զգաստ* ու *Գեղեցիկ*, թեւախառնուած *քաջակորով* պատուախնդրութեան հետ, - ահա նկարագրի

գլխաւոր գիծերը Հայ Կնոջ և Հայ Մօր, խորհրդանշուած՝ *հեթանոսօրէն՝ ԱՆԱՀԻՏ – ՎԱՀԱԳՆ – ԱՍՏԴԻԿ երրեակով*, ապա *քրիստոնէաբար՝ Աստուածային Երրորդութեան ճառագայթով սրբազործուած ԱՍՏՈՒՎ-ԾԱԾԻՆ ՄԱՐԻԱՄԻ տիպար պատկերով:*

### ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Անիրաւ չեն բոլորովին հայ ծնողներ, երբ պատասխանատուութեան բաժին մըն ալ ձեր վրայ կը բեռնեն, հայ ուսուցիչներ: Գիտեմ ես, այս երկրին սահմաններէն ներս *գրեթէ* ոչինչ է ձեր դերը տղոց կրթութեան ու դաստիարակութեան գործին մէջ: Բայց ԳՐԵԹԷ-ն դեռ բան մըն է՝ զոր հարկ է ճանչնալ ու գնահատել: Ձեր պաշտօն յանձնուած է հայ լեզուն ուսուցանելու հայամերիկացի տղոց: Դժուար աշխատանք արդարիւ: Եւ այդ դժուարութիւնը կը դառնայ աւելի բարդ՝ եթէ ըսեմ – Դուք կոչուած էք տղոց ներարկելու *հայեցի շունչ*: Քաղաքացիութեամբ պարկեշտ ամերիկացիներ՝ ցեղով ու հոգիով անոնք պիտի ու պետք է մնան հարազատ հայեր: Միջավայրը, իր բոլոր ազդակներովն ու գործօններովը, պիտի չեղծէ, այլ պիտի գտէ ու մշակէ ինչ որ կայ հայ մանուկներուն մէջ իբրեւ ժառանգական եւ պապենական արժէքներ: Ծնողներէն վերջ ձեր պարտքն է ձեր դէմ սպառազինուած բոլոր դժուարու-

թեանց հանդէպ նահատակի կուրծք յարդարելու: Ո՛չ թէ արիւնի, այլ քրտինքի նահատակի մասին է խօսքս:

Այբ-բեն-գիմը կմախք մը միայն պիտի ըլլայ, հետեւաբար անարժէք ու անհրապոյր, եթէ չգիտնաք զանոնք կենսաւորող ոգին – *Սահակ-Մեսրոպեան Ոգին* – գրաւիչ ընծայել սերունդի մը՝ որ ինքզինք կը գտնէ այլ ոգիի մը համապարփակ կախարդանքին առջեւ: *Ամենրիկականությունը*, ըսել կ'ուզեմ, որուն իմաստը դեռ ըստ արժանւոյն ըմբռնուած ու գնահատուած չէ: Կադապար մըն է ան, որուն մէջ պիտի թափուին բոլոր կերպընկալ հոգիները ձուլուելու համար: Ոսկի, արծաթ, կապար, պղինձ, ադամանդ, եւ ամէն տեսակի հոգիները, ստանալու համար նոր ՁԵՒ ՄԸ: Ձեւը կը փոխէ՝ Էութինը: Հոգիներու ձուլման մէջ դժբախտաբար՝ ԱՅՈ՛, եթէ այդ Էութինը զուրկ է ոսկիի եւ ադամանդի յատկութիւններէն: Եթէ ան դադրած է ըլլալէ ՈՅԺ ՄԸ: Այդ ոյժը պիտի մշակէ, զօրացնէ եւ շարժման մէջ դնէ հայ ուսուցչին շունչը, այն բոլոր տուեալներով՝ որոնք մեր անցեալի ու ներկայի հոգեկան-իմացական արժէքներէն կը բխին: Հայ պատմութիւնն ու հայ մշակոյթը, ըսել կ'ուզեմ, որոնք իրենց մէջ կը խտացնեն այդ արժէքները: Գլխաւոր աղբիւրը, որուն կրնաք դիմել, Հայաստանեայց Եկեղեցին է, այս երկրին մէջ: Անոր հովանիին տակ կը բիւրեղանան այդ բոլոր արժէքները իրենց եռացումի բարձրագոյն աստիճանին մէջ: Ասոր համար, մեր համոզումով, հայ ուսուցիչը պիտի գիտնայ այդ դարբնոցին մէջ փնտռել այն բոլոր տարերքը՝

որոնք կրնան *չափով մը գէթ* պահել ու աւելցնել վերել *ակնարկուած ոյժը, եւ կերտել հայեցի դրոշմը* հայ-ամերիկացի նկարագրին:

Ուաշինկթըն-Լինգըն ոչինչ պիտի ունենան դժգոհելու, յանուն Ընգըլ-Սեմի, եթէ հայ ծնողն ու հայ ուսուցիչը *կամենան* ու *կարողանան* Վարդան-Վահանի շունչովը զրահապատել հոգիները մեր նոր սերունդին, յանուն Սահակ-Մեսրոպի Ոգիին:

ՈՐԶԱՓ ԼԱԻ ՀԱՅ՝ ԱՅՆԶԱՓ ԼԱԻ ԱՄԵՐԻԿԱՑԻ,- ա՛յս է նշանաբանը, նոյն իսկ Ընգըլ-Սեմի ոգիէն ներշնչուած, որ պիտի առաջնորդէ զձեզ աներկիւղ ու անվարան ձեր փշոտ ճամբուն մէջ:

Մի՛ վիատիք, այլ սպառազինուեցէք, հայ ծնողներու բանակն ալ շարժելով՝ եթէ կրնաք, նուաճելու համար անպարտելի կարծուածը, ԹԻԻՐ ԱՄԵՐԻԿԱԿԱՆՈՒԹԻԻՆԸ, եւ ասպահովելու յաղթանակը անզօր կարծուած ՈՂՄԻՏ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ:

## ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Գործաւորներ եղած ըլլաք դուք թէ հանգստեան կոչւածներ, արհեստաւորներ թէ կալուածատերներ, այգեգործներ թէ վաճառականներ, մշակ-պարտիզ-պաններ թէ արուեստագէտներ, ազատ-արուեստաւորներ թէ փերեզակներ, խանութպաններ թէ պաշտօնեաներ, շրջուն վաճառողներ թէ ծառայողներ, վարիչներ



թե հետեւողներ,- բոլորիդ որ կը կազմէք անբաժանելի եւ լրացուցիչ մասերը մեր ժողովուրդին, ունիմ իմ քանի մը խօսքերը:

Ոչ թե ունիմ փորձառութիւնները ձեր զբաղումներուն, այլ փոքր ինչ հասկացողութիւնը ընկերային այն կեանքին որուն մէկ պատկերն է անշուշտ նաեւ քուկդ: Դժուար չէ զգալ դառնութիւնները այդ բազմաբարդ կեանքին: Գուցէ ծիծաղելի ըլլամ եթէ ըսեմ թե կրնամ դարմանել այդ դառնութիւնները: Բայց կ'ուզեմ ըսել բան մը միայն.- Կայ եղանակ մը *մեղմացնելու* զանոնք: Այդ դառնութիւնները տնտեսական են ըստ երեւոյթին, բայց բարոյական են ըստ էութեան: Տնտեսական անկումին արմատը կը գտնուի հոգեկան անկումին մէջ: Ուստի եւ տնտեսական միջոցները պիտի մնան անզօր, որչափ ատեն մարդիկ չուզեն մօտենալ բարոյական գետնին եւ հոն փնտռել իրական բալասանը ընկերային չարիքներուն: Ինչքան ալ դժնդակ ըլլան կեանքի պայմանները – եւ ե՛ն այսօր արդարեւ-, կայ բան մը՝ զոր չենք կրնար հեռացնել լուրջ նկատառութենէ: Ատիկա բուն իսկ բարոյական արժէքն է մեր անձին եւ մեր համայնքին:

Գործաւորին ու արհեստաւորին ֆիզիկական սպասումները, այգեպաններուն ու մշակներուն անստուգութեան սրտմաշուփներն ու մղձաւանջները, ազատարուեստաւորներու եւ արուեստագէտներու կայունութեան բարոյալքումներն ու ստորագնահատման սառնութիւնները, վաճառականներու սարսափն ու կալ-

ուածատերերու շուարումը խնդրանքներու պակասին հանդէպ, մէկ խօսքով՝ ընդհանուր պաներկիւղ մը (panic) համաշխարհային տնտեսական գետնին վրայ՝ կատարեալ սպառնալիքներ են ժողովուրդներու ոչ միայն ֆիզիկական գոյութեան՝ այլ նաեւ բարոյական հաւասարակշռութեան: Այս սպառնալիքները այնքան լուրջ են եւ քայքայիչ, որքան զանոնք հակակշռող ու զսպանակող հոգեկան առաքինութիւնները պակաս:

Հայ Ազգը, մահու եւ կենաց ամենէն դժնդակ փորձութիւններէն անցած, չէ կորսնցուցած երբեք հոգիի արիութիւնն ու մտքի իմաստութիւնը՝ հաւասարակշռելու իր ոյժերը եւ պահպանելու իր կորովը: Բիւրերու քիւր գոհեր խլած են իրմէ անանուն Ոճիրն ու Եղեռնը. բայց իր Հաւատքը վաղուան համար, եւ իր Կամքը՝ կուրծք տալու ներկայի եւ գալիք բոլոր փոթորիկներուն դէմ՝ մնացած են անաղարտ ու անպարտելի:

Այսօրուան տնտեսական – եւ մանաւանդ բարոյական – համաշխարհային տագնապին առջեւ այս հաւատքն ու կամքը պիտի ըլլան միակ սպառազինութիւնը՝ ապահովելու համար յաղթանակը ընկերային-բարոյական նորագոյն սկզբունքներու: Այս յաղթանակը ինքնին պիտի ըլլայ բարձումը ամէն տեսակի ան-իշխանութեանց:

Այս սպառազինութիւնը անհրաժեշտ է՝ մղելու համար կռիւր անվիատ քաջութեամբ, ներշնչուելով լաւագոյն օրերու հեռապատկերէն, եւ ոչ թէ ոգեսպառ ըլլալով յոռեգոյն վայրկեաններու ահաբեկիչ փորձու-

թիւններէն: Այս փորձութիւններն են որ պիտի տան չափը մեր անհատական եւ հաւաքական-ազգային առաքինութեանց տարողութեան եւ կշիռը անոնց արժէքին:

«Difficulties might do us good», ըսաւ ամերիկացի հրապարակագիր մը: Եթէ ասիկա ճշմարիտ է ամերիկեան ժողովուրդին համար, ալ ակելի ճշմարիտ է մեզի համար: Վասնզի դժուարութիւնները ոչ թէ *կրնան ընել՝* այլ *ըրած են* հայ ժողովուրդը *լաւագոյն տոկացողը:*

Եթէ մենք, մեր հայրերուն նման, շատ ու շա՛տ անգամներ անցեր ենք «*ընդ հուր եւ ընդ ջուր*», ինչո՞ւ այժմ ալ դեղեւիլ ու չգօտեպնդուիլ կտրել անցնելու համար նաեւ կրակի այս ծովը: Չկայ ծով մը, թէ իսկ ովկէան մ'եղած ըլլայ այն, որ իր ափունքը չունենայ: Բացէք ձեր առագաստները, որքան ալ բռնաշունչ հովն ու փոթորիկը սպառնան ձեր նաւակներուն: Միայն իմաստութեամբ ձեռնեցէք դեկը:

Գիտեմ, կամ ընկերային աղետներ՝ որոնց չեն հաւասարիք ձեր ֆիզիկական ոյժերը: Թերեւս նաեւ ձեր բարոյական ոյժե՞րը.- օ՛հ, ո՛չ: Ելելտրական թաքուն հոսանք մը ակելի ոյժ ու լոյս կը բովանդակէ, քան հսկայ ձիերու երամակ մը կամ մեծղի կոճղներէն բոց առած խարոյկ մը: Բարոյական կորովը այդպիսի հոսանք մըն է՝ մթերուած մեր էութեան խորը: Մեր ձե՛ռքն է պահել ու ակելցնել զայն, կամ ցրուել ու վատնել:

Հաւատքը վաղուան, հաւատքը ընկերային եւ տնտեսական հաւասարակշռութեան վերահաստատ-

ման – ասիկա չի գար ինքնաբերաբար, չի գար գանգատներով եւ ողբ ու կոծերով, այլ կուգայ ոգեկոչելով ինչ որ կայ մեր մէջ իբրեւ հոգեկան արժեքներու ժառանգութիւններ, եւ աւելցնելով նոր արժեքներ:

Ուշադրութեամբ դիտեցէք այն ելեկտրական հոսանքը՝ որ ժողովուրդներու, տանջուած ժողովուրդներու արթնցած գիտակցութենէն կը բխի եւ կը թափանցէ գրեթէ բոլոր քնացած խիղճներէն ներս: Հասարակաց ողջմտութիւնը կը պտտոցնէ զայն ամէն կողմ, դիւանագիտական սեղաններէն մինչեւ դրամատիրական սենեակները, արքայական տուններէն մինչեւ արեւեան դաշտերը: Արուեստական այս տազնապը երկար չի՛ կրնար ծաղրել կեանքի քնականոնութիւնը՝ որ աստուածադիր Օրէնքն իսկ է, եւ որուն պիտի վերադառնայ կամ հասնի մարդկային առողջ դատողութիւնը առ նուազն խաղաղ դիմադրութիւններովը ամենէն աւելի տառապող հոգիներուն:

Գաղափարականը արդար հասարակակարգի մը պիտի ուժեղանայ հետզհետէ. պիտի ծաւալի, գետին պիտի շահի, բաւական է որ տառապանքը չջլատէ հանրային կորովը:

Այդ գաղափարականով պետք է սպառազինուիս եւ դու, հայ ժողովուրդ:

Այդ սպառազինումը աստուածային է: Ձի *արդարութիւնը*, որուն կը ձգտի դժգոհը, անիրաւուածը, Աստուծոյ նկարագիրն իսկ է: Այդ նկարագիրը, սակայն, միս ու արիւն կ'ըլլայ մեր արիական ոգորումներով մեր առա-

քինական յառաջխաղացութիւններով, մեր յարատեւ ու անվիատ ջանքերով, մեր *յամենայնի* ներդաշնակ համագործակցութեամբ:

Եւ քանի որ արդարութեան խօսքը կ'ընեն, հարկ կ'զգամ շեշտել անհրաժեշտութիւնը զայն տարրացնելու մեր կեանքի բոլոր գործառնութեանց մէջ: Աշխատաւորն ու արհեստաւորը, գիտութեան մարդն ու արուեստի մարդը, վաճառականն ու պաշտօնեան թող մէտն ընեն զայն իրենց բոլոր կշիռներուն:

Ոչ կրծող կաշառը, ո'չ մոլորեցնող նենգն ու խաբը, ո'չ ծպտուն սուտը տեղ թող գտնեն ձեր նժարի թաթերուն մէջ, ստիպելով որ խոյս տայ անկից արդար վաստակի օրհնութիւնը, եւ անոր տեղ նստի անիրաւ շահի անէծքը, իր պրկող գալարումներուն մէջ խեղդելով հեզնոտ խիղճերը:

Եթէ բժիշկ է՝ իր դարմանումներուն մէջ թող խառնէ գիտութեամբ լրջացած գուրգուրոտ մարդասիրութեան մը բովանդակ զեղումը. եթէ փաստաբան մը՝ իր փաստարկութեանց եւ խօսքի ճարտարութեան մէջ արուեստի ազատ այլ զուսպ խոյանքովը վսեմացած կորովի շեշտը արդարադատութեան: Եթէ վաճառական է՝ իր մատուցումներուն եւ նոյն իսկ խնդրանքներուն մէջ հաշուական ճշտութեամբ վկայուած բարեխղճութեան հարկը. եթէ արհեստաւոր է՝ իր աշխատանքներուն մէջ վարպետութեամբ արժէքաւորուած ուղղամտութեան վարկը: Եթէ մշակ է՝ իր քրտինքներուն հետ ինքնապաշտպանութեան իրաւունքով զօ-

րացած պատուաւորութեան պարտքը. եթէ արուեստագէտ՝ իր արտադրութեանց մէջ արուեստի շնորհներով օժտուած համեստութեան եւ խոնարհամտութեան նուաճող հմայքը: Եթէ կալուածատէր է՝ իր ստացուածքներուն մէջ աստուածային հաւասարաբաշխ աջի մը հակակշիռը. եթէ պաշտօնեայ՝ իր ծառայութեանց մէջ հաւատարմութեան տուրքը: Եթէ վարիչ է՝ իր ցուցումներուն եւ ուղղութիւններուն մէջ անկողմնակալութեան բեւեռացոյցը. եթէ հետեւող՝ իր քայլերուն մէջ խոհականութեան եւ շրջահայեցութեան տիրականութիւնը:

Աշխարհի մը մէջ, ուր ընկերային մեքենան այլապէս է լարուած ոսկի-երագներ չե՞ն ասոնք՝ օդային դղեակներ կառուցանելու յարմար,- պիտի խորհիք թերեւ: Եւ այսպէս խորհելու փորձութիւնն իսկ է արմատը ընկերային չարիքներու տեւականացման եւ ծաւալման: Բարոյական կշիռի պակասը չէ՞ պատճառ որ աշխարհի ամենահարուստ հողամասը այսօր կը տառապի *սոստութեան անսուադութեամբ*: Նորօրինակ ՍՌՎ մը՝ գորերկրագունդը երբե՛ք տեսած ըլլայ: Եւ այս սովին մէջ, ուր սականերու ծանրաբեռնուած ստամոքսները կը թասեն, ամեն անհատ ունի աւելի կամ պակաս չափով պատասխանատուութեան իր բաժինը: Տեսակ մը փոխվրէժի սկզբունքը – աւելի ճիշտ՝ բնագոյր կը կրծոտէ ամենուն խիղճը: Եթէ մեծին ասիլը կաշառին թաթն է, ինչո՞ւ պզտիկին ճկոյթի ծայրը գոնէ չմխուի հոն: Առանց ատոր պիտի ուղղուի՞ նժարը:- Այս մտայնութիւնը կը

խորացնէ չարիքը, եւ մեծերը պայմանագրական կեղծիքներու բովանդակ շողոմիչ հնարքները կ'սպառեն քիչ մ'աւելի ուշացնելու համար արդար չափի ու կշիռի գիւտն ու տիրապետութիւնը: Ամեն մարդ պատասխանատուութեան բաժին մ'ունի իր անձնական նաեւ հանրային տառապանքին մէջ: Ծովը կաթիլներէ կը շինուի. համայնական աղէտները անհատական չարիքներէ կ'առաջագային:

Իւրաքանչիւր անհատ, ի՛նչ ասպարեզի մէջ եւ ի՛նչ աստիճանի վրայ ալ գտնուի, թող արդարութիւնն ընէ, ուրեմն, մէտը իր բոլոր կշիռներուն եւ ստուգանիշը իր չափերուն: Թող արդարութի՛ւն ընէ ինքն իրեն եւ իր գործերուն: Եւ կարենալ արդարութիւն ընելու համար իրեն՝ թող գիտնայ քննել բովքն իր ոյժերուն, գնահատել արժէքն այս ոյժերուն եւ մանաւանդ գործածել զանոնք արդարութեամբ, իմաստնօրէն եւ օգտակարապէս:

Այդ ոյժերը չեն լոկ ֆիզիկական՝ որ կ'սպահովեն միայն մեքենական շարժումները, այլ նաեւ ու մանաւանդ հոգեկան են՝ որ կ'երաշխաւորեն, առաջիններուն հետ գործակցաբար, կեանքի ներդաշնոյթը:

Այդ ոյժերէն մէկն ու գերազանցն է *հաւատքը՝ սիրով հիմնաւորուած*: Հաւատքը երկնաւոր Հօր մը՝ որ խորհրդաւոր եւ մեզի համար դեռ անբացատրելի ճամբաներով կ'առաջնորդէ մարդկութիւնը դէպի այդ ներդաշնոյթը:

Այս հաւատքը *կրաւորական բնագոյ* մը չէ, որ կը պահանջէ կամագուրկ անձնատուութիւն արտաքին,

մեզմէ դուրս գորութեան մը, ինչ որ կը տանի ճակատագրապաշտութեան: Ան ընդհակառակը *ներգործական ոյժ* մըն է, որ կը բխի *մեր իսկ էութենէն*, Արարիչ ու Վարիչ Ջորութեան ճառագայթն եղող մեր նկարագիրէն:

Մեր հայրերը ունեցան այս հաւատքը: Չեմ ըսեր հաւատալիքները, որոնք շատ անգամ իրենց մանկունի նախապաշարումներով կը մթագնեն հաւատքին սեռնութիւնը: Այդ հաւատքը պահեցին անոնք, անոր լոյսով քակեցին, զայն մեզ կտակեցին: Յառաջխաղացումը վերջացած չէ, աշխատանքը լրացած չէ, զայն շարունակելը բնութեան աստուածադիր օրէնքն է ու մեր պարտականութիւնը: Կանգ առնել եւ մագնիսական հրաշքով մը մեզ քաշել ուզել հեռաւոր նպատակը՝ հեզնել է Աստուծոյ գործին իմաստութիւնը, իր դասաւորող իմացականութիւնը, *աստուածային կարգապահութեան* լրջութիւնը տիեզերական յօրինուածութեան մէջ: Մարդը դուրս չէ աստուածային ծրագրէն: Սկեպտիկ նայուածքներ կարճատես աչքի թարթափումներ են, յռետեսի մարգարէութիւններ՝ իմաստակի ճամարտակութիւններ են:

Դարձեալ, հաւատքը *ձեւ* չէ, այլ *հոգի*: Այս հոգիով Աւետարանի կրօնը ծանօթացուցեր է մեզ զԱստուած: Այդ հոգին է անհրաժեշտ՝ ունենալու համար կեանքը լիովին եւ յաղթելու աշխարհի բոլոր դժուարութիւններուն:



Եթե այդ հաւատքն ունենանք՝ ամենէն ծանր բեռներն անգամ – Աւետարանի մէջ «լեռ» բառով խորհրդանշուած - կրնանք շարժել ու կրել: Եթե ամեն մարդ, անկախ ուրիշներէ, մանանեխի հատի մը չափ գոնէ ունենայ անկից իր մէջ, անհնար չէ որ Աստուծոյ թագաւորութիւնը համատարած գրաւէ բոլոր սրտերը: Այն ատեն ինքնին արմատախիլ կ'ըլլայ արդէն ընկերային չարիքը:

Սիրելի հայ ժողովուրդ, իբրեւ հայ հաւաքական անձնաւորութիւն, այս հաւատքին մէջ պետք է փնտոռես քու բարձրացումդ, քու փրկութիւնդ:

Այդ հաւատքը քեզի տուող ընտանի լուսադրփւր մը կայ. այդ՝ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՆ Է: Քրիստոնէական կեանքի մը փորձառութիւններով զօրացած այդ հաստատութիւնը անմահն է որ եւ է այլ կազմակերպութեան: Ծես, արարողութիւն, պաշտամունք, երգ, քարոզ, ինչպէս նաեւ չէնք,- այս բոլորը դեռ չեն այն սրբազան տեղը՝ զոր կը կոչենք «ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՆ»: *Աստուծոյ ճշմարիտ տունը այն քարոյական մթնոլորտն է՝ ուր հոգին կը գտնէ իր ինքնութեան լման ճանաչումը, շնորհիւ ճշմարտութեան այն լոյսին՝ որ Աւետարանէն կը ճառագայթէ, աւելի ճիշտ՝ որ Քրիստոսի երկրաւոր կամ մարդկային փորձառութիւններէն, ապրած կեանքէն կ'արտափայլի:* Այդ մթնոլորտը ունի իր արտաքին պարունակը որ եկեղեցիի շէնքն է, կամ Տաճարը: Բայց այս տաճարը կ'ենթադրէ

երկու այլ տաճարներ այ, առանց որոնց ինքը կը դադրի իսկապես գոյութիւն ունենալէ – ԱՆՁ-ը եւ ՏՈՒՆ-ը:

Այսպէս ըմբռնուած Եկեղեցիին «*կենդանարար*» ոյժը «*հոգին*» է, միջմարդկային սերը. առանց այդ հոգիին, կտակուած մեզ Յիսուսէն, «*մարմին*»ը- ձեւը- «*ինչ ոչ օգնէ*», անօգուտ է (Յովհ. 2, 34): Իորիուրդն է *անփոփոխ* կեանքը, խորհրդանշանը՝ զայն յայտաբերող *փոփոխական* ձեւը: Ինչ որ անփոփոխ է՝ յաւիտենական է. փոփոխականը ժամանակաւոր է: Համամարդկային սերը արդարեւ անփոփոխ է եւ յաւիտենական: Անոր վրայ հիմնուած կեանքն այլ է յաւիտենական: Եկեղեցին Տունն է Աստուծոյ, այդ հոգեւոր կեանքով ճշմարտուած եւ վայելչացած:

Եթէ ունենանք այդ կեանքը մեր մէջ իր ամենալեզուն չափովը, եթէ մեր սիրալիր սրտերու միութիւնը բոլոր անհատական կեանքերը օժտէ Քրիստոսի բերած «*առաւել կեանքով*», ամբողջական, ճշմարիտ եւ յաւիտենական կեանքով, ապահովուած կ'ըլլայ ՏԻՊԱՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՐԳ ՄԸ ՏԻՊԱՐ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՄԲ: Ասիկա ցնորք (utopia) մը չէ. այլ իրականանալի աւետարանական երազ մը: Այս երազը Քրիստոնէական հաւատքին լուսեղէն թենն է: Մէկը գէշ Քրիստոնէայ է, կամ բնաւ Քրիստոնէայ չէ առանց այս երազին, բայց մանաւանդ առանց ունենալու այդ երազին իրականացման ձգտող կենդանի եւ գործնական հաւատքը իր եւութեան խորը:

Միրելի հայ ժողովուրդ Գալիֆոնոնիոյ, եթէ այս հա-  
ւատքը խորարմատ ու կենդանի ըլլար մեր մէջ, մե-  
ծերուն մէջ ըսել կ'ուզեմ մանաւանդ, *հիներուն մէջ*,  
պգտիկները, *նորերը* ա'յլապէս պիտի յարգէին ու  
գնահատէին զանոնք: Այն ատեն խրամատը որ կ'ա-  
յսօր հին ու նոր սերունդներուն միջեւ, գոյութիւն պի-  
տի չունենար: Եւ եկեղեցին պիտի չդիտուէր, նոյն իսկ  
հիներու կողմէ, լոկ որպէս ազգային ասանդութեանց  
թանգարան մը, այլ նաեւ հոգեւոր ներշնչումներու եւ  
կազդոյրի աղբիւր մը: Եւ աւելին: Հայ ազգային գաղա-  
փարը, իր բիւրեղացումովը այնքան հաշտ մարդկայ-  
նական սկզբունքներուն հետ, պիտի չնկատուէր նո-  
րերու կողմէ որպէս պատմական կամ ընկերային-հո-  
գեքանական ժամանակավրէպ մը (anachronism):

Հիներ կը գանգատին թէ նորեր չեն մօտենար եկե-  
ղեցիին, չեն շահագրգռուիր անով: Իսկ իրենք ալ կը  
մօտենան – բացառութիւններու մասին չէ խօսքս – մի-  
այն *բարեպաշտիկ սովորամոլութեամբ մը* (routine),  
ատհաւական ունակութեան մը մղումով ու ... ցամքած  
սրտերով: Մեծեր կը մեղադրեն պգտիկները թէ հա-  
ւատքը կը պակսի անոնց մէջ. բայց իրենք ալ ոչ նուազ  
գուրկ են հոգիի եւ ճշմարտութեան վրայ հիմնուած  
հաւատքի մը կենդանարար զօրութենէն: Երեկի սե-  
րունդը կը քննադատէ այսօրուան սերունդը անոր վա-  
րած ծայրայեղօրէն հանոյքի, վայելքի եւ գրեթէ գաղա-  
փարագուրկ կեանքին անոր նիւթապաշտիկ հակում-  
ներով վարքութարքի համար. բայց ինքը ոչինչ ցոյց

կուտայ իր մէջ որ ըլլայ առողջ եւ բարձր ապրումներով ճոխ կեանքի մը գրաւիչ պատկերը: Եթէ նորն ունի իր երիտասարդութեան խաղերը, «մանկութեան մեղքերը»՝ որոնք կը գայթակղեցնեն հինը, հինն ալ ունի ի՛ր մանկութեան մեղքերը՝ որոնք կը խրտչեցնեն նորը: Պարասրահներէն անդին խաղասեղանները չկա՞ն, ուր պատիւը դրամին հետ կը խաղայ, դրամը պատիւին հետ, եւ այս երկուքը կեանքին հետ: Այո՛, մէկին մերկ մեղքերուն մօտ կան միւսին քողածածուկ մեղքերը, աւելի եւս վտանգաւոր եւ ընկերային չարիքներու սնուցիչ: Բայց կան նաեւ յայտնիները: Ո՛վ չունի իր աչքին առջեւ հարսանեկան, դաշտագնացական, տօնախումբական պատկերներ, ուր չափազանցուած կերուխումին հետ գուսանական (շարքիական) ականջ եւ ազգային արժանապատուութիւն վիրաւորող կանչերը՝ շրթներով թէ գործիքներով՝ բոլոր պարերն ու պարերգները կը նսեմացնեն: Խօսքս գաւառիկ եւ հայեցի շունչով ոգեւորուած եւ պարկեշտութեամբ չափաւորուած ժամանցներուն համար չէ, որոնք դժբախտաբար քիչ չափով մեր արտատնկուած տուները կը գուարթացնեն: Նոյնպէս չեմ անգիտանար թէ քիչ չէ նաեւ թիւը այն ընտանիքներուն՝ որոնց մէջ նոր ոգիին հետ կը վերապրին նաեւ հին ոգիին սակաւ մնացորդներ: Ընտանիքներ, որոնք ընտանեկան-ընկերային կեանքի փոխանցման շրջան մը կ'ապրին: Փոխանցման շրջան մը սակայն միշտ ալ վտանգաւոր է: Եւ այս ընտանիքները զերծ չեն այդ վտանգէն, քանի որ

անհաւասար են իրենց ոյժերը: Հինը աւելի նորի ազդեցութեան տակ է, քան նորը հինին: Իրերահասկացողութեան եզր մը գրեթէ չկայ: Հայը այնպէս ինչպէս որ եղած է իր անցեալի ժառանգութիւններով եւ ինչպէս որ է իր ներկայի նորակառոյց արժէքներով, չի խօսիր որոշ եւ ուժգին շեշտերով: Եւ նորը ոչ թէ *չուզեր*, այլ *չի՛ կրնար* գտնել կռուան մը՝ որուն վրայ դնէ իր ոտքը: Հինը չո՛ւզեր թէ չի կրնար տալ այդ կռուանը: Կը ցաւիմ ըսել թէ յաճախ չուզեր տալ: Չի ինքն ալ է առաջնորդուած առաւել չափով նիւթապաշտիկ գրգիռներէ եւ մտահոգութիւններէ: Հոգեկան-բարոյական, կրօնական-ազգային արժէքներ նուազ կը խանդավառեն զիրենք ալ: Աննշան կարծուած կէտ մը միայն մատնանշենք ու անցնինք.- անուններու այլակերպութիւնն է այդ նոյն իսկ հիներուն կամ գրեթէ-հիներուն մօտ: Դժուար չէ վերլուծել այս հոգեբանական երեւոյթը: Պակասը գաղափարապաշտիկ արիութեան՝ զոր պիտի չի կրնար ստորագնահատել նոյն իսկ այս երկրի առողջ ոգին: Եւ մարդիկ դժուար թէ ըլլան գաղափարապաշտ՝ եթէ իրենց պակսի վերել մատնանշուած խորունկ հաւատքը եւ անոր լծորդուած մաքուր ազգասիրութեան մը պայծառ գիտակցութիւնը:

Այս սրտցաւ տողերը գրողին ժամանակակից սերունդին է որ կը խօսիմ մասնաւորապէս, որ ունի կէտ դարու կեանքի մը փորձառութիւնները: (Վասնզի մարդկային կեանքի առաջին տասնեակն իսկ ունի իր փորձառութիւնները, որոնք ենթագիտակցական ոչ

նուազ կարելոր ատաղձներ կը կազմեն կեանքի ամբողջական կառուցուածքին): Մեծագոյն պատասխանատուութիւնը նոր սերունդին հանդէպ մե՛ր ուսերուն վրայ է որ կը ծանրանայ:

Իմաստունին մէկ թելադրական պատկերովը վերջացնենք այս հատուածը:

«Բրուտը կը լմէ կակուղ կաւըք եւ կը դնէ գայն դուրգին վրայ (ու կը դարձնէ), ստեղծելով անկից, մեծ աշխատութեամբ, անօթներ՝ յարմար մեր գործածութեան: Այո՛. ան միեւնոյն կաւէն կը շինէ անօթներ՝ որոնք կը յատկացուին մաքուր ծառայութեան, եւ ուրիշներ ալ՝ ստոր հակառակը: Բրուտը ինքն է դատաւորը՝ կազմելու իր անօթները այս կամ այն կերպով» (Իմաստ. Սողոմոնի. ԺԵ. 7):

Նոր սերունդը կաւ մըն է արդարեւ ոչ միայն կակուղ ու կերպընկալ, այլ նաեւ արժէքաւոր կարելիութիւններով օժտուած:

Կրնա՞ք ըլլալ ճարտար բրուտներ՝ դարձնելու այդ մարդկային կաւերը ձեր դուրգերուն վրայ եւ *ստեղծելու* անոնցմէ ազնիւ ու այս երկրին ու մեր Ազգըն համար պիտանացու անօթներ ՀԱԻԱՏՔԻ, ԿԱՄՔԻ, ԳՈՐԾԻ, ՆՈՒԻՐՈՒՄԻ:

Ստեղծագործ ոյժը կուտայ ձեզի մեծ Ստեղծագործը, եթէ կրնաք գտնել գայն ձեր մէջ Սիրով զօրացած կենդանի Հաւատքով:

## Հ Ո Վ Ի Ի Ն Ե Ր

Եղբայրներ ի Քրիստոս, որովհետեւ Աստուած զձեզ «ԴԵՏ» է նշանակել իր ժողովուրդին եւ «ՀՈՎԻԻ» իր «ԲԱՆԱԲՈՐ ՀՕՏ»-ին Հայաստ. Եկեղեցւոյ արօտավայրին մէջ, կը սիրեմ վստահ ըլլալ թէ ձեր կոչումին օրէն իսկ դուք գիտակ էք եղած ձեր հովուական ծանր այլ քաղցր պարտականութեանց: Դուք ինքնին իսկ «աստուածուսոյցներ»՝ պետք չկայ որ մարդիկ ստրվեցնեն ձեզ հրամայական պահանջները ձեր կոչումին ու պաշտօնին: Բայց, ըստ որում մենք եւս մահկանացուներ ենք, որով եւ տկար բնութեամբ սխալական, եւ որովհետեւ մոռացումն իսկ անբաժան մէկ թերութիւնն է այդ բնութեան, պարտք կը նկատեմ *յիշեցնել միայն* ձեզ ինչ որ թերեւս իմ մոռացումներս, եւ՝ անդրադարձումի պատեհութեամբ՝ վերյիշումներս եղած ըլլան:

Եւ որպէսզի խօսքին հեղինակութիւնը իմ տկարութենէս բխած չըլլայ՝ պիտի ոգեկոչեմ նախ Ծնորհալի Խօսնակը Հայաստ. Եկեղեցւոյս: Ի՛րն է քաղցր ձայնը՝ զոր երկինքէն փոխ կ'առնէ եւ որ իր մաքուր խղճմտանքէն կ'արձագանգէ.-

*«Ծաներուք եւ զայս, զի կոչումն անուան քահանայութեանդ ձերոյ ո՛չ ի մարդկանէ եւ ո՛չ ի ձեռն մարդոյ, այլ յայնմանէ՝ որ կոչեցաւ քահանայ ըստ կարգին Մելքիսեդեկի, որ եւ ինքն է ճշմարիտ քահանայ եւ քահանայապետ եւ պատարագ Աստուծոյ Հօր: Եւ Նա ետ ձեզ զկոչումն անուան իւրոյ, եւ յանձն արար ընդ անուանն*

եւ զգործն իւր՝ հովուել զժողովուրդ իւր, եւ ուսուցանել միշտ զգործս բարիս, եւ տալ զանձն օրինակ բարեաց ամենեցուն, ըստ որում եւ Պօղոս գրէր առ Տիմոթէոս, թէ՛ «Մի՛ անփոյթ առնէր զշնորհացդ որ տուաւ քեզ ի ձեռնադրութենէ երիցութեան»։ Եւ դարձեալ թէ՛ «Քահանայք կրկին պատուոյ արժանի եղիցին, որք աշխատիցին քանիւ եւ վարդապետութեամբ»։ Վասն որոյ աղաչեմք զի ըստ անւանդ կոչման եւ զգործն կատարիցէք. եւ որպէս ՀԱՐՔ ԵՒ ԾՆՈՂՔ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԶԵՌՈՅ՝ յամենայն ժամ տուք նոցա զհոգեւոր խրատս՝ միշտ ուսուցանելով յեկեղեցւոջ, ի հրապարակս եւ առտնին, զամենայն ոք ըստ իւրաքանչիւր հասակի զգուշացնելով եւ յորդորելով յաստուածայինսն»։ (Ն. ԾՆՈՐՀԱԼԻ, ԸՆԴՀԱՆՐԱՎԱՆ ԹՈՒՂԹ, Էջ 52):

«Ղէտ» մըն էք, ո՛չ թէ վարձուած՝ մարդոց կողմէ, այլ կոչուած՝ Աստուծմէ։ «Հայր եւ ծնող» էք, արդարեւ, ո՛չ թէ միակ ընտանիքի մը, հապա բազմաթիւ տուներու, որոնց պիտի մատակարարէք ո՛չ թէ «կորստական կերակուրը», այլ «երկնքի ճշմարիտ հացը»՝ «որ կեանք կուտայ աշխարհի»։ Այդ հացը վերացականութիւն մը չէ, անհաշտ մեր իրական պահանջներուն. զի քաջ գիտէք թէ «Աստուծոյ փառաւորութիւնը», թէեւ կազմուած «սուրբ սիրտերով եւ ուղիղ հոգիներով», գաղափարական լրումն է կեանքէն բխած եւ կեանքին անդրադարձած *իրականացած* եւ ԻՐԱՎԱՆՄՆԱԼԻ ճշմարտութեանց։ Իբրեւ «աշխարհի յոյս»՝ ձե՛զ անկ է առաջնորդել հոգիները այդ յաւիտենական ճշմարտութեանց,



ունենալով ձե՛զ ալ որպէս առաջնորդ *«Հաւատքի Զօրագլուխը»*: Եւ իբրեւ *«Երկրի աղ»* պաշտօն է տրուած ձեզ համեմելու կենցաղական այն բոլոր անհամութիւնները՝ որոնցմէ զերծ չէ որ եւ է ժողովուրդ, իբր անհատ, իբր ընտանիք եւ իբր ընկերութիւն: Գիտութիւնը աստուածային ուսմանց - *«մանկութեան ընկեր»* կոչուած Առակագիրէն - ինչպէս նաեւ արտաքին գիտութիւնք անհրաժեշտութեան չափով, կ'աւելցնեն ներգործութիւնն ու ազդուութիւնը ձեր լոյսին. իսկ հեզութիւնն ու խոնարհութիւնը քրիստոսատիպ նկարագրին՝ կ'առատացնեն որակական արժէքը ձեր աղին: Բարոյական նեխութիւնները արգիլող հաշտարար ա՛ղը, որուն այնքան պէտք ունի մարդկութիւնը ամէն ժամանակի մէջ եւ ամէն տեղ: Եղբայրնե՛ր, մի՛ թաքցնէք ձեր լոյսը գրուանի տակ, սիրելով *«զկուրութիւն տգիտութեան քահանայական ուսմանց յաղագրս ծուլութեան կամ աշխարհական զբաղմանց»* (ԸՆԴՀ. Էջ 59). եւ մի՛ թոյլ տաք որ անհամի ձեր աղը, զլանալով բաշխել զայն *«ի ժամու եւ ի տարածամու»* անխտիր ամենուն՝ որ պէտք ունին անոր: Նոյն իսկ անոնց՝ որ կը մերժեն զայն *տգիտութեամբ*: Չի ճշմարիտ գիտութիւնը միշտ դէպ ի լոյս կ'արեգդիմէ: Ցոյց տուէք ՀԱՄԲԵՐԱՏԱՐ ՈԳԻ. վասնզի հոգւոյն զրահը ուրացումներու եւ ամբարշտութեան դէմ՝ սիրոյ եւ հաւատքի վրայ հիմնուած եւ յոյսով հաստատուած համբերութիւնն է: *«Մի՛ բարկացող»*. *«զի բարկութիւնը յիմարներուն ծոցին մէջ կը հանգչի»* (Ժողովող, Է. 10) եւ

«ինաստունները կը կորսնցնէ» (Առակ. ԺԴ, 35): Բարկութիւնը սկիզբն է ատելութեան, որ կրնայ քանդել աւետարանիչի գործը: Եւ «եթէ որ ի քահանայից խոռովելոց ընդ ընկերի՝ սիրէ զատելութիւն քան զսէր, եւ զխոռովութիւն քան զհաղաղութիւն, եւ ոչ լուծանէ զտրտմութեան պատճառն եւ հաշտեցի ընդ եղբոր իւրում ի խոնարհել միոյն եւ ի խնդրել զհաշտութիւն, մի՛ իշխեսցէ քահանայութիւն առնել, որչափ զդէն տրտմութեան եւ բարկութեան յինքն բնակեցուցանէ. զի «զի՛նչ հաղորդութիւն է լուսոյ ընդ խաւարի, ասէ Առաքեալ, կամ Քրիստոսի ընդ Բելիարայ»» (ԸՆԴԿ. Էջ 58): Ա՛յլ է անշուշտ «արդար ցատումը», որ «Տան նախանձ»էն կը փայլատակէ, եւ մեղքերը, ո՛չ թէ մեղաւորները, կը շանթահարէ: Չի գիտէք, պատուական եղբայրներ, թէ մեղաւորի մը արժէքը *իննսունեւինը* արդարներու կշիռով կը չափուի աստուածային գթութեան ձեռքին մէջ: Սովորական կորուստ մը կը տրտմեցնէ մեզ. հոգիի մը կորուստը կը տրտմեցնէ զԱստուած: «Դուք օծութիւն ունիք Սուրբէն». ամուր եւ միշտ բռնեցէք այդ կշիռը ձեր օծեալ ափերուն մէջ, ինչպէս անջինջ՝ արդարութեան դրոշմը ձեր միտոնօծ ճակտին վրայ: Ոչ ոք թող իրաւունք ունենայ մեղադիր ըլլալու ձեզ արդարացիօրէն: Իսկ անփոյթ եղէ՛ք, մանաւանդ թէ յիշեցէ՛ք տիրական երանութիւնը ցնծութեամբ, երբ «նախատեն զձեզ եւ հալածեն, եւ ի զուր ամէն չարախօսութիւն ընեն ձեր վրայօք», եւ այդ՝ Անոր համար՝ որ բոլորիս Տէրն է ու վարդապետը, ինքն ալ հալածուած

մը ապիրատներէն՝ որոնց համար գիտցաւ աղօթել ներողաբար: Բաւական է, սակայն, որ այդ հալածանքը չգայ պարտազանցութենէ, որուն համար հաշիւ պիտի տրուի Աստուծոյ՝ խղճի դատաստանին առջեւ:

Եւ գիտէք դուք թէ ի՞նչ է ամփոփոյքը ձեր կոչումի բովանդակ պարտականութեանց.-

ՆՈՒՒՐՈՒՄ:

Ոչ ոք կրնայ կատարելապէս նուիրուիլ - *«տալ զանձն»* - առանց կարենալ *ունայնացնելու* այդ անձին մէջ ինչ որ կայ իբրեւ այլամերժօրէն եսապաշտ միտում, իբրեւ առաւելագանց մտահոգութիւն, իբրեւ անյարացոյց աշխարհասիրութիւն, իբրեւ մուրացիկ փառամոլութիւն, եւ առանց լեցնելու այդ պարապը ողջակիզուող սիրոյ եւ նահատակուելու ատակ ու պատրաստ հաւատքի պտուղներով:

Հովիւին մեծագոյն պարտականութիւններէն մէկն ալ է *«ամենեցուն զանձն ՕՐԻՆԱԿ կացուցանել զործոց բարութեան»*: Եւ ասիկա անհնար է առանց բոլորապտուղ նուիրումի:

Անձին օրինակին դեմ կայ *«այս աշխարհի»* օրինակը, այնքան ցանցող՝ մատաղ հոգիներու համար մանաւանդ: Օրինակը, որ պիտի գայ հովիւէն, պիտի խտացնէ իր մէջ բարոյական այնքան զօրութիւն՝ որ կարենայ չեզոքացնել այդ ցանցը: Անձնական այդ օրինակի՛ն մէջ պէտք է ցոլանայ ամէն բանէ առաջ, իր լման գեղեցկութեամբն ու ազդուութեամբը, *նկարն* Անոր՝ որ ունի օծութիւնը աստուածային եւ մարդկային կատարելու-

թեան: Առաւելապէս հոգեւոր պաշտօնեաներուն պարտքն է ձգտիլ այդ կատարելութեան:

Նուիրումը կը պահանջէ նաեւ *անձանձրոյթ ուսումը*: Քրիստոնէական Կրօնը, հոգեկան ճշմարտութեանց եւ բարոյական սկզբունքներու համադրոյթ, չի կրնար անտեսել այն բոլոր լոյսերն ալ՝ զորս մարդկային իմացականութիւնը ձեռք կը բերէ գիտութեան եւ արուեստի զանազան կալուածներուն մէջ՝ քաղաքակրթութեան մթերքը ճոխացնելով: Իմացական ոչ մէկ լոյս օտար է աստուածային Լոյսին, հետեւաբար եւ խորշելի կամ զանցառելի: Գիտութիւնը, զոր քահանային - «Տիրոջ պատգամաւոր»ին - շրթները պարտին «պահել» *զգուշութեամբ՝* ծանօթութիւնն է աստուածատուր կեանքին: Եւ կեանքս այնքան աւելի կատարեալ է՝ որքան իր յայտնութիւնները շատ են: Իմացական լոյսը կը բազմապատկէ այդ յայտնութիւնները: Ատոնց մէջ իմաստութիւն է տեսնել այն բոլոր թաքուն ճշմարտութիւնները՝ զորս Յիսուս անժամանակ էր գտած պարզելու իր աշակերտներուն, զի դեռ անկարող էին «*հանդարտել*», տանել (Յովհ. ԺԶ. 12):

Եղբայրներ, այս երկիրը անսահման պատեհութիւններ կուտայ մեզի՝ աւելցնելու մեր մտքի պաշարները հոգեւոր եւ իմացական գանձերէն: Ոչ ոք թող յաւակնի խորհելու թէ ալ ոչինչ ունի սորվելու. թէ՛ աւետարանը բաւական է, եւ այլն: Աւետարանը, այո՛, ծով անսպառ է, որուն յատակը պահուած կան թանկագին մարգարիտներ: Ճարտար սուզակ մ'ըլլալ ան-

հրաժեշտ է՝ եւեւան բերելու համար զանոնք: *Ուսանիլ եւ ուսումնասիրել*,-ահա միակ միջոցը՝ ունենալու այդ ճարտարութիւնը:

Մեր խօսքը չէ անշուշտ այն գիտութեան մասին՝ որ թիւի ու հաշիւի, քիմիական բաղադրութեանց եւ տարբադադրութեանց, տիեզերական ֆիզիկական-մեքենական գաղտնիքներու հրաշալի աշխարհ մը կը պարզէ մեր առջեւ եւ տնտեսական կեանքը կը կառուցանէ նոր տուեալներու եւ հիմներու վրայ: Այս գիտութիւնը առանձին յաճախ «կը հպարտացնէ»: Այլ կ'ուզենք մատնանշել այն գիտութիւնը՝ որ, առաջինին հետ, եւ սերն ունենալով իբրեւ լծակից, կ'ապահովէ մանաւանդ ընկերային-բարոյական կենցաղի «շինութիւնն» ու բարձրացումը, աւետարանական «տնտեսութիւնը»:

Գուցէ ոմանք առարկէն – Մեր տարիքը լեցուած է արդէն. ալ ի՞նչ կրնանք աւելցնել ասկից վերջ: Տարիքը երբեք արգելք մը չէ, սակայն, *ուսանելու*, եթէ կայ *հիմքը* եւ չի պակսիր *կամքը*՝ այդ հիմքին վրայ բարձրացնելու շէնքը *ամէնօրեայ յառաջդիմութեամբ*, անստգիւտ մնալու համար աւետարանական ծառայութեան մէջ:

Միակ չքմեղանքը, զոր պիտի ունենան ոմանք, այն խրամատն է՝ որ կայ իրենց հոգեւոր եւ իմացական պատրաստութեան եղանակին եւ իրենց մշակութեան դաշտի բնոյթին միջև: Այն ատեն այսպիսիներուն կը մնայ համեմատել իրենց կարողութեանց տարողութիւնը պահանջներու քանակին եւ որակին հետ եւ ըստ

այնմ գծել իրենց գործունեութեան ուղին ու սահմանը, ի հարկին քաջութիւնն ունենալով ապահովելու աննախանձաբար օժանդակութիւնը այլապէս պատրաստուած գործակիցներու: Այսպիսի ուղիղ ընթացք մը, որ պէտք ունի անշուշտ դրական գնահատման եւ քաջալերութեան, պիտի բարձրացնէ բարոյական վարկը ենթակային: Այսպիսի՝ մէկն է իսկապէս այն բարի եւ «քաջ» հովիւը՝ որ կը դնէ իր անձը իր ժողովուրդին վրայ:

Լծակից եղբայրներ, թոյլ տուէք որ ձեզ ուղղուած – եւ ինձ ալ անդրադառնալի – այս անկեղծ տողերը վերջացնեն դարձեալ Շնորհալի Հայրապետի խօսքերով.-

*«Եւ արդ, քահանայիցդ առ ի խրատ գոր գրեցաք սակաւութ, ոչ իշխանաբար հրաման տալով՝ այլ ծառայակցապէս աղաչելով, բաւական լիցի առ ի մէնջ: Իսկ զպակասեալն ի մերոցս՝ ունիք հմտանալ կատարելապէս ի հարցն առաջնոց կանոնաց գրոց, որովք օրինադրեցին զմանկունս Եկեղեցւոյ ի փառս Աստուծոյ»:* Պիտի ուզէի թերեւս աւելցնել միայն,- կրնաք հմտանալ այն բոլոր փորձառութիւններէն՝ զորս եկեղեցին ձեռք բերած է դարերու ընթացքին իր լուսաւոր առաջնորդներուն միջոցով, ասոնցմէ մէկն ըլլալով նոյն ինքն աննման Ներսէս Շնորհալին եւ իրեն քսաներորդ դարու նմանակը Դուրեան Շնորհալին:

# ՀՈԳԵԻՈՐ ՇՈՂԱԿԱԹՈՒՄՆԵՐ



ՀԱՐՑԱՐԱՆ

1. Ձեր եկեղեցական թեմի շքանշանի մէջ որքա՞ն հայութիւն կը բնակէի:  
Այս բնակչութեան հարիւրին զա՞նի տակտը մեր Հայաստանեայց եկեղեցւոյ զուակներէ կը բաղկանայ:
2. Ձեր եկեղեցւոյ տարտու անդամներու թիւը որքա՞ն է, որքա՞ն անվճար անդամ ունիք:
3. Կերակորեայ վարժարան ունի՞ք:  
Ի՞նչ մեթոտով գասեր կ'աւանդուին:  
Եթէ ունիք, որքա՞ն է ուղեկրտութեան թիւը:
4. Աղլոյսին զպրոց կա՞յ մեր թեմին մէջ:  
Եթէ կայ որո՞նք են ուսուցիչները եւ ուսումնական խորհրդոյ անդամները: Ինչ էջ մարտի ուսուցիչներէն  
Գաւրթիացիք զանի՞ր գասերու բաժնուած են: Ի՞նչ տեսակ գտադրքերով կ'աւանդուին  
զասեր: *Քրիստոս Զեմբա է'աւանդարեւ Լայպցիգէ Կատոլիկական  
Կարմիր Տնակ, Կատոլիկական Ծառայութեան Կարգաւորման Մասնաճիւղի անդամ*
5. Բանի՞ր հաս կազմակերպութիւններ կան մեր եկեղեցւոյ մէջ: Որքա՞նիւմ, ենեղեցատիրոջ,  
Գպրոց զոս եւ այլն:  
Ի՞նչ է իւրաքանչիւրին նպատակը եւ ուղղութիւնը: *Կամարացի ունեն. զորն իջի արեւմտ:*  
Որո՞նք են ներկայ վարչութիւններու գլխավոր: *Յիշմարտարայի Պատմա-Տնային Եւ  
Պատմա-Պատմա-Տնային Կատոլիկական Կարգաւորման Մասնաճիւղի անդամ*
6. 1927-ի շքանշանի մեր թեմին մէջ զանի՞ր երախայ մկրտուցուս:  
Բանի՞ր ննկեցեայ թաւուցուս:  
Բանի՞ր ամուսնութիւն տեղի ունեցուս:  
Բանի՞ր ամուսնալուծուած, եթէ կրթիք կայ:  
*Յիշմարտարայի Պատմա-Տնային Կատոլիկական Կարգաւորման Մասնաճիւղի անդամ  
Պատմա-Պատմա-Տնային Կատոլիկական Կարգաւորման Մասնաճիւղի անդամ  
Պատմա-Պատմա-Տնային Կատոլիկական Կարգաւորման Մասնաճիւղի անդամ*
7. Ի՞նչ է մեր եկեղեցւոյ տարեկան պիտանէն:  
Ի՞նչ են մուտքէ համեմատական աղբիւրները:  
Ելքը ի՞նչ բաներէ կը բաղկանայ:  
Սեփհական եկեղեցի ունի՞ք, ե՞րբ հաստատուած է:  
Վրան պարտք կա՞յ, եթէ կայ՝ որքան:  
Բանի՞ր տարիներէ ի վեր ունիք եկեղեցական կազմակերպութիւն:  
*Պատմա-Պատմա-Տնային Կատոլիկական Կարգաւորման Մասնաճիւղի անդամ  
Պատմա-Պատմա-Տնային Կատոլիկական Կարգաւորման Մասնաճիւղի անդամ  
Պատմա-Պատմա-Տնային Կատոլիկական Կարգաւորման Մասնաճիւղի անդամ*
8. Որո՞նք են մեր հոգաբարձութեան անդամները:  
Ի՞նչ է մեր գլխավոր մտայուն հասցեն:  
Ի՞նչ է մեր եկեղեցւոյ հասցեն:  
*1927ի Մայիսի 27-ի, 91  
Ելք 2101, 10  
Կատոլիկական Կարգաւորման Մասնաճիւղի անդամ*
9. Ձեր անդամական ժողովի գլխավոր որո՞նքն է կը բաղկանայ:  
Տարին ծառայութեան զանի՞ր անդամական ժողով կը զամարէք:

Գարեգին Եպս.-ի Հարցարանը՝ Արեւմտեան թեմի մասին  
ամբողջական տեղեկատուութիւն կազմելու համար, 1928 թ.:  
Առաջնորդարանի արխիւ, թղթածրար 1928-1933:



## ՔԱՀԱՆԱՑՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ

Քահանայ եղբայրներ, տեսեք իմաստութիւնն ու հաւատքի խոր գիտակցութիւնը ժողովուրդին, որ կարողացեր է, կաթողիկոս և եպիսկոպոս ունենալով մէկտեղ գլուխ հայ հոգեւորական մարտիկներուն, ասոնց նահատակութիւնը փառաւորել՝ օրհնութեամբ յաւերժացած յիշատակով մը՝ *ՄՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ* արժանավայել անունով:

Ս. Սահակ-Մեսրոպեան աշակերտներէն էին ասոնք՝ իրենց միտքը պայծառացած աստուածային գիտութեան լոյսով և սիրտ ու հոգին վառուած քրիստոնէական սիրով և հաւատքին հուրով:

Մեսրոպեան Տեսիլէն շող մը շնորհալի լուսաւորեր էր պատկերն այն կոչումին՝ որ Աստուծոյ ձայնով ընծայեցուցեր էր զանոնք քահանայական նուիրական պաշտօնին: Ահա թէ ինչո՛ւ անոնք ալ, հետեւելով Մեծ-Քահանայապետի օրինակին, ըմպեցին արիաբար և անվարան՝ մարտիրոսական բաժակը, Վարդանանց հետ, և մահով մահը կոխոտեցին: Մեր քահանայութիւնը գինն է նաեւ անոնց արիւնին: Երանի՛ թէ գիտակ ըլլայինք այս ճշմարտութեան:

Կրօնական պատերազմը, զոր Վարդանանք մղեցին մագղեգական մոխրապաշտութեան դէմ, չուզելով փոխանակել անով աստուածային հուրը քրիստոնէութեան, իր ներշնչումն ու բոցը առած էր այս քահանաներուն քաջարի կեցուածքէն: Դուք լսեցիք հրաշունչ

ճառը Ղեւոնդին: Լսեցիք հոգեշունչ շարականը մեր Եկեղեցիին, Շնորհալիի գրչով մեզ աւանդուած.-

«Լուսաւորիչն ամենեցուն,  
Ղեւոնդիէ սուրբ վարդապետ,  
Խրատեալ լցոյց զաշակերտեալսն.  
Ծաւալեալ զլոյս գիտութեան  
Յոգիս արանց կատարելոց.  
Կամաւոր յօժարութեամբ  
Կատարեցան սիրով Փրկչին»:

Քահանան, որ կը դառնայ մարտադաշտին վրայ «վարդապետ» և կը լուսաւորէ, կը խրատէ ու կը խրախուսէ աւետարանի աշակերտները, ծաւալելով անոր գիտութեան լոյսը հասունցած մարդոց հոգիներուն մէջ, որոնք՝ յօժարական նահատակուեցան Փրկչին սիրով:

Արիւնի նահատակութիւն՝ չունենալով տկարացումը ուրացումի: Չի հագեր էին սպառնազինութիւնը Հոգւոյն երկնէջ զօրութեան: Ա՛յսպէս է Աստուծոյ ճշմարիտ քահանան:

Բայց ո՞վ կամ ի՞նչ քան պատրաստած էր Ղեւոնդեանք այս քահանայութեան և մարտիրոսութեան: Նախ քան նահատակութիւնը արիւնի՝ անոնք ունէին մարտիրոսութիւնը, այսինքն՝ վկայութիւնը ուրիշ զօրութեան մը՝ որ լոյսէն կուգար: Լոյսէն հաւատքին և գիտութեան: Լոյսէն ասոնցմէ քիսած ճշմարտութեան՝ Մեսրոպի տեսիլքով մարմին առած, կեանք եղած: Վկաներն էին, այո՛, քահանաները այդ տեսիլքին, այդ կեանքին: Բայց մանաւանդ կ'ապրէին այդ տեսիլը, այդ

կեանքը: Անոնցմէ կ'առնէին իրենց ներշնչումները: Անոնցմով լուսաւորուած էր իրենց ուղեգիծը: Անոնցմով նետուեցան դէպի դաշտը արիւնի նահատակութեան՝ փրկելու համար Աստուծոյ Եկեղեցին ուրացումի ամօթէն և կործանումէն: Փրկելու համար Սահակ – Մեսրոպով բնորոշող դրոշմ առած Լուսաւորչի և իր յաջորդներուն, մասնաւորապէս Մեծն Ներսէսի ստեղծագործութիւնը:

Թողունք, սակայն, եղբարք պատուականք, այս խորհրդածութիւնները՝ գորս Տօնը կը ներշնչէ մեզի և որոնցմով կը խանդավառէ զմեզ: Արդար է որ պահ մը անդրադառնանք քահանայական կոչումին և պարտականութեանց վրայ:

Քահանայ՝,- ո՛րքան բարձր և որքան խոնարհ կոչում: Կը հասնի՞ն բոլորը այս բարձրութեան և կ'իջնէ՞ն այս խոնարհութեան: Կ'ըմբռնէ՞ն լեցունութիւնը քահանայագործութեան իմաստին: Պիտի չքննեմ սիրտերը և պիտի չփորձեմ «երկկամունքները», խորութիւնները խղճի: Այդ՝ Աստուծոյ գործն է: «Նա է ճշմարիտ ոստիկանը սրտին» (Իմաստ. Ա. 6):

Չեմ խօսիր քահանայութեան ծիսակատարութեան մասին, որ անշուշտ պահանջելի պարտականութիւններէն մէկն է, բայց քահանայական պաշտօնին ոգին չէ: Ամենէն անթերի ծիսակատարութիւնն անգամ, երբ դատարկացած է այս ոգիէն, ոչինչ կ'արժէ, վասնզի ոչինչ ունի *շինիչ*: Գեղեցիկ երգեցողութիւն, հանդիսական ձեւեր ու շարժումներ, որոնք արուեստէն աւելի ար-

ուեստականութիւններ կը ցուցադրեն, չեն ներկայաց-  
ներ պաշտամունքի ոգին: Երբ վարեն կ'սպասուի «հոգ-  
ւով երգեցողութիւն», ի՞նչպէս կարելի է հանդուրժել, որ  
վերը, սեղանին առջեւ աղօթքներն ալ վերածուին ան-  
հոգի երգեցողութեան, որպէս թէ ներդաշնակութիւն  
պահելու համար վարն ու վերը: Իօսք մը պարզօրէն  
արտասանուած և ճշմարտապէս իւրացուած, ոչինչով  
կը խանգարէ ներդաշնակութիւնը երգեցողութեանց:  
Այսպէս, օրինակ, «Իսկ մեք փառաւորեսցուք»ը, «Առէ՛ք,  
կերէ՛ք»ը, «Ի սուրբ, ի սուրբ»ը, եւ այլն, որոնք երգ չեն  
բնաւ և չեն կարօտիր եղանակի: Իօսքին իմաստին  
հասկացողութիւնը կրնայ սրբագրել այս թերին:

Կան ուրիշ ձեւեր ալ՝ որոնք կը մատնեն ոգիին ներ-  
կայութիւնը կամ բացակայութիւնը: Օրինակ, նիստ ու  
կացը, երթելեկը, բարձրաձայն հրահանգութիւններ  
դասերուն մէջ և դասէ դաս, որոնք հաւատացեալ աղօ-  
թողներու վրայ կը թողուն վատ տպաւորութիւն: Մեր  
շնորհալի հոգեւոր ծնողը: Դուրեան Սրբազան, իր  
պատկառանքի շուքը անբռնագրօսօրէն կը պահեր՝  
խոհուն աչքերը միշտ յառած սուրբ սեղանին:

Անցնինք ուրիշ կարեւոր և հիմնական կետի մը:

Քահանան ունի երկու պատուանուններ «Տէր  
Հայր» և «Տաներեց»: Երկու բովանդակալից բառեր,  
իբրեւ խտացում և բիրեղացում ամենէն ազնուական,  
ամենէն սրտագին զգացումներու: Այո՛, քահանան  
«տէր» է հայրութեամբ և կամ «հայր» է տիրութեամբ:  
Տէրհայրն է ժողովուրդին ընդհանրապէս և իր «ծուխ»-

երուն մասնաւորապէս: Ի՛նչ սրտախօսիկ բառ այս «ծովի»ը, որ պէտք է ծաւալի միշտ անուշաբոյր խունկէն քահանային՝ իրեն պատկանած տուներէն ներս: Խունկը շնորհալի խօսքերու, յորդորներու, յանդիմանութեան, ինդակցութեան և միախառնութեան՝ պարագաներուն համեմատ: Քրքջալիի ծիծաղներ, անհաճ ու թեթեւամիտ խօսակցութիւններ կամ պատմուածքներ, մէկ խօսքով կոչումին հետ անհաշտ թեթեւամտութիւններ՝ կ'եղծեն հեղինակութիւնը տիրութեան և կը դառնացնեն քաղցրութիւնը հայրութեան: Քահանան՝ այս ընթացքով՝ կը մարէ ծովիւր այդ տան:

Քահանային այցելութիւնները ոչինչ կրնան տալ տան, երբ անոնք կը կատարին միայն «տնօրհնէք»ներու առիթով, և ցաւալի է ըսել, նախընտրաբար այն տուներուն՝ որոնց աջհամբոյրը ցոյց կուտայ աւելի խոստմնալից աղբիւր: Այս այցելութիւնները պայմանագրական ըլլալով՝ չեն երբեք շինարար, ո՛չ այցելողին, ո՛չ ալ այցելութիւնն ընդունողին – յաճախ ակամայ – հոգւոյն համար: Իսկ քահանային այցելութիւնները պարտին ըլլալ հայրական սիրաջերմ շունչով հոգեշէն:

Գորով, հոգածութիւն, նուիրում, զոհաբերում, բխումներն են այն ապրումներուն՝ որոնց վճիտ աղբիւրն է ՍԷՐԸ: Աւելի զօրաւոր քան ռելե առաքինութիւն, աւելի զօրաւոր քան լեռը շարժող հաւատքը, աւելի զօրաւոր քան մահը: Վասն զի «*սէր երկայնամիտ է, քաղցրանայ, սէր ո՛չ նախանձի, ո՛չ ամբարիաւանէ, ո՛չ հպարտանայ, ո՛չ յանդգնի, ո՛չ խնդրէ զիւրն, ո՛չ գրգռի,*

*ն'չ խորհի գշար, ո'չ խնդայ ընդ անհրատութիւն, այլ խնդայ ի ստուգութիւն, ամենայնի տեւէ, ամենայնի յուսայ, ամենայնի համբերէ: Վասնզի սերը «լրումն է օրինաց»: Վասնզի «Սէր շինէ»: Կարդացէ՛ք՝ մտառութեամբ՝ «Սիրոյ Տաղը» Տարսնացի մեծ առաքեալին, «ընտիր անօթ»ին երկնաւոր առաքեալին (Ա. Կոր. ԺԳ. գլուխ): Կարդացէ՛ք սիրոյ բացատրութիւնը լոյսի և սիրոյ աստուածաբան ակետարանչին՝ սիրուած իր վարդապետէն: Կարդացէ՛ք Սիրոյ Խրատը՝ Յովհաննէս Պլուզ մեր վարդապետին.*

«ՍԷՐԸ ԿԸ ՇԻՆԷ» ահա զօրութիւնը Սիրոյ:

Եւ միթե՛ քահանային մտահոգութիւնը պիտի չըլլայ որ «Եկեղեցին շինութիւն առնուցու» (Ա. Կոր. ԺԴ. 5): Մասնաւորեցէ՛ք բառը, և պիտի գտնէք «առտնին եկեղեցի» բացատրութիւնը առաքելական շրջանին: Եւ ապա, և այսօր, ես ցոյց կուտամ ձեզի այդ առտնին եկեղեցին՝ քրիստոնէայ ընտանիքին մէջ, ՏԱՆ մէջ: Եւ քահանան՝ երեցն այդ տան,- ՏԱՆԵՐԷՑԸ: Եւ ինքն է, և պարտի ըլլալ շինողը այդ տան: Շինողը հայրական սիրով, տիրական քաղցր ու պատկառազորու հեղինակութեամբ:

Կ'ըմբռնէք, ուրեմն, որ ծիսակատարութենէն վեր կայ *հոգեւոր տնաշինութիւնը* որուն կոչուած և ընծայուած պաշտօնեան է քահանան: Կ'ըմբռնէք վեհութիւնն ու սրբութիւնը այդ կոչումին, որ «յերկնուստ» է, ունենալով վկայութիւնը անբիծ խղճմտանքին: Ձեզի կը թողում, իւրաքանչիւրիդ, քննութիւնը ճեր խղճմտան-

քին: Վա՛յ անոնց, որոնք չունին ականջ՝ լսելու անոր անսուտ վկայութիւնը: Կարդացէ՛ք Նարեկացին, որ ամենուն մեղքերը իր վրայ առած, ո՛րպիսի սուր լսողութեամբ ականջալուր կ'ըլլայ այդ վկայութեան: Տեւե՛ւք ինչ կ'ըսէ այդ վկայութիւնը, ի դէմս բոլորիս.-

«Ինձէն իսկ զիս՝ ոսկեղէն տախտակըս խօսուն  
Նըւիրեալ քունըդ պատգամի,  
Զգրեալս մատամբըդ Աստուծոյ,-  
Եղծի՛.

Որ և խորտակելն է իրաւացի...»

(Նարեկ, ԼԳ. Ը.):

Բայց ի՞նչ հրաշագործ խղճմտանք, որ *իրը չէ*, զի սրտի խորէն աստուածախօսիկ մ'է ինք. զի Աստուծոյ տեսութեամբ է մաքրագործուած և լուսաւորուած: Սակայն ԻԲՆ է ըրած զայն, ամենունը, իմս և ձերինը. և բիրեղեայ արցունքով և հոգեշունչ ողբերգութեամբ կ'ուզէ լուալ զայն, սրբել անոր արատները թաքուն: Կրնա՞նք, կրնա՞ք նմանիլ անոր, ոչ թէ անմեղ ըլլալով ամենուն մեղքը մեր մէջ փոխադրելով, այլ մեր իսկ մեղքերը տեսնելով: Ծածկատեսը Աստուած է. չենք կրնար կարկատուն տերեւներով մեր մերկութիւնը ծածկել: Զիղջի և ապաշխարութեան արցունքին հետ գիտակցութեան լոյսն է անհրաժեշտ՝ փարատելու համար խաւարը մեր հոգիին:

Քահանան նոյնպէս պարտաւոր է լաւ ուսումնասիրած ըլլալ այն պահանջները՝ զորս ձեռնադրիչ եպիս-

կոպտսը, ըստ Մաշտոցի, հարցումի ձեռով կ'ընէ ըն-  
ծայեալին: Ահա այդ պահանջները.-

1 - Կամաւորապէս և ոչ հրաւիրողներու հարկա-  
դրանքով մօտենալ քահանայական կարգին:

2 - Թողոյ աշխարհային զբաղումներու ամէն հոգ:

3 - Սուրբ անարատ պահած ըլլալ իր անձը՝ Աստու-  
ծոյ շնորհիւ և անոր ողորմած կամքով վարժուած ըլլալ  
մաքուր կենցաղի, ծննդէնէն սկսած մինչեւ վերջ:

4 - Ուխտել անձամբ հետեւիլ Քրիստոսի ընթաց-  
քին,- աղքատութեան, անօթութեան, ծարաւի, վիշտե-  
րու, հալածանքներու և չարչարանքներու՝ Քրիստոսի  
համար: Մէկ խօսքով՝ յանձնառու ըլլալ ամէն զրկանքի՝  
ի պահանջել հարկին:

6 - Չգաստութեամբ և արթնամտութեամբ մնալ ա-  
մէն ատեն Աստուծոյ պաշտօնին մէջ:

7 - Կատարել առաքելական և հայրապետական  
հրամանները և չընել անոնց կանոններուն հակառակ  
ուսուցումներ քրիստոնէական վարքին մէջ:

8 - Ունենալ դաւանութիւնը ուղիղ հաւատքին և հե-  
ռու մնալ աղանդաւորական, հերձուածողական և հե-  
րետիկոսական մոլորանքներէ:

Ասոնք և ձեռնադրութեան արարողութեան սքան-  
չելի յօրինուածքը, մարգարեական և առաքելական  
գիրքերէ և աւետարաններէ պատշաճ հատուածներով,  
իմաստալից աղօթքներով և շարականներով, լրջօրէն  
խորհրդածելի և հրահանգիչ են, որեւէ անձի համար՝ որ



կը կոչուի, աստուածային շնորհով, քահանայական սուրբ և պատասխանատու պաշտօնին:

Թշնամիները քահանայական կոչումին,- շա՛տ են անոնք. բայց գլխաւորն է «արծաթասիրութիւն»ը, որով կը մոլորի ու կը մոլի եկեղեցւոյ պաշտօնեան և մերկանալով Աստուծոյ հոգին՝ կը հագնի սատանան, ինչպէս կ'ողբերգէ շարականը Յուդայի համար:

Մի՛ թերթւօրէն առնէք այս խօսքերը աւելի չծանրացնելու համար զանցառութիւնը պատասխանատուութեան և վճիռը Աստուծոյ անաչառ դատաստանին: Եւ նոյն ատեն չկորսնցնելու համար հաւատացեալներուն վստահութիւնը և չդառնալու անոնց քար գայթակղութեան:

Նիւթը չէ երբեք խայծը այս սուրբ կոչումին, այլ ոգին է՝ որ կը ձգտի դէպի այդ կոչումը: Այդ ոգին է հոգին Քրիստոսի՝ որ յաղթեց ամէն փորձութեան, ամէն հրապուրանքի. և արիաքար ու անգանգատ ուսելով իր ծանր այլ փրկարար Խաչը, «հովիտի ծաղիկ»ի մը պէս, բարձրացաւ անոր վրայ և մահուամբ յաղթեց մահուան՝ կեանք պարգեւելով մեզի:

Հրահանգիչ է նաեւ երջանկայիշատակ Տ. Գեորգ Դ. մեծագործ կաթողիկոսին խրատական պատուիրանները եպիսկոպոսներուն և քահանաներուն: Անոնք հրատարակուած են ձեռնադրութեան մաշտոցին մէջ և պիտի արտատպուին մեր «Շողակաթ»ի մօտաւոր թիւերէն մէկուն մէջ: Կարեւորութեամբ կը յանձնարարենք կարդալ զանոնք:

Ահա՛ ինչ որ փոքր ի շատե կրնայի թելադրել ընդ-  
հանրապետ եկեղեցական և մասնաւորապէս քահանա-  
յական դասերուն ՍՐԲՈՑ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ՔԱՀԱՆԱՅԻՑ  
տօնախմբութեան առիթով:

Չկարողացայ խօսիլ զանոնք ձեզի բանիւ բերանոյ,  
հիւանդութեանս պատճառով՝ որ կ'արգելափակէ զիս  
դեռ ժամանակի մը համար անկողնոյ մէջ: Հոգւով ձեզի  
հետ եմ. կը շնորհաւորեմ զձեզ և սրտանց կը մաղթեմ  
բոլորիդ, եղբարք պատուականք, Սրբոց Ղեւոնդեանց  
քահանայից մաքրամաքուր և աստուածահաճոյ ոգին:

Դուք ալ աղօթեցէ՛ք ինձ համար, որ նոյնպէս կը  
կարօտիմ այդ ոգիին, անթերի կատարել կարենալու  
համար իմ վրայ գրուած, քահանայականին հետ, նաեւ  
վերադիտողի – եպիսկոպոսի – պարտականութիւննե-  
րը՝ Աստուծոյ շնորհիւ և օրհնութեամբ և ամենուղ՝ ձեզ  
վիճակուած սուրբ պաշտօնի խղճամիտ կիրառու-  
թեամբ և գործակութեամբ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և սերն  
Աստուծոյ Հօր և հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ և սերն իմ  
ընդ ձեզ ընդ ամենեսին ի Քրիստոս Յիսուս. ԱՄԷՆ:

11 Փետրուար 1958

Տօն Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՆԵՐԸ

### ԵՒ ԱՆՈՆՑ ԱՐԺԷՔԸ

«Ծառայք անպիտանք եմք, Չոր պարտեաքն առնել արարաք»: (Դուկ. 17:10)

Պարզութեան վսեմութիւնը և պերճանքի նսեմութիւնը,- այս երկընտրանքին առջեւ կը տարուբերի այսօր մեր հոգեւորականութիւնն ընդհանրապէս: Պարտակատարութիւն անշահախնդիր և պարտանանաչութիւն պայմանագրական: «Ծառայք անպիտանք եմք, զոր պարտեաքն առնել՝ արարաք»: «Անպիտան» բառն առէք աստուածային կշիռի ծանրութեամբ: Կը բացատրենք յետոյ: Խօսքը վկայութիւնն է մաքուր խղճմտանքին: «Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատարիմ», - լուսաբանութիւնն է առաջինին:

Կարդացինք քահանայի մը շնորհակալութեան գիրը՝ ուղղուած Ամենայն Հայոց Հայրապետին, այն «վարդապետական խաչ»ին համար՝ զոր Ն. Ս. Օծութիւնը շնորհեր է իրեն – Եկեղեցւոյ ուխտեալ պաշտօնեային – անոր մատուցած ծառայութեանց ի վարձ:

«Այս թանկագին պարգեւը – կը գրէ արժանապատիւ քահանան – աւելի եւս իւթան պիտի ըլլայ կրկնապատկելու նուիրումն եւ հաւատարմութիւնս՝ հանդէպ Մայր Աթոռին ի Ս. Էջմիածնին: Անոր ազգընտիր եւ իմաստուն Գահակալին»:

Այս տողերը կը թելադրեն մեզ հետեւեալ խորհրդածութիւնները: Եթէ այդ «թանկագին պարգեւը» եղած

չըլլար, այդ քահանան արդեօ՞ք պիտի չջանար «կրկնապատկելու» իր նուիրումն ու հաւատարմութիւնը՝ հանդէպ Մայր Աթոռին, եւլն: Այս չէ՛ր իր պարտականութիւնը առանց վարձատրութեան ակնկալութեան: Չենք ուզեր կասկածի տակ դնել իր նուիրումն ու հաւատարմութիւնը՝ հանդէպ Աստուծոյ և իր պաշտօնին, չափ մը երեւակայելով ատոր համար, կամ պայման մը աւելին ընելու: Պիտի չկատարէ՛ր՝ ծառայելու համար եկած Յիսուսի յանձնարարութիւնը մեզի. «Երբ կը կատարէք ամէն ինչ որ հրամայուած է ձեզի՝ ըսէք, թէ Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ ըրինք»: Հաշիւ պիտի տանք մեր խղճմտանքին և Աստուծոյ: Պիտի շահարկենք մեզի յանձնուած «տաղանդը»: Եւ պիտի լսենք, այն ատեն, Աստուծոյ վճիռը. «Ապրիս, բարի եւ հաւատարիմ ծառայ». կամ «ծառայ չար եւ վատ», համաձայն մեր գործելակերպին:

Ճշմարիտ ծառայութիւնը կը բնորոշուի անշահախնդիր անձնագոհութեամբ: Այդ պիտի ըլլայ սկզբունքը եկեղեցական կոչումին: Ան սակարկութիւն չի գիտեր: Յետոյ, եթէ շատ տրուած է մեզի աստուածային շնորհէն, պարզեւէն,- պարտաւոր ենք շատը տալ, առանց որ եւ է նկատումի կամ գրգիռի:

Պատուանշանները կամ շքանշանները դժբախտաբար, կ'եղծեն քրիստոնէական նկարագիրը հոգեւորական կոչումին: Պատուանշան տուաւ Քրիստոս իր աշակերտներուն, երբ անոնք՝ դառնալով իրենց առաքելութենէն՝ «խնդրութեամբ» կ'ըսէին իրեն. «Դեւերն ալ կը

հնագանդին մեզի քու անունովդ»: Անոր պատասխանն եղաւ. «Մի խնդաք անոր համար որ դեւերը կը հնագանդին ձեզի, այլ ուրախացէք որ ձեր անունները գրուած են երկինքին մէջ». Դուկ. Ժ, 17, 20: Շքանշանաւորներ եղան մեր Լուսաւորիչը, Ներսէս Մեծը, Սահակ Պարթեւ և Մեսրոպ վարդապետ՝ իրենց թարգմանիչ աշակերտներով, Նարեկացիներ և Շնորհալիներ: Մենք աւելի՛ արժանաւորներ ենք քան անոնք: Ինչո՞ւ կը պզտիկնանք՝ մեծցած ըլլալու ինքնախաբուրթեամբ: Դա՛ն կուտանք հին դարերուն, թէ դաս պարտինք առնել անոնցմէ: Թէ իսկ պարգեւատրուինք մարդոցմէ, ի՞նչ կ'աւելցնէ այդ մեր ունեցած կամ չունեցած արժանիքին վրայ, երբ մանաւանդ կը պակսի վկայութիւնը Աստուծոյ: Պարգուրթեան շուքը և համեստութեան շնորհը ինչո՞ւ չփայլին ու չծաղկին մեր կուրծքերուն վրայ և կենցաղին մէջ: Եւ ինչո՞ւ ասոնց հմայքին տակ չիմաստնանայ ու չզօրանայ հաւատքը՝ մեր խնամքին և հովուութեան յանձնուած քանաւոր հօտին:

Պարծա՞նք կը փնտռենք,- հետեւինք անոր՝ որ այդ պարծանքը ապահովեց Քրիստոսի Խաչով: Անով միայն նա արժանացաւ ըլլալու «ընտիր անօթ» իր պաշտած Փրկչին: Չունի՞նք այդ խաչը նաև մենք: Չառի՞նք զայն մեր վրայ՝ սկսած մեր կոչման օրէն: Անով չնետուեցա՞նք ասպարեզ: Եւ ի՞նչ նպատակ հետապնդելու համար: Փա՞ռք, պատի՛ւ, երկրպագութի՛ւն: Չէ՛ որ ասոնք յատուկ են Աստուծոյ: Սակայն, Աստուած անգամ չի պահանջեր ասոնք՝ զորս ունի արդէն իբրեւ Արարիչ:

Բոլոր արարածները իրենց գործերով է որ կը փառաւորեն, կը պատուեն զինքը և կ'երկրպագեն իրեն: Իսկ մենք եթէ չունինք հաւատքը սիրով զօրացած և գործքով պտղաբերուած, մեր պաշտումն ու պաշտամունքները ոչինչ կ'աւելցնեն Աստուծոյ փառքին վրայ: Մասնաւանդ որ կը վշտացնեն զինքը:

Չմոռնանք, որ մեր անփոխանակելի պատուանշանը «քաղցր լուծն ու փոքրոգի բեռն» է Քրիստոսի: Եթէ առեր ենք զանոնք մեր վրայ յօժարակամ և զուարթագին գիտակցութեամբ, եթէ զգացած ենք անոնց քաղցրութիւնն ու թեթեւութիւնը լծակովը մեր հաւատքին ու սիրոյն,- գտած ենք նաև խոստացուած «հանգիստը», հանգիստը խղճմտանքին, հանգիստը երանաւետ: «Բազում վարձքը երկինքի մէջ»:

Մետադեպ զարդը, արծաթ ըլլայ թէ ոսկի, պարզ ըլլայ թէ ադամանդակուտ, երկրորդ աստիճանի ըլլայ թէ առաջին, որ իբրեւ զարդ կը կախուի մեր կուրծքերուն վրայ, իբր թէ յայտնելու համար մեր կատարած փոքր ու մեծ գործերը, պարպուած իրենց ներքին արժէքէն, փառքէն աւելի՝ ամօթով պետք է ծածկէ մեր երեսը. զի «անպիտան ծառաներ» ենք ի վերջոյ: Ծառաներ Աստուծոյ և մարդոց: Արժանապատուութի՛ւն,- օհ, ի՞նչ կայ աւելի բարձր պաշտօն՝ քան այսպիսի ծառայութիւն: Ան ինքն իր մէջ ունի վարձատրութիւնը՝ զոր կ'ակնկալենք և կը գտնենք մեր անձին իսկ լոին վկայութեամբ: Դժգոհիլ, որ ուրիշներ չեն գիտեր գնահատել, ոչ միայն այսչափ՝ այլ նաեւ ապերախտ կոչել զանոնք,- կը

նշանակէ փոքրկանալ Աստուծոյ եւ մարդոց առջեւ: Վեհանձնութիւնը, որ ծաղիկն է համեստութեան, ինքնաքննութեամբ եւ ինքնաքննադատութեամբ՝ որոնք ստուգաչափն են իմաստութեան եւ ճշմարտութեան, գերծ կը պահէ զմեզ փառասիրական ձգտումներէ եւ կատարելապէս գիտակ՝ մեր ըրածին իսկական արժեքին: Հպարտութիւնը ու ամբարտաւանութիւնը չեն խափաներ մեր հոգին: Այսպէս սպառազինուած, միշտ կը ջանանք ընել աւելին՝ առանց աւելորդ ու անպէտքեռեր կրելու մեր վրայ: Առաքինութեանց զարդը, որքան շքեղ, պատուական և աստուածահաճոյ է այն: Չարդարուինք անոնցմով: Անոնք չեն գար դուրսէն, այլ կը բխին ներսէն: Աստուածապարգեւ են անոնք, չեն մարդապարգեւ:

«Բայց մարդկային է դուրսէն սպասել քաջալերանքի, գնահատութեան»: Գիտեմ թէ մարդկային է, աւելցնեմ՝ աշխարհային է: Եւ ճիշտ ասոր համար կը խորհիմ, թէ հոգեւորականը, որ չէ «յաշխարհէ աստի», այդ քաջալերանքն ու գնահատանքը պիտի փնտռէ և պիտի գտնէ նախ իր անձին մէջ, իր անձնական վկայութեանը մէջ, ամենատես Աստուծոյ օրհնութեանը մէջ: Գործէն թող գայ ներքողը, իր լոռութեանը մէջ պերճաբան և ճշմարտախօս: Ամենէն երջանկադիր զովեստն է այս՝ զոր մարդ կրնայ ունենալ Աստուծմէ: Չմոռնայ, ուրեմն, նշանաբանը. «Գործք քո զովեսցեն գրեզ»: Աստուծոյ ձայնը կայ անոր մէջ:

Արդ, չունենանք փորձութիւնը ըսելու. «Ես պատ-  
ուրւեցայ շքանշանով կամ նիւթական խաչով. ուստի  
աւելի եռանդով պիտի գործեմ եւ պիտի ծառայեմ»: Եթէ  
ծառայ ենք, պիտի ծառայենք: Եթէ չենք ուզեր աւելին  
ընել՝ ելլենք ծառայութենէ: Բայց գիտցած ըլլանք, որ  
գուցէ աւելի վատ ծառայութեան սը մէջ մտնենք,- պիտի  
ուզենք ծառայել փառքին համար՝ որ պիտի չգայ, կամ  
եթէ գայ՝ մեզ պիտի խաբէ, զի պիտի թողու զմեզ իսպառ  
երբ հրաժարինք աշխարհէ, ափ սը մոխիր յանձնելով  
երկրին: Պիտի ծառայենք պատիւին համար՝ որուն  
պիտի չհասնինք. զի ան ալ պիտի լքէ մեզ: Եթէ  
ծառայենք երկրպագութիւն ակնկալելով մեր անձին,-  
ան պիտի չտրուի մեզի: Պատրանքը, իր բոլոր ստուեր-  
ներովը պիտի պատանէ զմեզ շուտով մահուան ան-  
կողնին եւ գերեզմանին մէջ: Անկից անդին,- չենք  
գիտեր, թէ ի՞նչ պիտի տանինք մեր հետ իբր փաստ եւ  
վկայութիւն:

### **ՊԱՇՏ ԵՒ ԱՂՕԹՔ**

Նոր դատումներով չպիտի մօտենանք կրօնական  
բովանդակութեամբ այս երկու բառերուն: Աւետարա-  
նական ոգին պիտի ըլլայ մեզի թելադրող շարժառիթը:  
Վերագնահատութիւնը, զոր պիտի ընենք, նպատակ  
ունի երեւան բերել ա՛յս ոգին, իր տարազաւորումին մէջ  
դժբախտաբար անհարազատ գոյներով այլայլուած:



ՊԱՀՔ ԵՆ ԱՂՕԹՔ ունին ե՛լ ֆիզիկական գրգիռներ ե՛լ հոգեկան բերումներ: Անոնք յատուկ են ամեն կրօններու: Ունեցած են գոյութեան իրաւունք անցեալին մէջ եւ ունին ներկային մէջ: «*Անգիտութեան օրերուն*» մարդիկ յանձնառու են եղած կամաւոր զրկանքներու, ինքնաձաղկանքներու, ողորբելու համար իրենց ձեռակերտ կուռքերը, երկնային մարմինները հնայելու եւ բնութեան անբացատրելի եւ սպառնալից երեւոյթներուն դէմ պաշտպանուելու համար: Օգտակարն ու վնասակարը, բարին ու չարը հաւասարապէս արթնցուցած են իրենց մէջ հիացումի կամ երկիւղի կեցուածքը: Պաշտած են զանոնք ձեռամբարձ կամ ծնրադիր: Ի գուր շարժած են զանոնք զոհերով եւ երկրպագութեամբ, ծոմապահութեամբ եւ աղօթքով:

Նոյնն ըրած են եւ կ'ընեն նաեւ անոնք, որոնք նախազգացումով կամ փորձառութեամբ, գիտակցութեամբ եւ քննութեամբ գտած են ճշմարիտ Աստուածը եւ ներհայեցութեամբ տեսած անոր յայտնութիւնը: Յայտնութիւն մը՝ որ մարմնաւորուած է Քրիստոսի անձին մէջ, իբրեւ բնակարանը «*Աստուածային լրումին*» (Կող. Ա. 19, Բ. 9):

Ոմանք տեսած եւ շօշափած են Երկնային Չոհը եւ Աղօթաւորը, որ եկաւ յեղաշրջելու աստուածապաշտութեան եւ երկրպագութեան ըմբռնումը իր անձին օրինակովը: Քակելու թնճկոտ կծիկը նախապաշարումներու, որոնց մէջ պարաւանդուած հոգիները կը

տուայտեին, մարդկութեան բերելով Լոյսը ճշմարտութեան:

«ՀՈԳԻ Է ԱՍՏՈՒԱԾ», - այս կենդանի եւ յաւիտենական պատգամով էր որ կործանեցան բոլոր կուռքերը. քարէ կոփուած ըլլային անոնք թէ միսէ զանգուած, ոսկիի զանակներով ձուլուած թէ մարդկային բնագոյներով ու կիրքերով կաղապարուած:

Հոգի է Աստուած եւ այդ Հոգիով է լեցուած տիեզերքը եւ տարազաւորուած՝ գաղափարն արարչագործութեան: Իմաստութիւնն է զօրութիւնն արարչագործութեան եւ յոյսը՝ զայն կեանքի բերող ազդակը: Իմաստութեամբ եւ յոյսով օժտուած է նաեւ աստուածաստեղծ Մարդը, դառնալու համար իր կարգին եւ յարաբերականօրէն արարչագործ:

Արդ, իբր այս, խնայել հարկ է մարմինին՝ ինչ որ կը վնասէ անոր եւ անոր միջոցով *հոգիին*: *Նիւթն* է խնդրոյ առարկայ: Հրաժարիլ անկէ կամ զրկել ինքզինք: Ինչ է սակայն, *Նիւթը*:

*Նիւթը*, ըստ ինքեան պիղծ չէ: Բայց զայն գործածելու եղանակն է, որ կը դարձնէ զայն պիղծ: Կ'ապականէ մարմինը եւ կը քայքայէ զայն, երբ քանակով թէ որակով ան համապատասխան չ'ըլլար ֆիզիկական կազմուածքին եւ անոր իրական պահանջներուն: Ունինք, օրինակ, *ուտելու պէտք մը*: Կայ պարզ կշտանալ մը, կայ եւ կուշտուկուռ ուտել մը, վերջինը նոյն իսկ այն կերակուրներով՝ որոնք արգիլուած չեն ծոմապահութեան օրերուն: «Պահո՛ց ուտելիքներ» են, եկեղե-

ցական սահմանադրութեամբ: Կուշտուկուռ ուտելու իրաւունքէն զատ, չեն արգիլուած գործածելու ոգելից ամէն տեսակի ըմպելիքներ, որոնք, սակայն, կերակուրներէն աւելի վնասակար են եւ կ'առաջնորդեն մարդը բարոյական զեղծումներու եւ անկումներու: Կը խաթարեն հոգին ալ աւելի ազդուօրէն: Ասոնց չափաւոր գործածութիւնն իսկ զգուշանալի փորձութիւն մըն է, որ շուտով կը տանի չափազանցութեան: Կարելի չէ կամքին վրայ վստահիլ: Անոնք կարող են թուլացնել նաեւ կամքը եւ ենթարկել զայն անսանձ կիրքին: Բաժակը, որ կը հպի համտեսող շրթներուն, աստիճանաբար կը յորդի, դատարկացնելով հոգին՝ մարմինի լիացումով: Տկոեցնելով ստամոքսը, որ սպասարկուն է սրտին ու մտքին, - կը տկարանայ մարմինը եւ կը դառնայ անզօր՝ պահելու թարմութիւնը մտքին, արթնութիւնը հոգիին եւ ապահովելու կանոնաւորութիւնը սրտի կենսառիթ բարախումներուն: Միս ըլլայ թէ ձեթ, բոյս ըլլայ թէ կիթ, բնականոն չափովն եւ որակովն են օգտակար, եւ այդ չափին զանցումովն են վնասակար: Եւ ինչ որ օգտակար է՝ յանձնարարելի է եւ ոչ արգիլելի: Ինչ որ վնասակար է՝ ա՛յն է արգիլելի եւ ոչ յանձնարարելի: Իրական պահեցողութիւնը գործածելն է օգտակարը եւ հրաժարիլն է վնասակարէն: Այս կերպ կենցաղավարութեան մը մէջ, զրկանքի զգացումն իսկ արդարանալի չէ:

Պահքը կամ ծոմապահութիւնը զոհաբերում մը չէ՝ *զԱստուած հաճեցնելու*: Կայ, ստուգիւ. «*Տիրոջ համար*

*չուտեք»* մը, կամաւոր ինքնագրկանք մը, առանց մահացնող մահացուցումներու: Կայ եւ «*Տիրոջ համար ուտեք*» մը, առանց զեղիութեան եւ շուայտանքի: Մէկը թէ միւսը՝ *օրհնել մըն է զԱստուած, ըստ ուտողին կամ չուտողին հոգեկան տրամադրութեան: «Իւրաքանչիւր ոք զիւր միտս հաճեսցի»*. (Հռովմ. ԺԴ.): Ո՛չ մէկին եւ ո՛չ միւսին հանդէպ արհամարհանք կամ մեղադրանք, ա՛յս է առաքելական ողջմիտ հրահանգը:

Բայց կայ ուրիշ անհրաժեշտ Պահք մը: Ոչ կեղծաւորական Պահքը, որով դէմքերը կը թթուին եւ կը խոժոռին «*ի ցոյցս մարդկան»*: Պահքը՝ հոգիին վերաբերմամբ: Հաշուեյարդարի նստէ *հոգիիդ* հետ: Տե՛ս թէ որչափ անվճար պարտքեր ունիս ընկերային-բարոյական գետնի վրայ: Քննե՛ եւ տես թէ ի՛նչ է եղած քու կեցուածքդ ընկերոջդ հանդէպ, ծանօթ թէ անծանօթ: Կե՛ղծ թէ անկեղծ, արհամարհոտ ու անտարբե՛ր, թէ յարգալիր ու շահագրգռուող. կարեկի՛ց թէ անգութ: Կատարե՛ր ես պարտականութիւններդ քու անձիդ հանդէպ: Չանացե՛ր ես շինել քու մէջդ բարոյական բարձր անձնաւորութիւն մը, կիրարկելով քրիստոնէական փորձարկուած այն սկզբունքները՝ որոնք կեանքը կը լեցնեն ոգեկան անկորուստ արժէքներով:

*Պայքար մը* կայ մեր մէջ, մեր իսկ ձեռքով ստեղծուած: Բարիին եւ Չարին գօտեմարտութիւնն է այդ: Բարիին համար ճակատագրուած, պարտինք սպառագինուիլ այն բոլոր ոյժերով՝ որոնք տրուած են մեզի Գերագոյն ԲԱՐԻԷն: Նկատի առէք այն նպատակը՝ ո-

րուն կը ձգտին բնականօրէն տիեզերային բոլոր գործօնները եւ մարդկային բոլոր զգայարաններն ու գործարանները: Աչքը՝ տեսնելու, ականջը՝ լսելու եւ այլն: Այս ամենուն սարուածքին մէջ կայ իմաստութիւնը՝ որ կը կարգաւորէ ամէն բան ու կը ներդաշնակաւորէ: Բայց աչքի տեսողութիւնն ու ականջի լսողութիւնը կը կարօտին հրահանգութեան, մշակման եւ զարգացման, որպէս զի կարենան տեսնել ու լսել գեղեցկութիւնը, ստուգութիւնը եւ էութիւնը ամէն բանի մէջ: Որպէս զի Բարին գայ յոյսի՝ իր ամբողջ պայծառութեամբն ու գրաւչութեամբը եւ տայ իր ներշնչումները՝ ապրելու կեանքը համաձայն իր կոչումին, կամ այն շնորհքներուն՝ որոնցմով օժտուած է ի բնէ:

Չգո՛յշ, սակայն, չշփոթելու իրարու հետ *բնութիւնը մեզմէ դուրս* եւ *բնութիւնը մեզմէ ներս*: Անյեղի են առաջինին օրէնքները, յեղաշրջելի միայն Արարչին կամքով: Փոփոխական են վերջինի կանոնները: ՄԷԿ է բնութեան յօրինուածքը, տարբեր են մարդկային բնութեան խառնուածքները: Ուստի եւ կայ դաստիարակութիւնն ու կրթութիւնը երկրորդին: Կիրարկումը մեր հոգեկան եւ իմացական կարողութիւններուն, զորս կը մշակենք մեր ազատ դատողութեամբ եւ կամեցողութեամբ եւ մեր իսկ ընտրած կերպերովը: Մենք ենք տերը մեզի յանձնուած մեքենային: Մենք ենք պատասխանատու մեքենային գործունէութեան եղանակին եւ արդիւնքներուն: Մենք կը գործածենք զայն մեր սեփական կամքով եւ մեր ընտրած միջոցներով: Գերագոյն Չօրու-

թեան միջամտութիւնը տեղի կ'ունենայ այն գիտակցութեամբ՝ զոր մենք կը շինենք մեր մեջ իր դրած օրէնքներուն վերաբերմամբ: Այդ գիտակցութիւնը խղճմտանքն իսկ է, կրօնական-բարոյական յատկաբանութեամբ: Եւ խղճմտանքն ալ արթուն է, երբ ունի լոյսը գիտութեան եւ հաւատքին միանգամայն: Առանց ասոնց գոյութիւն չունի նոյն իսկ ճշմարիտ ըմբռնումը կեանքին: Առանց ասոնց կայ միայն անասնականութիւնը՝ իր չհակակշռուած բնագոյներու բռնութեան տակ: Առնենք *ուտելու ախորժակը*: Նպատակին գիտակցութեամբ չհակակշռուած ախորժակը կ'առաջնորդէ *շատակերութեան* իր բոլոր յայտնի թէ անյայտ հետեւանքներով: Ոչ միայն ֆիզիկական հիւանդութիւն եւ մահ. այլ նաեւ հոգեկան ախտաւորութիւն եւ բարոյական անկում ու կորուստ: Այսպէս են բոլոր հաճոյքներն ու վայելքները: Ասոնք, ըստ ինքեան, բարիքներ են, անհրաժեշտ՝ կեանքը քաղցրացնելու եւ արժէքաւորելու: Բայց կը դառնան չարիքներ, երբ դուրս կուգան իրենց բնականոն սահմաններէն: Կ'իյնան *յղիանքի* մեջ, մերթ յափրանքի զոջումով վերջաւորուած, բայց յաճախ շատ ուշ: Երբ արդէն քայքայումն է բոյն դրած: Չարը կատարած է իր մահառիթ դերը:

Արդեօք շեղեցա՞նք մեր նիւթէն: Ո՛ւր մնացին ծոմի եւ պահոց անդրադարձումները: Ի՞նչ է արժէքը պահքին: Ինչո՞ւ խտրութիւնը ուտելիքներու կամ հրաժարումը անոնցմէ՝ որոշ ժամանակներու եւ կրօնական

տօներու առիթով: Ունի՞ն անոնք այսօր ալ գոյութեան իրաւունք:

Ըսած ենք, առաքեալէն խրատուած, թէ *Աստուծոյ* Թագաւորութիւնը ո՛չ ուտելիք է, ո՛չ ըմպելի: Ան չէ հաստատուած այս կամ այն կերակուրին վրայ: Անոր հիմունքը կը կազմեն. նախ՝ ՀԱԻԱՏՔԸ Աստուծոյ գոյութեան՝ իբրեւ Արարիչի եւ Կարգաւորիչի, իբրեւ յալիտենական կեանքի աղբիւրի: Ապա՝ բարձր բարոյականի մը այն սկզբունքները՝ որոնք այդ կեանքը մեր մէջ կը դարձնեն հնարաւոր: Եւ այս սկզբունքները իր մէջ խտացնող ու կենդանի պահող ՍԷՐԸ: Ըմբռնել հարկ է խորութիւնն ու խորհրդաւորութիւնը «ԱՍՏՈՒՄԾ ՍԷՐ Է» աւետարանական առածին: Ներդաշնակութիւն, գեղեցկութիւն, ճշմարտութիւն, արդարութիւն, միութիւն՝ բազմազանութեան մէջ, եւ այլն,- այս բոլոր ոգեկան արժէքները կը բխին Սիրոյ վճիտ աւելունքէն: Ուր կը պակսի այս Սերը, կը տիրէ ապականութիւնը, բարոյական նեխութիւնն ու փտութիւնը եւ ճամբայ կը բացուի ընկերային բոլոր չարիքներուն: Եւ ասոնցմով կ'ստեղծուի *կեղծ* կամ *սուտ աշխարհ* մը: Ապրիլ այդ աշխարհին մէջ՝ խոզարածի մը թշուառութեամբ, մեծագոյնն է մեղքին: Հրաժարիլ այդ աշխարհէն՝ մեծագոյնն է առաքինութեան: Այս հրաժարումն է, զոր կարելի է նկատել ճշմարիտ ծոմապահութիւն: Տեւական, ամենօրեայ պահեցողութիւն: Այսպիսի ծոմապահութեան եւ պահեցողութեան վրայ է հաստատուած Աստուծոյ Թագաւորութիւնը երկրի վրայ: Աս-

տուժոյ թագաւորութիւնը «*ի ներքս ի ձեզ*»: Մեր ներքին աշխարհին, մեր իսկական անձնաւորութեան մէջ, ուր չի կայ խտիր ո՛չ հրեայի եւ ո՛չ հելլէնի, ո՛չ արուի եւ ո՛չ էգի, ո՛չ տերի եւ ո՛չ ծառայի, ըստ առաքելական անսուտ խօսքին: Ի Զրիստոս Յիսուս եւ յԱստուած ճշմարիտ կը միանան բոլորը՝ եղբայրական անքակտելի կապով: Բոլորը, որ այս կամ այն ճամբով, կը հետեւին Անոր ոգւոյն, բացարձակ եւ համամարդկային սերով արտայայտուած: Այն սերով, որ կը մօտենայ Երիքովի անծանօթ վիրաւորեալին՝ դարմանելու համար զայն: Որ չի խօսիր *ոմն քահանայի* կամ *դէւտացիի մը*, որ անկարեկիր կ'անցնի անոր մօտէն, երթալու տաճար եւ բազկատարած աղօթելու իր Եսիուէին, մեսիական մոայլ երազներով պաշարուած, ծոմապահութեամբ հպարտացած, կուրծքը ծեծող մաքսաւորին վրայ յոխորտ:

Ի՞նչ է, սակայն, մեր վերաբերումը պահեցողութեան հանդէպ.- *Չանցառութիւն թիւր ազատամտութեամբ*. առանց որ փոխանակած ըլլանք զայն բարոյական ծոմապահութեամբ՝ մեր բոլոր օրերուն մէջ: Մեր աչքին առջեւ է համապատկերը մարդկութեան վարած կեանքին, կրօնքի հաւատացողներուն թէ չհաւատացողներուն, Աստուծոյ թէ Մամոնայի ծառայողներուն եւ երկրպագողներուն:

ԱՂՕԹՔԸ: Ի՞նչպէս ըմբռնած ենք զայն: Մտե՛ք եկեղեցիներէն ներս, բայց մանաւանդ մտեք ձեր անձնա-



կան «տաճար»ներէն ներս: Դիտեցէք, Աւետարանի լոյսով, ինչ որ կ'անցնի ու կը դառնայ հոն: Ուշադրութեամբ անդրադարձէք թէ ի՞նչ կ'աղօթէք, ի՞նչպէս կ'աղօթէք եւ ի՞նչու կ'աղօթէք, ե՞րբ եւ ո՞րու համար կ'աղօթէք: Կը լսե՞՞ ձեզի Այն՝ որուն կ'աղօթէք: Չըլլա՛յ որ, երբ կ'աղօթէք եւ ձեր մօտը կը տեսնէք գլխիկոր «մաքսատր» մը, արհամարհոտ եւ բարձրայօն նայուածք մը նետէք անոր վրայ: Կամ չըլլա՛յ թէ ձեր աղօթքներուն խառնէք հաշիւներ՝ դուրսը կարգադրելիք: Չըլլա՛յ թէ դուք ալ սաղմոսողին փորձութիւնն ունենաք դիմելու Աստուծոյ ճշմարտութեան՝ սատակումը խնդրելու համար ձեր թշնամիներուն, կամ Քրիստոսի մօտ միջամտութեան՝ երկինքէն կրակ տեղացնելու համար ձեր հակառակորդներու գլխին: Միայն այն պարագային, երբ այդ թշնամին *անանձնական Չարութիւնն է*, թշնամի ամենուն՝ որոնք Բարիին զինակից,- աղօթեցէք այդ ճշմարտութեան համար, մանաւանդ թէ դուք ձեզէն պայքարեցէք անոր յաղթանակին համար: Եւ ձեր այդ պայքարը պիտի ըլլայ համագոր աղօթքի:

Առաքեալները օր մը դիմեցին Յիսուսի եւ ըսին. «Տէ՛ր. աղօթել տրվեցուր մեզի»: Եւ Նա տուաւ անոնց եւ մեզի չքնադագոյն աղօթքը,- «ՀԱՅՐ ՄԵՐ»ը: Ամփոփ վերլուծում մը այս աղօթքին, կը պարզէ մեր առջեւ իմաստն ու գեղեցկութիւնը անոր բովանդակութեան:

Տիեզերական է այն Չօրութիւնը՝ որուն հետ յարաբերուելու պահանջը կ'ունենանք հոգեպէս: Ստեղծիչ համագոյքին՝ ՀԱՅՐ է ամբողջ մարդկութեան: Իր ան-

նիւթական բարձրութիւնը կը չափուի մեր տեսողութեան տակ ինկող երեւելի, այլ անհասանելի այն գմբեթով՝ զոր կը կոչենք *երկինք*, կամ աւելի վերացնելով՝ «*երկինք երկնից*»: Ասով սակայն, չենք սահմանափակեր անոր *ամենուրեքութիւնը*:

«*Սուրբ*» է իր անունը եւ նուիրագործուած, սրտաշարժ շրթներով բոլոր ազգերուն՝ որոնք կը պաշտեն զայն իրենց զգացումներու ամենէն մաքուրներով: Սուրբ է, ըմբռնումովն Անոր էութեան ամենէն յատկանշական խորութեան եւ նկարագրին հարազատութեան:

Անոր տիրապետութիւնը տիեզերքին: Աստուածապետական է կառավարութիւնը իւրաստեղծ բնութեան սարուածքին: Անոր պարտի ձգտիլ մարդը՝ որ գործակիցն է զինք Ստեղծողին: «*Թագաւորութիւն*» մըն է այն, ոչ աշխարհի տարազաւորումով: Անսահման հոգեվիճակ մըն է այն, հաւատքով ըմբռնելի եւ բացատրելի: Հոգեվիճակ մը՝ որ երկինքով կը պատկերանայ եւ երկրի վրայ կ'իրականանայ: Կուգայ սրտագին ըդձանքով մը, որ ունի կշիռը գիտակցութեան եւ թելերը առողջ երեւակայութեան: Լիակատար Կեանք մըն է այն, ուր կը թագաւորեն Սէրն ու ներդաշնակութիւնը, ճշմարտութիւնն ու Խաղաղութիւնը, Արդարութիւնն ու հոգեկան զուարթ տրամադրութիւնը: Ունի, ոչ թէ անաբեկիչ շքեղանքը նիւթական թագի մը, այլ պսակումը լուսեղէն իրականութեանց: Եւ այս, հոգեկան անդորրութեան բարիքներով ճոխացած՝ ամենուն ժամանա-

կաւոր երջանկութեան եւ յաւիտենական երանութեան համար:

Կայ «*Կամքը*», որուն արդիւնքն է եւ որով կը կառավարուի այս թագաւորութիւնը իր բարձրութեամբ եւ խոնարհութեամբ, իր գաղափարականութեամբ եւ գործնականութեամբ: Երկինքով եւ երկիրով: Աստուածային ԿԱՄՔԸ, որ կը յայտնուի ՕՐԷՆՔՈՎ՝ նիւթական եւ հոգեկան աշխարհներուն մէջ: Ամէն բանի մէջ՝ որ գոյ է եւ գոյացութիւն: Որ հոգի է եւ մարմին: Ենթարկումը այս Օրէնքին, ոչ թէ կապտումը՝ այլ նուիրագործումն է ճշմարիտ ազատութեան: Ունակոյխումը այդ Օրէնքին, ոչ թէ տիրացումն է ազատութեան, այլ անձնատուրութիւնն է վատթար գերութեան: Չի ուր կը պակսի աստուածատուր հոգին, հոն կը տիրէ բռնութիւնը Չարութեան ոգիին: Եւ ուր կայ չարութիւն, հոն չի կայ ազատութիւն: Աստուածային կամքը ունի իր կնիքը իսկական ազատութեան: Եթէ գործակից ենք Աստուծոյ, ապա եւ կամակից պարտինք ըլլալ Աստուծոյ:

Այս երեք *մաղթողական* կամ *ըղձական* մասերն են Տէրունական Աղօթքին, որ իր թելադրական արժէքով կուտայ ուղղութիւն եւ բովանդակութիւն մեր կեանքին եւ գործունէութեան:

Ասոնց կը յաջորդեն *խնդրողական* մասերը:

Պէտք ունինք *հանապազորդեան հացին* ապահովելու համար մեր *տնտեսական* կեանքը: Բազմիմաստ է այս «ՀԱՅԸ»: Ան կ'ենթադրէ բոլոր պայմաններն ու միջոցները ապրուստի: Պահելու համար մեր ֆիզի-

կական գոյութիւնը: *Կը խնդրենք* զայն Աստուծմէ, բայց ոչ կրաւորական կեցուածքով: Կ'ուզենք, որ տրուի այն մեզի, փոխարէն այն գործակցութեան՝ որ կ'երաշխաւորէ անոր ստացումը: Առանց այս գործակցութեան չի գար այն: Առանց այս գործակցութեան՝ հացը կը դառնայ պատճառ բաժանումի, արդարութեան չափանիշը կորսնցուցած: Կ'ստեղծէ դասակարգային տարբերութիւնները, անհաւասարակշռութիւնները, պայքարները եւ ընկերային բազմապիսի չարիքները: Հանապազորդեան հացը հասարակաց համար է. չափովը աստուածային արդարութեան կշիռին: Այդ կշիռը *հայրական սէրն* է, տարածուած ամենուն վրայ: Վաստակիլ հարկ է այդ հացը «ճակտի քրտինքով»: Վաստակիլ իր բաժինը, թոյլ տալով եւ ի հարկին օգնելով, որ ամէն ոք իրեն նմաններէն՝ տիրանայ իր բաժինին: Քանակն այն հացին, որ մենաշնորհեալներու բաժինը կ'աւելցնէ զըրկուածներու սահմանելի բաժիններով, - *գողօն* մըն է, որ չի կրնար տալ հաճոյքը սեփականութեան: Կայ ոստիկանը արդարութեան, - *Խղճնտանքը*, որուն տուն կուտան սիրտն ու միտքը եւ որ ուշ կամ կանուխ կը պատժէ գողը, զեղծանողը:

Կայ, սակայն, ուրիշ «հաց» մըն ալ: Այն, որու մասին քիչ գաղափար ունինք: Կամ կը թողունք, որ կրօնական մտածումի մը առարկան միայն եղած ըլլայ այն: Այս հացը կը կոչուի, ճշմարիտ է, աւետարանական բացատրութեամբ «բան», խօսք, որ ունեցած է նաեւ իր մարմնացումը յանձին Քրիստոսի: Այն խօսքը՝ որ Աստուծոյն

Է: «Ոչ հացիւ միայն կեցցէ մարդ», ըսաւ Նա՝ որ այս աղօթքը սորվեցուց մեզի. «այլ ամենայն բանիւ Աստուծոյ»: Աստուծոյ խօսքը իր դրած Օրէնքն է, որմէ կը բխին կանոնները կեանքին: Ե՛լ ֆիզիկական, ե՛լ հոգեկան-բարոյական կեանքին: Հանապազորդեան է նաեւ այս հացը՝ որով յագենալ կը կարօտի հոգին:

Յագեցումովն այս հացին, մենք կը դառնանք գիտակից մեր ընկերային պարտականութեանց: Կը զգանք թէ պարտատէր ենք Աստուծոյ եւ մեր ընկերին: Ունինք մեղանշումներ ե՛լ Մէկին ե՛լ միւսին դէմ: Անիրաւած ենք ե՛լ մեր անձին ե՛լ մեր ընկերոջ,- կենդանի Աստուծոյ տաճարներ՝ երկուքն ալ: Մեղանշեր ենք, անձնատուր ըլլալով մեր կիրքերուն որոնք կ'ապականեն մեր հոգին: Խղճտանքի զարթումով կը գիտակցինք մեր հոգեկան այս վիճակին եւ կ'ապալինինք Աստուծոյ. հաստատ առաջադրութեամբ՝ մաքրել մեր ներքին աշխարհը Աստուծոյ «բան»ով եւ ապրիլ օրինական եւ բնականոն կեանքը, համաձայնեցնելով մեր կամքը Աստուծոյ կամքին: Ընկերային կեանքին մէջ, այսպէս, պարտապան ըլլալով իրարու՝ պարտական ենք ներել իրարու: Ընկերային այսպիսի փոխարարութեամբ կը վերանայ թշնամութիւնը ընկերմարդոց միջեւ:

Կայ *փորձութիւնը* մեր կենցաղական ամեն մէկ վիճակին մէջ: Փորձութիւններ՝ խանգարելու ներդաշնակութիւնը մեր արտաքին եւ ներքին աշխարհներուն մէջ: Խախտելու հիմը խաղաղական եւ շինարար գոր-

ծունեութեան եւ կեանքին: Սխալ ըմբռնում մը կայ փորձութեան մասին: «Մէկը որ փորձութեան մէջ է. թող չըսէ թէ Աստուծմէ կը փորձուիմ, Նա որ եւ է մէկը չի փորձեր: Ամէն մարդ կը փորձուի իր ցանկութիւններէն հրապուրուած ու խաբուած: Ապա ցանկութիւնը կը յղանայ եւ մեղքը կը ծնի եւ մեղքն ալ հասուննալով՝ մահը կը ծնի»: (Յկբ. Ա. 13-15): Դուրս գալու կամ գերծ մնալու համար որ եւ է՝ փորձութիւնէ՝ պարտինք զգալ Աստուծոյ ներկայութիւնը մեր մէջ եւ գիտակցօրէն կատարել Անոր կամքը՝ որ *փրկութիւն* կ'երաշխաւորէ: Աստուծոյ կամքը բարին է: Մեր սիրտը, միտքը, հոգին, իրենց բոլոր բերումներուն եւ գործերուն մէջ, բարին պարտին ունենալ աղբիւր ներշնչման: Այս է միջօցն ու պայմանը հեռու մնալու եւ ազատելու Չարին բռնութենէն: Դիմելով Աստուծոյ եւ առաջադրելով նուիրուիլ Բարիին, մօտեցած կ'ըլլանք Փրկութեան: Բոլոր մահացու ցանկութիւնները կը չքանան, երբ բարութեան կենսատու լոյսը կ'ողողէ մեր ամբողջ էութիւնը:

Ահա ամբողջ բացատրութիւնը Տերունական Աղօթքին բովանդակութեան: Այս աղօթքին ոգիէն ներշնչուած միւս աղօթքներն են որ կ'առնեն իմաստ եւ կը դառնան պտղաբեր: «*Շատախօսութիւնը*». աղօթքին մէջ, «*հեթանոսութիւն*» նկատուած է Յիսուսի կողմէ: Քրիստոնէական աղօթքը իր հոգեւոր բովանդակութեամբն է յանձնարարելի եւ կիրարկելի: Բանաձեւուած այդ ոգին կը մեռնի եւ աղօթողը կը մնայ անպատասխանի. երբ անձնական շահադիտութիւնը տեղ կը գտնէ

աղօթքին մէջ: Անձին ինքնագիտակցութիւնը, իր խղճմտանքին արթնութիւնը, իր ինքնադատութեան ողջմտութիւնը, իր հոգեբուժական ներքին զօրութիւնը. Աստուծոյ հետ յարաբերուելու կարողութիւնը, համեստութեան իմաստութիւնը. սիրոյ անսահմանութիւնը մեզի կ'առաջնորդեն աղօթքի մը՝ որ կարող է սրբացնել մեր կեանքը եւ արժեքաւորել զայն:

Զգուշանալ հարկ է փարիսեցիական եւ հեթանոսական *շատիսուիկ* աղօթքներէ եւ հետեւիլ մաքսաւորին սակաւախօսութեան՝ կոծուած սրտէն պոռթկացած եւ ինքն ի վրայ անդրադարձած, կարենալ *արդարացած իջնելու համար մեր տունները*:

Զենք ուզեր անդրադառնալ մեր աղօթքի կերպի մասին՝ եկեղեցիներէն ներս եւ եկեղեցականներու բերնով: Բարձրաձայն արտասանուած աղօթքներու մասին է մեր խօսքը: Ծեքծեքուն շեշտերով եւ եղանակաւորումներով անհոգի աղօթքներ, որոնք հոգին ձանձրոյթի ցանցին մէջ կը խեղդեն ու կ'սպաննեն, թեթեւ հպանցումներով եւ քանի մը վայրկեանի համար կարգ մը ականջներ միայն կը փայփայեն:

Արուեստն իսկ, որ Աստուծոյ ձայնը, իր գերազանց ներդաշնակութեամբը, «անմռունչ հեծութիւններ»ու պիտի վերածէ նախ աղօթողին եւ ապա աղօթքը լսողին հոգւոյն խորհրդաւոր լուծութեան մէջ,- կը գոռեկանայ եւ իր վայրկեանական բոցերուն տակ կը մոխրանայ:

Մեծ Պահոց մեր այս խորհրդածութիւնները, տարակոյս չի կայ, թէ կրօնի շունչով են գրի առնուած: Բայց

այն Կրօնին, որ յորդառատ ու վճիտ աղբիւրն ունի յալիտենապէս ապրող ու ապրեցնող խօսքերու:

Դատարկ սիրտեր, թէ իսկ լեցուն միտքով, պէտք ունին մօտենալու այս Աղբիւրին:

## ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ

Ո՛վ պիտի տար մեզ տիեզերական ներդաշնակութիւնը՝ որ միայն կրնայ ապահովել համամարդկային անխառն երջանկութիւնը: Մութին մէջ խարխափ, ստուերին հետամուտ, «հովերն արածող»՝ մեր խօլ ու հեւ ի հեւ վազզին մէջ դժուար կը գտնենք այն «անձուկ դուռը» եւ «նեղ ճանապարհը»՝ որոնք խորհուրդներով քօղարկուած այս կեանքի կարճ ասպարեզին մէջ կ'առաջնորդեն դէպ ի այդ ներդաշնակութիւնն ու երջանկութիւնը: Եւ ինչո՞ւ այսպէս:

Բիրտ իրականութիւն մը կայ, աւելի ճիշտ՝ իրականութեան պատիր տեսլերեւոյթ մը, որ տուն կուտայ ընկերային բոլոր իրաւակարգերուն՝ հին խրամատներ գոցելով եւ նորեր բանալով: Նիւթի եւ ֆիզիքական ոյժի իմաստասիրութիւնը կը շահապետե ամէն ժամանակի մէջ եւ ամէն տեղ: Մարդկութիւնը աւելի կամ պակաս չափով կը կրէ տնտեսական բռնատիրութեան մը դառն հետեւանքները: Հոգին իր բոլոր գեղեցիկ երագներով, իր բոլոր խորհրդապաշտիկ իղձերով, իր բոլոր ներքին



ապրումներով եւ իր բոլոր աստուածային ներշնչումներով կը դառնայ նշաւակ փիլիսոփայիկ հեգնանքի մը, սովետական ծաղրանքի մը եւ շնական երգիծանքի մը՝ որոնք կեանքի ծաղիկը կը խամրեցնեն եւ սրտի մարգարիտը կ'ածխացնեն: Ե՞րբ պիտի գտնէ վերջ նիւթի եւ հոգու այս տխուր ու դժբախտ հակամարտութիւնը.- ո՛չ որ կրնայ նախատեսել: Տրուած ըլլալով, սակայն, կեանքի ներկայ խիստ վրդովեցուցիչ պայմանները, ցաւալի է զգալ թէ շատ մօտ չէ հաշտութեան ցանկալի օրը. Չէ՛ որ որչափ գազանը կ'ընդելանայ անասունին մէջ եւ գայլը կը վարժի ճարակիլ գառին հետ, ա՛յնչափ ալ մարդը կը վայրենանայ բանականին մէջ եւ գառը կը զինուի գայլին ժանիքով:

Թէ մարդը, իբրեւ ընկերային անհատ, անկատար է,- ո՛չ մէկ կ'ասկած: Միայն թէ ան օժտուած է կատարելութեան կարելիութեամբ- ընկերհաշտիկ խմորով մը. հետեւաբար կրնայ եւ պարտի ըլլալ կատարեալ: Ա՛յս է իր կոչումը: Մինչեւ կատարելութեան ժամանումը, սակայն, ան պիտի անցնի բազմազան փորձութիւններէ: Պիտի գայթի ու պիտի կանգնի անընդհատ: Այս անկումներն ու բարձրացումները ոչինչով պիտի դառնացնեն կեանքը, եթէ ընթացքն ուղղուած ըլլայ դէպ ի ճշմարիտ նպատակակէտը, դէպ ի խաղաղութեան եւ երանութեան հանգրուանը:

Ձեռք մը կայ՝ որ դէպի գահավեժներն ու անդունդները կ'երկարի եւ հոն սահող ու գլորող թշվառները կը քաշէ դուրս: Եղբօր մը ձեռքն է այն: Եղբօր մը՝ որ

չճանչնար արիւնի, լեզուի, դաւանանքի, դիրքի ու աստիճանի մանկունի խտիրները:

Եղբայր մը.- եւ ո՛րքան քիչ բան գիտենք անոր բարձր իմաստի եւ խորին խորհուրդի մասին: Որ ծիրանագգեստ «մեծատուն» պիտի ուզէր համբուրել զայն իր սեղանէն թափած փշրանքը հաւաքող վիրալից «աղբատ»ին մէջ: Ո՛ր փափկասուն «բամբիշ» պիտի հանդուրժէր ողջագուրել զայն՝ իր ցնցոտիներուն տակ դողդղացող մուրացիկ «մօր» մը մէջ: Ո՛ր օգոստափառ «ազատ» պիտի իջնէր իր գահէն փարելու համար անոր՝ բախտագուրկ «ծառայի» մը մէջ: Ո՛ր բարձրայօժ «փարեսեցի» պիտի զիջանէր ողջունել զայն՝ խոնարհամիտ «մաքսաւորին» մէջ: Ո՛ր մաքրակրօն «օրինական» պիտի համարձակէր վերականգնել զայն՝ իր զղջումի արցունքներով լուացուող «պոռնիկ» կնոջ մէջ: Ո՛ր սնապարծ «իմաստուն» պիտի չարհամարիէր զայն՝ բարձրագոյն գաղափարականի մը հոգեշնորհ ներշնչումներովն երջանիկ «յիմարին» մէջ: Եւ վերջապէս ո՛ր «անզգամ» աշակերտ պիտի չմատնէր զայն՝ խաչին խորհուրդը սրբագործող մեծ «վարդապետ»ին մէջ:

Եւ ո՛չ ոք կրցեր է դեռ կարդալ, աւա՛ղ, ինչ որ այդ վարդապետը - «Մարդու Որդի եւ աստուածային եղբայր մը ի՛նքն ալ (Մատթ. ԻԸ. 10) – քսան դարեր առաջ գրեր է գետնին վրայ, երբ օրէնքի վարդապետներ ու քահանայապետներ փորձեր են ինկած կին մը քարկոծել: Միայն գիտենք թէ ճահճացած խիղճերը յուզող ու փոթորկող իմաստ մ՛ունէին այս խորհրդաւոր խազ-

խզումները: Ո՞ր «անմեղը» պիտի յանդգներ, արդարեւ, «առաջին քարը» նետել եղբոր մը վրայ,- վասնզի քոյր մ'ալ եղբայր մ'է,- որուն մէջ գուցէ ինք՝ քարածիգն է արթնցուցեր մեղապարտ «շունը»:- Եւ ո՛չ է՛ս կը դատապարտեմ զքեզ. գնա՛ եւ ասկից վերջ ալ մի՛ մեղանչեր»: Աւելի մեծ պարտութիւն մը դժար թէ կրէր գայթակղութիւններով լի «այս աշխարհը»:

Մարդկութիւնը չլսե՛ց այս աստուածային Եղբոր ձայնը նա՛եւ իր գերագոյն ճգնաժամին մէջ եւ ամենէն հանդիսաւոր մէկ վայրկեանին, երբ ապիրատ ձեռքեր՝ ոճրագործներո՛ւ կ'ընէին գայն խաչակից.- «Հա՛յր, ներէ՛ ստոնց, վասն զի չեն գիտեր թէ ի՛նչ կ'ընեն»:

Ներողամտութեան դա՛սը.- ահա՛ Խաչին խորհուրդը: Բայց «ա՛յս աշխարհը», ա՛յս դարը պիտի սերտէին ու պիտի սորվէին այդ գերազանց դասը՝ որով միայն կարելի պիտի ըլլար իրագործել ու տարրացնել համեղբայրութեան գաղափարը մարդոց մէջ:

«Ներե՛լ իրարու»: Չէ՛ որ մարդը սխալական է եւ իր խորհուրդները չարութեան են հակամետ: Ո՞վ կրնայ յաւակնիլ եւ ստել թէ ինք անմեղ է: Միտքը ընկերային աններդաշնակութիւն մ'է, որուն պատասխանատու են բոլոր անհատները հաւաքաբար: Մեղքի հասարակորդութեան այս ուղիղ ըմբռնումն է որ անհատները կ'առաջնորդէ ողջամիտ ինքնաճանաչութեան: Այս ինքնաճանաչութեամբ մարդ կարող կ'ըլլայ ո՛չ միայն տեսնելու իր սխալները եւ զանոնք սրբագրելու, այլ նաեւ կարեկցօրէն դիտելու ուրիշի եղբոր մը թերութիւնները

Եւ ներողամտօրէն զանոնք մատնանշելու: «Կը ներեմ քեզի. զնա՛. բայց անգամ մ'ալ մի՛ մեղանչեր»: Արդարեւ, ո՛ր մաքուր խիղճ խաղաղօրէն պիտի զբօսնուր եղբօր մը տղմաթաթաւ անկումը տեսնելով, կամ սրտմտիր՝ երբ ցեխի ցայտք մ'ալ զինք արատաւորեր: «Ութի՛ ելիր».- այս չէ՛ անհրաժեշտ կոչը բոլոր անոնց՝ որոնք այս կամ այն կերպ իյնալու դժբախտութիւնն են ունեցեր: Բայց չափացանց նիւթապաշտիկ այս դարը, որ կարծես ո՛րքան կը մօտի լոյսին՝ այնքան կը կորսնցնէ իր յստակատեսութիւնը, որ՛քան կը ձգտի ազատութեան՝ այնքան կ'ըստրկանայ, ընդունա՛կ է իր տնտեսական անթռիչ փիլիսոփայութիւնը հիմնել ընկերային բարոյականի այս բարձր սկզբունքին վրայ:

Օ՛, մարդկութիւնը ականատես է միշտ կոյրերու այն ստուար բանակին՝ որ իր Խաչին տակէն կ'անցնի հայհոյալից ու նախատալից գլուխ ու գրիչ շարժելով: Եւ ո՛րքան քիչ է թիւն անոնց՝ որոնք հոգու արիութիւնն ու բարձրութիւնը կ'ունենան իրենց արինոտ խաչին վրայէն կրկնելու ներողամտութեան աննման դասը. «Հայր, ներէ՛ ատոնց...»:

Ներողամտութեան դա՛սը,- որ եօթն անգամ եօթնի անվերջ բազմապատկութեամբ պիտի չափեր հոգուն մեծութիւնը: Իսկ մենք միակ եօթնով իսկ անկարող ենք սահմանափակելու մեր հոգուն փոքրութիւնը: Չէ՛ որ բացարձակ աններողութիւն մը, յանուն այս կամ այն սրբութեան կամ կարծեցեալ սրբութեան, կ'եղջերանայ՝ անգիտակցօրէն ինկող կամ մեղանչող մեր մէկ եղբօր

ղեմ: Շնորհիւ այդ «չար ոգի»ին, որ անթափանց խաւարի մը մէջ կը մոլորեցնէ մեր հոգիները, մենք կ'անճրկինք «շահիլ» մեր այդ եղբայրը: Եւ շահի այս կորուստը-կորուստներուն մեծագոյնը ընկերային բարոյականի մարդին մէջ – որ կ'ուրախացնէ մեր յիմարացած սրտերը, անխուսափելիօրէն կորսնցնել կուտայ մեզ թանկագին բան մը նա՛եւ համամարդկային եղբայրութենէն.- Ներդաշնակութիւնը եւ անկէ կախում ունեցող Երջանկութիւնը:

Ո՛վ պիտի ուզեր անմտութիւնն ունենալ կտրել նետելու իր մատներուն տակ թրթռացող քնարի լար մը, երբ ան, մատի սխալ հպումի մը հետեւանքով, տար մեզի սխալ խազի մը ձայնը: Մարդկային մեծ քնարի լարե՛րն ալ են արժանի աւելի իմաստուն վերաբերումի մը, երբ անոնք ընդհանուր ներդաշնակութեան մէջ, անճարակ մատնախաղացքով մը, կը հնչեն խժալուր աղաւաղումներով:

«Այլ եւս պիտի չանիծեմ երկիրը մարդոց գործերուն համար, վասնզի մարդկային միտքը մանկութենէն սկսած տրամադիր է չար խորհուրդներու»:- Ողջմտութեան այս որոշումը, բխած ճշմարտութեան խորաթափանց իրատեսութենէն, կուգայ մեզի Հին Ուխտի «վրէժ-խնդիր» Եհովայէն՝ որ փորձեր էր չարը խափանել չարով: Ինչ որ չկրցաւ ընել համայնաջինջ «ջրհեղեղը» եւ չի կրնար ընել որ եւ է հեղեղ – արիւնի եւ ստորին կիրքերու հեղեղնե՛րը մանաւանդ,- ըրաւ եւ

պիտի կրնայ ընել միշտ ամենապիրկագործ Խաչը, խորհրդանշանը աստուածային ներողամտութեան:

Մենք վերել շեշտեցինք անգիտակցութիւնը, վասնզի ներողամտութիւնը կը դառնայ անզօր հոն՝ ուր բարութիւնն ու ճշմարտութիւնը կը հայիոյուին ու կը նախատուին գիտակցօրէն:

### ՀՈԳԻ ԵՒ ՄԻՏՔ

Ասիկա պատկերն է, աւելի կամ պակաս նմանութեամբ, ամէն ժամանակի երիտասարդութեան հոգեբանութեան. կամ այն մարդոց՝ որոնք կեանքը կ'առնեն մակերեւութային դատողութիւններով: Ուր չի ներգործեր կրօնի շունչը՝ հոն դժուար թէ կեանքը յայտնուի իր բոլոր տեսանելի եւ անտեսանելի գեղեցկութիւններով: Վասնզի պէտք չէ մոռնալ եւ հարկ է շեշտել թէ ճշմարիտ կրօնը կեանքի *լման* հասկացողութիւնն է, եւ ո՛չ թէ անոր *կրճատումը*: Վայելել «ներկայ», այսինքն՝ աշխարհի *քարիքները*՝ ո՛չ հրաժարելի է եւ ո՛չ ալ մեղադրելի: Բայց երբ այդ վայելքին հետ զուգորդուած չէ աւելի բարձր *խտեալներու* հետապնդումը, աւելի մնայուն վայելքի մը ըմբռնումը, ազնուագոյն տեսիլի մը ներշնչումը, այն ատեն ան կը դառնայ իսկապէս աննպատակ ու վնասակար մսխում մը ֆիզիկական ու հոգեկան ոյժերու: Ամէն վայելք պէտք է ունենայ իր որոշ

բեւեռակէտը՝ ուր կեանքը գտնէ իր իմաստն ու ամբողջացումը: Արարչագործութեան բարձրագոյն նպատակը կեանքն էր եւ է: Ոչինչ կայ պիղծ՝ երբ ան կը պահպանէ, կը զարգացնէ եւ կատարելութեան կ'առաջնորդէ այդ կեանքը: Կեանքը ճանչնալը սակայն արուեստ մըն է նրբին ու դժուարին: Եւ կեանքը ճանչնալ անհրաժեշտութիւն մըն է, կարենալ ապրելու համար զայն *ըստ արժանւոյն*: Այս ծանօթութենէն կախում ունի մեր յաջողութիւնը՝ ընտրելու լաւագոյն ճանապարհը: Իսկ անշեղ քալելու համար այդ ճամբէն՝ մեր պատրաստութիւնները, մեր հոգեւոր սպառազինումները պէտք է ըլլան լուրջ, հիմնաւոր, անթերի՝ որքան հնար է:

Կեանքը ճանչնալու Էական պայմաններէն մէկն է զգուշանալ *արհամարհանք*: Արհամարհանքը կը մոլորեցնէ մեր դատողութիւնը եւ կը կուրացնէ մեր հոգիի տեսութիւնը: Անընդունակ կ'ընէ ան զմեզ կռահելու եւ գնահատելու թաքուն արժէքները, հոգեկան արժէքները, ըսել կ'ուզենք, որոնք կը կազմեն կեանքի հիմունքը: Մեքենան թանկագին գործիք մըն է, ելեկտրական ոյժը գերգնահատելի բնական կատարելիութիւն մըն է: Ատնք կ'ապահովեն մարդուն համար աւելի դիւրին եւ աւելի հանգիստ կենցաղ մը՝ աւելի առատ վայելքներով: Բայց այս բոլորէն վեր կայ այլ խորհուրդ մը: Մարդկային ՄԻՏՔՆ է այդ՝ որ այդ ամենուն կ'ըլլայ *մայր*. կը ծնի զանոնք: Կը ծնի զանոնք՝ շնորհիւ իր գիտարար *երեւակայութեան*: Արդարեւ Միտքն է, այդ աստուածային *Ոյժը*, Աստուծոյ այդ հա-

րազատ պատկերը, որ կ'ունենայ *խուզարկու թարթափումներ, կ'երեւակայէ*, ու ԿԸ ԳՏՆԷ: Միտքը աչքն է հոգիին: Այդ աչքը *յստակատես* է, երբ *խիղճն* կ'առնէ իր լոյսը, այսինքն՝ կ'ըօծւեն: *Խղճմտանքը*, արդարեւ, այն լուսադրիւրն է՝ ուսկից կեանքը կ'ունենայ իր ամենէն քաղցր ծորումները: Ո՛չ աստուածուրացութիւնը, ո՛չ ալ անմահութեան ժխտումը չեն գար խամրեցնել ի բնէ աստուածութեան արեգդիմող եւ անմահութեան ճըգտող ծաղիկը մարդկային հոգւոյն: Արդարի մը կեանքը անկի՛ց կ'առնէ իր փթթումը: Այս կեանքը մեղադրանք չունի, ինչպէս կ'ենթադրուի թիրիմացութեամբ, այն վայելքներուն համար՝ որոնք մարմինի կազդոյրը կ'երաշխաւորեն, զայն առողջ ու կենսունակ կը պահեն, անոր բնականոն աճումին կը նպաստեն. եւ այս բոլորը իրենց կարգին կը ծառայեն ազնուացելու եւ բարձրացնելու հոգին: Եւ երբ անգամ մը ազնուանայ հոգին ու բարձրանայ՝ այլ եւս չի մոլորիր լոկ նիւթապաշտիկ հակումներու մէջ, եւ կը գտնէ ակը աւելի իրական ու տեւական հաճոյքներու: Երիտասարդին մէջ ֆիզիկական խայտանքին հետ կայ նաեւ հոգեկան յոյզքը: Բնութիւնը, որ կը խօսի իր մէջ, - աստուածային ձայնը՝ ըսել կ'ուզենք, - աղբիւրն է թէ՛ այդ խայտանքին, թէ՛ այդ յոյզքին: Մէկը չի ժխտեր միւսը. ընդհակառակը՝ երկրորդը կ'ազնուացնէ առաջինը, եւ այս՝ կը գնահատէ երկրորդը:

Կեանքին նպատակը մահը չի կրնար ըլլալ: Շիտակ չէ բաղդատել զայն *անցնող ստուերի* մը հետ: Ստուերը



առարկայ մը չէ, այլ առարկայի մը ձգած մթութիւնը լոյսին մէջ: Իսկ կեանքը *հրողութիւն* մըն է, որուն նպատակը *իր իսկ* մէջ է: Կեանքին նպատակը *կեանքն* է: Իրաւունք ունի իմաստունը երբ կ'ըսէ.- «Աստուած ստեղծեց մարդը անմահութեան համար»: Եւ անմահութիւն կը նշանակէ ԿԵԱՆՔԸ ԿԵԱՆՔԻՆ ՀԱՄԱՐ:

Կեանքը իր բոլոր իրական բարիքներով, իր արդար հաճոյքներով, իր ֆիզիկական եւ հոգեկան վայելքներով, իր երազներով ու տեսիլներով, իր բոլոր յայտնութիւններով, խորհուրդներով ու առեղծուածներով, իր ամբողջական արժէքներով: Անմահութեան գաղափարը, լծորդուած Աստուծոյ գաղափարին հետ, ո՛չ թէ կը թմրեցնէ հոգին՝ անտեսելու ու նուազեցնելու երկրաւոր կեանքի արժէքը, այլ ա՛լ աւելի կը բարձրացնէ այդ արժէքը: Մասը նուազ արժէքաւոր չէ քան ամբողջը. եւ երկրաւոր կեանքը մասն է միայն յաւիտենութեան: Դարձեալ՝ ամբողջը անհասկանալի է առանց իր մասերուն: Յաւիտենութիւնը կրնայ բացատրել անցաւոր համարուած այս կեանքը, եւ փոխադարձաբար:

Այնքան անհեթեթ է ուրանալ Աստուծոյ գոյութիւնն ու հոգւոյ անմահութիւնը՝ որքան քանաւոր ու բնական է հաւատալ ե՛ւ մէկին, ե՛ւ միւսին: Ուրացումը կը տկարացնէ ու կը գռեհկացնէ հոգին. հաւատքը զայն կը զօրացնէ ու կ'ազնուացնէ: Ուրացումը մահն է, հաւատքը՝ կեանք: Ճշմարիտ կրօնը այս հաւատքին վրայ հիմնուած կեանքն է:

## ՍԷՐԸ ԵՒ ԻՐ ԽԱՉԸ

Չիկայ բան մը անելի հզօր, անելի աստուածային՝ քան սերը:

Չիկայ բան մը անելի տկար, անելի մարդկային՝ քան դարձեալ սերը:

Բայց չիկայ նաեւ բան մը անելի խորհրդաւոր, անելի գէշ ըմբռնուած եւ անելի նահատակուած՝ քան նոյն այդ սերը:

«Աստուած սեր է», - լուսագրիչ անետարանչին սրտի յայտնութիւնն ու արտայայտութիւնն է: Տիեզերքն ամբողջ, իր հրաշալի ներդաշնակութեանը մէջ, - բաց ի «աշխարհ»էն՝ գոր մարդ-դէն է ձեւակերպեր - շողակաթումն է այդ Սիրոյն: Ան, այդ Աստվածը, չունի ահարկու սաստն ու շանթը «վրէժխնդիր» ու «սատակիչ» Եհովային: Ընդհակառակը ան տածող ու գուրգուրացող «Ոգին» է՝ որ կը լեցնէ ու կը շարժէ ամէն ինչ, դաշտի ծաղիկները՝ իրենց փարելի սրսիփներուն մէջ եւ երկնքի թռչունները՝ իրենց սրտալի մեղեդիներուն մէջ, ծովեզրի աւազները՝ իրենց պեծուփ աւաչներուն մէջ եւ անհունի աստղերը իրենց լուսաթրթիռ արշաւներուն մէջ, երկրի անասունները՝ իրենց քնագոսկան բերումներուն մէջ եւ աշխարհի ասունները՝ իրենց խանդակաթ ներշնչումներուն մէջ: Անանուն «շունչ» մ'է ան՝ որուն «մեղմ ձայնը» կը հծծէ ամէն կողմ անդադար, որ մերթ «անմոռնչ հեծութիւններով» աղօթող սրտերուն մէջ «բարի խօսքը» կ'ըլլայ եւ մերթ «սաստիկ հող-

մի նման երկնային հնչիւն»-ով մը «աւետեաց» սպասող հոգիներուն մէջ բազմաբարբառ «հրեղէն լեզուներ» կը դառնայ: Ան գիտէ մինչեւ անգամ Փըրկիչ Օծեալի մը մէջ «իր անձն ունայնացնել..., ըլլալ մարդոց նման..., ինքզինք խոնարհեցնել՝ հնազանդելով մահուան եւ նոյն իսկ խաչի մահուան»: Աստուած մարդոց մէջ եւ մարդոց «պատկերակից», որպէսզի մարդն ալ ըլլայ Աստծու մէջ եւ Աստծու «կերպարանակից»: Ո՛չ աստուածաբանական վերանցականութիւն մ'է այս, ո՛չ ալ խորհրդապաշտիկ երազատեսութիւն մը: Սէրը, իրական ու ճշմարիտ, դժուար թէ աւելի լաւ կարելի ըլլար բացատրել:

Աստուծմէ դէպ ի մարդ վայրէջք մը եւ մարդէն դէպ ի Աստուած վերելք մը,- ահա՛ հրաշալի դերը հրեշտակաւնման Սիրոյ: «Երկրի վրայ հաստատուած եւ գլուխը մինչ երկինք հասած սանդուխ» մ'է այն տեսլային, ուսկից կը կատարուին անընդհատ այդ վայրէջքն ու վերելք: Եւ ո՛րչափ պետք ունին անոր մանաւանդ այն մարդիկ՝ որոնք թշուառութեան տուայտանքներով պարտասած եւ մայրամուտէն բռնուած, հազիւ «քար» մը կը գտնեն այս աշխարհի մէջ իբրեւ հանգիստի բարձ իրենց խոնջած գլխուն: Բայց այդ «քարը», այն ատեն, կը դառնայ Սիրոյ օծութեամբ սրբազնացած «Տունն Աստծու» եւ «երկնքի դուռ» մը կը բացուի հոն իրենց առջեւ: Աստուած եւ մարդ այս սանդուխի աստիճաններուն վրայ կը հանդիպին իրարու, կը գիրկընդխառնուին իրարու: Եւ այս միութեան մէջ մարդը կը

գտնէ իր կատարելութիւնը: Հո՛ն է որ Աստուած «Մարդու Որդի» եւ մարդը «Աստծու որդի» կ'ըլլայ: Ո՛ր հրաշալի փոխակերպութիւն, զոր տակաւին ի վիճակի չենք, աւա՛ղ, արժանաւորապէս գնահատելու:

Եւ ի՞նչպէս կ'ըլլայ այս փոխակերպութիւնը:

Անհրաժեշտ է կատարել այդ սանդուխի ամբողջ վերելքը՝ հասկնալու համար թէ ի՛նչպէս:

Սէր մը կայ՝ որ թէւ սրտէն կը բխի, բայց հոն կ'ամփոփուի անհոյզ ու անյոյզ, անթափ ու անթոխչ: Անձին սերն է այն, որ՝ բնագդական իմաստութեամբ մը կը ձգտի պահպանել անհատին ֆիզիքական գոյութիւնը: Այդ բնագդը երբեմն ա՛յնքան կը զօրարայ ինք իր մէջ՝ որ կը դառնայ պաշտամունքը այլամերժ եւ նոյնիսկ այլատեսաց «անձ»ին կամ «ես»ին: Եսասէրը իր *ճղճիմ* ետը – վասնզի հոն տիեզերական ոգի՛ն չիկայ – կը նկատէ առանցքը հսկայ տիեզերքին: Սանդուխին առաջին աստիճանն է այս, ուսկից աւելի վեր բարձրանալ անկարող է ան: Անձին մէջ սահմանափակած, կեդրոնաձիգ այս սէրը տկար է եւ զուտ մարդկային, բայց նաեւ հակամարդկային: Վասնզի հոն չթափանցեր երբեք Աստուած, գաղափարական մեծ Սիրոյ ճառագայթը:

Կայ ուրիշ սէր մը՝ որ կը ծնի գոյգ սրտերու համակրութենէն եւ ամուսնական լծակցութիւնները կը հնարաւորէ: Հոս ալ բնագդը, եթէ կ'ուզէք՝ աստուածային ձայնը, իր դերն ունի, պահպանելու եւ տեսականացնելու համար տեսակը: Այս սիրոյ մէջ անձը դուրս կու-

զայ արդեն իր նեղ շրջանակեն: *Եւր* կը բազմապատկուի: Սիրտը կ'սկսի իր կանոնաւոր վերելքը սանդուխի աստիճաններէն: Իւրաքանչիւր քայլափոխի ան կ'ունենայ շփում աստուածային Եութեան հետ՝ որ իր վայրէջքը կ'ունենայ նոյն սանդուխէն: «Տունն» Է կը հիմնուի, «ընտանիքն» Է կը կազմակերպուի, «դրախտն» Է կը տընկուի: Եսին պաշտամունքը բոլորովին մոռցուած չէ, սակայն, հոն: Երջանկութեան բաժակ մը կայ՝ որուն ո՛չ մէկ «օտար» շրթունք կրնայ մօտենալ: Ընտանիքի անդամները միայն պիտի քամեն զայն լիաբերան: Ի՛նչ փոյթ եթէ կան ուրիշներ՝ որոնց բաժակը դատարկ Է կամ դառնութեամբ լի:

Այն սերը, սակայն, ինչ որ ալ ըլլայ, աւելի խոր չափով իր մէջ կը ծածկէ ընկերային խմորը եւ կրնայ իր յորդումն ու ծաւալումն ունենալ ընտանիքի անձուկ շրջապատէն դուրս: Սիրտը իր աւելի բարձր վերելքը կ'ունենայ: Իր աստուածային Եութիւնը աւելի կը շեշտուի: Ալ ֆիզիքական կամ նիւթական պետքը չէ լոկ որ կը մղէ անհատը համայնաճալու, այլ անկից բարձր հոգեկան եւ բարոյական պահանջ մը, որ դրական ըլլալով մէկտեղ վսեմին կը մօտենայ: Եղբայրական սերը, ազգակցական կապէն վեր, կ'ըլլայ ընկերական սերը: Խորհրդրդաւոր *հացակցութիւն* մը կը բոլորէ մարդիկ հասարակաց միակ սեղանի մը շուրջ: Այս հասարակորդութեան մէջ հետզհետէ տեղի կուտան արեւակցական բոլոր նախապաշարումները – աղբիւր ցեղային անմի՛տ հակամարտութիւններու – եւ երեւան կուգայ

մարդկութեան ուղղափառ գաղափարը: Մարդը սանդուխի գլուխն է արդէն, երբ Աստուած իջեր է անոր ստորոտը: Աստուած մարդացած է և մարդն աստուածացած: Այս սերը, այսպէս, կը դառնայ «զօղ կատարելութեան»: Դարձեալ այս սերն է որ կրնայ խոնարհեցնել զԱստուած մահուան կամ բարձրացնել զԱյն Խաչի մահուան: Սիրոյ Խաչը...

Եւ ո՞րքան գէշ ըմբռնած է զայն- այդ խաչը. Մարդկութիւնը իր բոլոր հատուածներով, ջերմեռանդ «խաչապաշտ»ներ եղած ըլլան անոնք թէ մոլեռանդ խաչամարտներ: Կարելի է և ներելի՞ է սիրոյ ծայրագոյն զոհաբերութեան մեծ գաղափարը շփոթել զայն խորհրդանշող անունին եւ նիւթին հետ կամ հայհոյել անոնց դէմ: Ո՛վ կրնայ ճշմարտապէս սիրել, առանց սիրոյ խաչը կրելու, ուրանալով ի հարկին իր անձն ու ունեցածը:

Լսեր է այս գրիչը այժմ մահացած շրթունքէ մը. «Մայրական սեր կը հասկնամ, բայց եղբայրական սեր չեմ հասկնար»: Սո՛ւտ է, ուրեմն, որ «քարեղէն սիրտ»եր դարերէ ի վեր կը ճմլուին սիրովն Անոր՝ որ իր աննման խաչն ունեցաւ բովանդակ մարդկութեան համար, մեջն ըլլալով նաեւ ու մանաւանդ «մեղաւորներն» ու «թըշնամիներ»ը: Ի՞նչ կ'արժէ Աւետարանը առանց այդ սիրոյն: Առասպել՞ մ'է «բարի Սամարացին»: Սիրոյ կատարելութիւնը չե՞նք տեսներ «անձանօթ» վիրաւորը դարմանող անոր մատներուն մեջ աւելի քան դարձի եկած «անառակ որդին» գրկող հօր գթոտ բազուկ-

ներուն կամ «հերձումի» դատապարտուած զաւկին դիմաց դատաստանի կշիռին արդարութեան թաթը փրկող հարազատ մօր սրտակեղեք հրաժարումին մէջ: Եթէ եղբայրսիրութիւնը կամ, ինչ որ նոյն է, ընկերսիրութիւնը բանդագուշանք մ'է, ուրեմն ինչո՞ւ դատապարտել «կիսամահ» վիրաւորը «զանց» ընող «քահանան» ու «Ղեւտացին»: Եթէ անիմաստ է այդ սերը, ալ ինչո՞ւ մեղադրել մէկը՝ որ անոր, այդ սիրոյ խաչը կը նկատէ «յիմարութիւն», եւ ուրիշ մը՝ որ նոյն խաչին մէջ կը տեսնէ «զայթակղութիւն»: Իրա՞ւ, ուրեմն, այդ խաչը, ուր «լոյսի որդիները» կը ճանչնան Սիրոյ աստուածային պատարագի ամենէն նուիրական սեղանը, չէ «Աստծու զօրութիւնն ու Աստծու իմաստութիւնը»:

Ափսո՛ս բոլոր անոնց՝ որոնք անկարող են ըմբռնել ճշմարիտ Սէրը, այն Սէրը՝ որ իր «խաչուած Քրիստոսն» է ունեցեր, առաջնորդելու համար բազմաբղէտ մարդկութիւնը դէպ ի բացարձակ համեղբայրութիւն:



## ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ

### ՀԱՄԱՌՈՑ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Գարեգին Եպս. Խաչատուրեանը, աւագանի անունով՝ Խաչիկ, ծնունել է 1880-ի նոյեմբերի 6-ին Տրապիզոնում:

Սովորել է Կ. Պոլսի Ազգային, այնուհետև՝ Մխիթարեան, 1896-ին՝ Վենետիկի Մուրատ-Ռափայելեան վարժարաններում:

Աւարտել է Արմաշի դպրեվանքը 1901-ին, ուր տեսուչն էր Եղիշէ Արք. Դուրեանը: Ուսուցչական պաշտօն է վարել Արմաշի դպրեվանքում:

1899 թ. սարկաւազ է ձեռնադրուել ձեռամբ Եղիշէ Եպս. Դուրեանի:

Կուսակրօն քահանայ է ձեռնադրուել 1901 թ. Մայիսի 20-ին, կրկին ձեռամբ Եղիշէ Եպս. Դուրեանի:

1903 թ. վերադարձել է Կ. Պոլիս, քարոզչի պաշտօններ վարել Խասգիւղի, Պէշկիթաշի, Կետիկփաշայի եկեղեցիներում:

Տարբեր տարիներին հոգևոր պաշտօններ է ստանձնել Միսում (1906 թ.), Մարաշում (1907), Գոնիայում (1914):

1909 թ. Կ. Պոլսում խմբագրել է «Տաճար» կրօնաթերթը:

1912 թ. նշանակուել է առաջնորդ Արաբկիրի թեմի:

1916-17 թթ. դասաւանդել է Հալէպի և Երուսաղէմի վարժարաններում:

Երուսաղէմում կաթողիկոս-պարտրիարքի կանոնադրութեան հրապարակումից յետոյ Սահակ Կաթողիկոս-պարտրիարքի կողմից հրաւիրուել է անդամակցելու Սինդոնի: Յետոյ մեկնել է Դամասկոս, հրադարարից յետոյ այցելել է Երուսաղէմ, ապա Կ. Պոլիս:

1921-ին ընտրուել է Տրապիզոնի հայոց հոգևոր Առաջնորդ:



1922 թ. յուլիսի 1-ին Ամենայն Հայոց Գեորգ Ե. Կաթողիկոսի կողմից օծուել է եպիսկոպոս Տրապիզոնի թեմում:

Ցետազայ տարիներին վարել է Բաղդադի, Մարսելի առաջնորդութիւնները:

1927 թ. նշանակուել է Կալիֆոռնիոյ (յետագայի ԱՄՆ Արեւմտեան թեմ) նորահաստատ թեմի առաջնորդ:

1928–35-ին Կալիֆոռնիայում առաջնորդութեան տարիներին ծաւալել է կազմակերպչական, գրական-քարոզչական լայն աշխատանք:

1935–38-ին հոգեւոր ծառայութեան է կոչուել Հարաւային Ֆրանսիա:

1937 թ. Խորեն կաթողիկոսի կոնդակով ստացել է արքութեան պատիւ:

1938–50-ին առաջնորդ Հարաւային Ամերիկայի:

1950 թ. դեկտեմբերի 2-ին ընտրուել է Պատրիարք Կ. Պոլսի, պաշտօնապէս գահակալել 1951 թ. մարտի 16-ից մինչեւ իր վախճանը՝ 1961 թ. յունիսի 22-ը:

1952 թ. Պոլսում հիմնել է «Շողակաթ» կրօնաբարոյական, պատմաբանասիրական, հայագիտական հանդէսը:

1953 թ. Պոլսում բացել է Սուրբ Խաչ դպրեվանքը: Վերանորոգել ու ընդարձակել է Ֆերիքոյի վարժարանն ու Սուրբ Վարդանանց եկեղեցին:

1961 թուականին լայնօրէն նշուել է իր քահանայական ձեռնադրութեան վաթսունամեայ եւ ծննդեան ութսունամեայ տարեդարձները:

Գարեգին Եպս. Խաչատուրեանը վախճանուել է 1961 թ. յունիսի 22-ին. ողջ կեանքը հայ եկեղեցուն ու դպրութեանը նուիրաբերած Գարեգին Եպս.-ը յանկարծամահ է եղել եկեղեցու մէջ առաւօտեան ժամերգութեան սկզբին, Սրբոցն Սահակայ եւ Մեսրոպայ Թարգմանչաց տօնի Պատարագի մատուցումից առաջ: Մարմինը ամփոփուած է Շիշլիի ազգային գերեզմանատանը:

## ՑԱՆԿ

### ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆԻ ԵՐԿԵՐԻ

**Ազատորդի, ստրկորդի, հայորդի, Տրամախօսութիւն, Հոգե-  
բանական պատկեր մը հայ ժողովրդի իրական կեանքէն, Կ.  
Պոլիս, 1910:**

**Կրօնաբարոյական եւ ընկերային շողակաթումներ, Կ. Պոլիս,  
1925:**

**Նարեկ, Ողբերգութիւն Ս. Գրիգոր Նարեկացի, Աշխարհաբ.  
վերածեց՝ Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոն, Կ. Պոլիս,  
1926:**

**Վերածնունդ եւ վերանորոգութիւն, Ա. տ., 1927:**

**Տեղեկագիր կամ հրապարակային համարատուութիւն առաջ-  
նորդական քառամեայ պաշտօնավարութեան [Ծրագիր  
նոր շրջանի եւ հովուական քանի մը խօսքեր], Լոս Անջելոս,  
1932:**

**Աշխարհի լոյսն ի Հայս կամ Աւետարանի լոյսը Հայաստան-  
եայց եկեղեցւոյ պրիսմակէն [Կիրակնօրեայ դասեր կամ  
ընթերցումներ], Փարիզ, 1936:**

**Հրաժեշտի խօսքեր, Մարսէլ, 1937:**

**Արեւագալ, Մարսէլ, 1937:**

**Մայր լուսոյ, Պատրաստեց՝ Գարեգին Եպիսկ. Տրապիզոնի  
հաշատուրեան, Մարսէլ, 1937:**

**Հովուական թողթ առ պրագիլահայս, Սան Փաւլօ, 1938:**

**Պարզ առածներ ու խոկումներ, Սան Փաւլօ, 1940:**

**Հայաստանեայց եկեղեցի** [Հաւաքեց եւ համադրեց Յովհ. Ծովհեան], Առաջաբան՝ Գարեգին Արքեպիսկոպոս, Նիւ Եորք, 1942:

**Հայ գիրերու գիւտը**, Ս. Սահակ, Ս. Մեսրոպ եւ Վոսմշապուհ Թագաւոր, Պուէնոս Այրէս, 1942:

**Աստուածաշունչ**, Նոր Կտակարան Քրիստոս Յիսուսի [Պատկերազարդ], Աշխարհաբարի վերածեց՝ Գարեգին եպս. Տրապիզոնի, Պուէնոս Այրէս, 1943:

**Առաջնորդարանի նուագահանդէս**, Գ. տարի [Առաջաբան՝ Գարեգին Արքեպիսկոպոս], Նիւ Եորք, 1943:

**Տարօնաշունչ**, Պուէնոս Այրէս, 1945:

**Ջեկոյց Մայր-Աթոռի եւ Մայր-Հայրենիքի մասին** ի Ս. էջմիածին գումարուած ազգային-եկեղեցական ժողովին առիթով: Տրուած Հարաւ. Ամերիկահայոց Կաթ. պատուիրակ եւ պատգամաւոր՝ Տ. Գարեգին Արքեպիսկոպոսի կողմէ, Պուէնոս Այրէս, 1946:

**Նարեկ**, Մատեան ողբերգութեան, Գրաբ. բնագր. հանդիպ. աշխարհաբ. վերածեց՝ Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, Պուէնոս Այրէս, 1948:

**Նոր տարիի եւ Ս. ծնունդի պատգամը**, Իսթանպուլ, 1957:

**Աստուածաշունչ**: Նոր Կտակարան Քրիստոս Յիսուսի [Պատկերազարդ], Աշխարհաբարի վերածեց՝ Գարեգին եպս. Տրապիզոն, Պէյրութ-Լիբանան, 1979:

**Նրջանկայիշատակ Տ. Գարեգին Արք. Խաչատուրեան**. Նարեկաշունչ Պատրիարք Հայոց Թուրքիոյ եւ հիմնադիր Սուրբ Խաչ Դպրեվանքի [Վախճանման քսանհինգամեակին առթիւ], Իսթանպուլ, 1986:

**Աշխարհի լոյսն ի Հայս** կամ Աւետարանի լոյսը Հայաստանեայց եկեղեցիոյ պրիսմակէն [Կիրակնօրեայ դասեր կամ ընթերցումներ], Վերահրատարակութիւն, Անթիլիաս, 1988:

**Հայ գիրը կամ ոսկի դաշտը** [Թատերգութիւն, Առաջաբան՝ Վ. Սերովբեան], Ստանպուլ, 2013:

**Մատեան ողբերգութեան**, Գ. Նարեկացի, Աշխարհաբարի վերածեց՝ Գարեգին Եպիսկոպոս Տրապիզոնի, Երևան, 2014:

**Սրբուհի Սանդուխտ կոյսին թռչնիկները** [Նախաբանի հեղինակ և խմբագիր՝ Վաղարշակ Սրկ. Սերովբեան], Ստանպուլ, 2015:

**Քնար արեւագալի** [Բանաստեղծութիւններ, Առաջաբանի հեղինակ և խմբագիր՝ Վ. Սրկ. Սերովբեան], Ստանպուլ, 2015:

**Կեանքիս յուշեր** [Բնագիրը հրատարակութեան պատրաստեց, առաջաբանը և ծանօթագրութիւնները գրեց՝ Ե. Տէր-Խաչատուրեան], Երևան, 2017:

### **Երկեր Գարեգին Եպս. Խաչատուրեանի մասին**

**Յ. Ճ. Սիրունի**, Գարեգին Պատրիարք Խաչատուրեան [Մենագրութիւն], Ստանպուլ, 2003:

**Յովնան Արք. Տէրտէրեան**, Աբանչելի հոգեւորականը՝ Գարեգին Տրապիզոնցի, Լոս Անճելոս, 2020:

## **ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Գարեգին Եպս. Խաչատուրեանի երկերի սոյն ժողովածուի նիւթերը քաղուած են հեղինակի զանազան տպագրութիւններէրից:

**Մեծ Պահք** - «Շողակաթ», 1957, ապրիլ-մայիս, էջ 99-119:

**Առաջնորդական Խօսքեր** - Տեղեկագիր կամ հրապարակային համարատուութիւն առաջնորդական քառամեայ պաշտօնավարութեան, Լոս Անջելոս, 1932:

**Հայ կինը եւ մայրը** - «Շողակաթ», 1953, օգոստոս, էջ 205-210:

**Քահանայութեան կարգը** - «Շողակաթ», 1958, փետրուար, էջ 43-46:

**Եկեղեցական պատուանշանները եւ անոնց արժէքը** - «Շողակաթ» ամսաթերթ 1958, Յունիս-Յուլիս, էջ 216-217:

**Պահք եւ աղօթք** - «Շողակաթ», 1955, մարտ, էջ 65-70:


**Ներողամտութեան դասը** - Կրօնաբարոյական շողարձակումներ, Կ. Պոլիս, 1925:

**Հոգի եւ միտք** - Աշխարհի լոյսն ի Հայս, Փարիզ, 1936, էջ 22-24:


**Սէրը եւ խաչը** - Կրօնաբարոյական շողարձակումներ, Կ. Պոլիս, 1925:

## **«Ոսկեղենիկ» մատենաշարով տպագրուած գրքեր**


**1. Յովհան Ոսկեբերան,  
Ապաշխարութեան պտուղներ  
(Քարոզներ և ճառեր),  
2019**




**2. Յակոբ Նալեան,  
Առաքինի կեանքի ուղին  
(Հոգեւոր գրոյցներ),  
2020**



**3. Յովնան Արք.  
Տէրտէրեան, Պատգամներ  
(Ասոյթներ և Թևաւոր  
խօսքեր),  
2020**



**4. Կարապետ Արք.  
Պալատեցի,  
Տարեկան Քարոզգիրք  
(Հնտրանի),  
2021**



ԱՄՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ  
«ՈՍԿԵՂԵՆԻԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐ – Ե

ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ  
ՀՈՎԻԻԻ ԽՕՍՔԵՐ



BISH. GAREGIN KHACHATURIAN  
PASTOR'S WORDS

Dedicated to the 95th Anniversary of the  
Founding of the Western Diocese.  
Los Angeles 2021

---

Ժողովածուն նուիրուած է Արեւմտեան թեմի հիմնադրման 95-ամեակին:

Կազմող՝ Նորայր Պօղոսեան:

Շնորհակալութիւն ենք յայտնում Արժ. Տ. Գրիգոր ԱԼ Քինյ. Տամատեանին՝ որոշ նիւթեր տրամադրելու համար, Տիար Գեւորգ Յակոբեանին՝ կազմի նկարը տրամադրելու համար, Հռիփսիմէ Կոստանեանին՝ հատորի պատրաստութեանը աջակցելու համար:

Լոս Անջելոս – 2021